ամբարշտութիւնս մեղաց իմոց:

✠ Ճանդիսատ: ✠

Վասն այսորիկ՝ յաղօթս կաց
ցեն առ քեզ ամ սբք. 'ի ժամ
ընդունելի:

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց
բազմաց. որք առ նոսա ինչ ոչ
մերձեսցին:

Դու ես ապաւէն իմ, 'ի նեղու
թենէ յայսմանէ. որ շուրջ ե
ղեն զինև:

Ցնծութիւն իմ. փրկեա զիս յայն
ցանէ՝ որք պաշարեցին զիս:

✠ Ճանդիսատ: ✠

Իմաստուն արարից զքեզ՝ և խե
լամուտ 'ի ճանապարհ, յոր և

գնասցես. և հաստատեսցե՛ց ՚ի վե՟ր
քո զաչս իմ:
Մ՛ի լինիք որպէս զձի և զջորիս
զի ո՛չ գոյ ՚ի նոսա իմաստութիւն.
՚ի սա՛նձս. և ՚ի դա՛նդանաւանդս
ճմլեսցես զկզակս նոցա. որք առ
քեզ լինին ո՛չ մերձեսցեն:
Բազում տանջա՛նք են մեղաւո
րաց. բայց ոյք յուսան ՚ի տ՟ր, ողոր
մութի՟ն տ՟ն շո՛ւրջ եղիցի զնոքօք:
Ուրա՛խ եղերուք և ցնծացէ՛ք
արդարք. ՚ի տ՟ր՛ պարծեցարուք
ամենեքեան՝ որք ուղի՛ղ էք
սրտիւք:

Տունք. ժ՟դ:

Գ. ուբաղայս. Խբ: Տունէ:



Որդւոքն երգեն տասան աղեան և ցնծալով

Սաղմոս դաւթի ։

Ցնծացէք արդարք ՚ի տր՛. ուղղոց վայելէ օրհնութիւն, խոստովան եղերուք տն օրհնութբ. և տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա։ Օրհնեցէք զտր յօրհնութիւն նոր՝ զի բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Ուղիղ են պատգամք տն՝ և ամ գործք նորա հաւատարիմք են. և սիրէ զողորմութիւն և զիրաւ ունս տր։

Ողորմութբ տն լի եղև երկիր՝ և բանիւ տն երկինք հաստատե

ցան. և հոգւով բերանոյ նորա,
ամ զօրութիւնք նոցա։
Ժողովեաց որպ 'ի տիկս զջուրս
ծովու. եդին 'ի խորս զգանձ իւր
Երկիցէ 'ի տէնէ ամ երկիր. և 'ի
նմանէ դողասցին ամ բնակիչք
աշխարհի։
զե Սա ասաց և եղեն. հրամայեաց
և հաստատեցան։
Տէր ցրուէ զխորհուրդս հեթա
նոսաց. անարգէ տր զխորհուրդս
ժողովրդոց. և արհամարհէ տր
զխորհուրդս իշխանաց։
Խորհուրդ տն յաւիտեան մնայ՝
և խորհուրդ սրտի նորա, ազգէ
մինչև յազգ։
Երանի ազգի՝ որոյ տր ած օգնա
կանէ նմա. ժողովուրդ, զոր

ընտրեաց 'ի ժառանգութի̃ իւր:
Յերկնից նայեցաւ տր̃՝ յա̃մ որդիս
մարդկան: 'ի պատրաստ բնակու
թենէ իւրմէ, հայեցաւ յա̃մ
բնակիչս աշխարհի:
Որ ստեղծ առանձին զսիրտս նց̃.
'ի մի́տ առնուլ՝ զա̃մ գո́րծս նոցա
Ո՛չ թէ 'ի բազում զօրս իւր ապ
րեսցի թագաւոր, և ո՛չ հսկայ,
'ի բազում զօրութեան իւրում:
Սո́ւտ է ձին՝ 'ի փրկութ̃ե իւրում.
և 'ի բազում զօրութ̃ե իւրում,
ո՛չ ապրեցուցանէ զհեծեալն:
Ահա̃ աչք տն̃ 'ի վերայ երկիւղածաց
իւրոց. և որք յուսան յողորմու
թիւն նորա:
Փրկել 'ի մահուանէ զանձինս
նոցա. և կերակրել զնոսա. 'ի սովու

Անձինք մեր համբերեսցեն տն՟·
զի օգնական և պաշտպան մեր է ։
Ի նմա ուրախ եղիցին սիրտք մեր
և յանուն սբ՟ նորա յուսասցուք ։
Եղիցի ողորմութիւն քո տր՟ ՚ի
վերա մեր · որպէս յուսացաք
՚ի քեզ ։

## Տունք · ժԹ ։



Ի տր̃ պարծի դաւիթ. եւ հեզքն
ուրախանան ։

Սաղմոս դաւթի. Ի ժամանակի զի այլադունեաց զերեսս իւր առաջի Աքուսայ. և այպն արձակեաց զնա և գնաց։

ԼԳ Օրհնեցից զտէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ։

Ի տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք և ուրախ եղիցին։

Մեծ արարէք զտէր ինեւ. և բարձր արասցուք զանուն նորա ՚ի միասին։

Խնդրեցի ՚ի տեառնէ և լուաւ ինձ. և յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ տէր և առէք զլոյս. և երեսք ձեր մի ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ տէր.

 և տէր

Եւ Տէր լուաւ նմա. և յամենայն նեղու-
թենէ նորա փրկեաց զնա։
Բանակք հրեշտակաց Տեառն, շուրջ
են զերկիւղածովք իւրովք և
պահեն զնոսա։
Ճաշակեցէք և տեսէք զի քաղ-
ցր է Տէր. երանեալ է այր՝ որ յուսայ
՚ի նա։
Երկերուք ՚ի Տեառնէ ամենայն սուրբք նորա
զի ոչ ինչ պակասութիւն է եր-
կիւղածաց նորա։
Մեծամեծք աղքատացան և
քաղցեան. բայց որք խնդրեն
զՏէր ՝ մի պակասեսցի ՚ի նոցանէ
ամենայն բարութիւն։
Եկայք որդեակք իմ՝ և լուա-
րուք ինձ. և ես զերկիւղ Տեառն ու-
սուցից ձեզ։

Ո՛վ մարդ՝ որ կամիս զկեանս. և սիրես զաւուրս քո տեսանել՝ի բարութեան:

Լուեցո՛ զլեզու քո՝ի չարութենէ. և շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն:

Խոտորեա՛ց ՚ի չարէ՝ և արա՛ զբարի. խնդրեա՛ խաղաղութի՛ և երթ զհե՛տ նորա:

Աչք տն ՚ի վերայ արդարոց. և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա:

Երեսք տն ՚ի վերայ չարագործաց. սատակել յերկրէ զյիշատակս նոցա:

Կարդացին արդարքն առ տր. և տր լուաւ նոցա. և յամ նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Մերձ է տր՟ առ այնոսիկ որք մաշեալք են սրտիւք . եւ զխոնարհս հոգւով կեցուցանէ :

Բազում նեղութիւնքեն արդարոց . յամ՟է փրկէ զնոսա տր՟ . եւ պահէ զամ՟ ոսկերս նոցա եւ մի՛ ՚ի նոցանէ մի՛ փշրեսցի :

Մահ մեղաւորի չար է . բայց որ ատեայց զարդարն, զղջասցի :

Փրկէ տր՟ զանձինս ծառայից իւրոց . մի՛ զղջասցին ամենեքեան որք յուսացեալք են ՚ի նա : դաւ

Տունք . իա՟ :

Կուբղայս . ե : Տունէ :



Հրեշտակն Տ.ն հալածէ զթշնամին
դաւթի։ 158

Ի կատարած. սաղմոս դաւթի։ ԼԴ

Դատեա՛ տր՜ զայնո
սիկ որք դատե՛ն զիս.
մարտի՛ր ընդ այնոսիկ,
որք մարտնչի՛ն ընդ իս։

Ա՛ռ զզէն եւ զասպարս քո, եւ արի
յօգնե՛լ ինձ. հան զսու՛ր քո ընդ
դէմ հալածչա՛ց իմոց. արգե՛լ զն̃ս
եւ ասա՛ դու ցանձն իմ, թէ փրկու
թիւն քո ե՛ս եմ։

Ամաչեսցե՛ն եւ յամօ՛թ լիցի՛ն՝ որք
խնդրե՛ն զա՛նձն իմ. դարձցի՛ն
յետս եւ ամաչեսցե՛ն՝ որք խոր
հէին ինձ զչար։

Եղիցի՛ն նոքա ո̃պ փոշի՛ առաջի
հողմոյ. եւ հրեշտա՛կ տ̃ն նեղեսցէ

Եղիցին ճանապարհք նոցա 'ի
խաւար և 'ի գայթագղութիւն.
և հրեշտակ տն հալածեսցէ զնս:
Զի նանիր թաքուցին ինձ զորո
գայթ յապականութեան իւրեանց
և 'ի նանիր նախատեցին զանձն իմ:
Հասցէ 'ի վերայ նոցա որոգայթ,
զոր ո՛չ գիտասցեն. և որս զոր թաքու
ցին, առցէ զնոսա. և յորո
գայթ 'ի նոյն անկցին:
Այլ անձն իմ ցնծասցի 'ի տր.
ուրախ եղիցի 'ի փրկութեան նորա
և ամ ոսկերք իմ ասասցեն, տր
Է ո՞ նման է քեզ:
Զի փրկեաց զաղքատն 'ի ձե
ռաց հզօրի զաղքատն և զտնանկն
յայնցանէ որք յափշտակեն
զնա:

Յարեան ՚ի վերայ իմ վկայք չա
րեաց. զոր ոչ գիտէի, հար
ցանէին զիս :

Հատուցին ինձ զչար՝ փոխանակ
ընդ՛ բարւոյ. անժառանգել
զանձն իմ խորհեցան յորդւոց
՚ի մարդկանէ :

Ես ՚ի նեղել նոցա՝ զքուրձ զգե
նուի. խոնարհ առնէի պահօք
զանձն իմ. և աղօթք իմ ՚ի ծոց իմ
դարձցին :

Որպէս զեղբայր և զընկեր՝ այսպէս
հաճոյ լինէի. որպէս զսգաւոր և
զտրտում, այնպէս խոնարհ առնէի:
Ի վերայ իմ ուրախ եղեն՝ և ժողո
վեցան. ժողովեցան յիս տանջանք
և ես ոչ ծանեայ. ցրուեցան և ոչ
զղջացան :

ՃԿԲ Փ որձեցի՛ն զիս՝ և արհամարհե ցի՛ն արհամարհանօք՝ կրճտեցի՛ն ՚ի վերայ իմ զատամո՛ւնս իւրեանց տ՟ր էրբ տեսցես ։

Դ՛ արձո՛ զանձն իմ ՚ի խորա մանկութենէ նոցա . և յառիւ ծո՛ւց զմիամօրութիւն իմ։

Խ՛ ոստովա՛ն եղէց քեզ տ՟ր՝ յեկե ղեցի՛ս մեծս . և ՚ի ժողովս բազ մա՛ց օրհնեցից զքեզ ։

Մ՛ի ուրախ եղիցի՛ն յիս թշնամի՛ք իմ, որք ատէ՛ն զիս ՚ի տարապար տուց . ա՛կնարկէի առնէի՛ն զիս ա չօք իւրեանց ։

Ը՛ նդ իս զխաղաղութի՛ւն խօսէ ՚ին . և ինքեանք՝ բարկութեամբ զնենգու՟թ խորհէին ։

Բ՛ ացին ՚ի վերայ իմ զբերա՛նս

իւրեանց . եւ ասացին՝ այո՛ այո՛ տե
սին աչք մեր ։
Տեսեր Տէր՝ եւ մի՛ լռեր . Տէր՝ մի՛ ՚ի
բացեայ առներ յինէն ։
Զարթի՛ր եւ հայեա՛ց Տէր՝ յիրաւ
ունս իմ . Աստուած իմ եւ Տէր իմ ՚ի դա
տաստանս իմ . եւ իրաւ արա ինձ
ըստ արդարութեան քում . Տէր Աստուած իմ ։
Մի՛ ուրախ եղիցին յիս թշնա
միք իմ . եւ մի՛ ասասցեն ՚ի սիրտս
իւրեանց . թէ վա՛շ վա՛շ անձանց
մերոց , զի ընկլուզաք զնա ։
Ամաչեսցեն եւ յամօթ լիցին՝ որք
խնդային ընդ չար իմ . զգեցցին
զամօթ եւ զանարգանս՝ որք մեծա
բանէին ՚ի վերայ իմ ։
Ցնծասցեն եւ ուրախ լիցին ՚ի քեզ
ամենեքեան . որք կամին ընդ ար
դարութիւն իմ ։

Ասասցեն յամ ժամ մեծ է ած
որք կամին զխաղաղութիւն ընդ
ծառայն քում։

Լեզուիմ խօսեսցի զարդարու
թիւնս քո. զօրհանապազ զգո
վութիւնս քո։

Տունք. ԻԷ.



Սաւուղ · կամէր սպանանել զդ աւիթ ։

Ի կատարած. ծառային տն դաւ
Թի սաղմոս տն։ Յորժամ կամէր
սպանանել զնա սաւուղ։

---

ԼԵ Ասէ անօրէնն՝ մեղանչել ընդ
միտս իւր. թէ չի՛ք երկեւղ այ՛
առաջի աչաց նորա։
բ Զի նենգեաց առաջի նորա. գտա
նել զանօրէնութիւն եւ ատել զնա։
Բանք բերանոյ նորա. անօրէ
նութիւն եւ նենգութիւն են։
Ոչ կամեցաւ նա իմանալ զբա
րի. զանօրէնութիւն խորհեցաւ
յանկողնի իւրում։
ե Եկաց նա յամ ճանապարհ որ ոչ է
բարի. եւ ի չարէ նա ոչ ձանձրացաւ։
Տէր յերկինս է ողորմութիւն քո
ճշմարտութիւն քո մինչեւ յամպս։

Արդարութիւնք քո որպ՛ լերինք
ա՛ծ՝ և իրաւունք քո որպէս խո՛րս
բազումս. զմարդիկ և զանասուն
կեցուցանե՛ս դո՛ւ տ՛ր:

Որպէս զի բազո՛ւմ արարեր զո
ղորմութի՛ քո ա՛ծ. այլ որդի՛ք
մարդկան, 'ի հովանի թեւոց քոց
յուսասցի՛ն:

Արբեսցի՛ն նոքա 'ի պարարտու
թենէ տա՛ն քո. և զ ո՛ւղխս փափ
կութե՛ քո՝ տացես ըմպե՛լ նոցա:
Զի քե՛ն է տ՛ր աղբի՛ւր կենաց.
և լուսով երեսաց քոց՝ տեսանեմք
զ լոյս:

Ձգեա՛ ողորմութի՛ւս քո, ո՛յք
ճանաչե՛ն զքեզ. զարդարութի՛ւս
քո որք ուղի՛ղ են սրտիւք:
Մի՛ եկեսցեն 'ի վերա մեն ո՛տք

աց ամբարտաւանից. և ձեռք մեղաւ-
որաց մի՛ դողացուսցեն զմեզ:
Ը՛նդ՚անկցի՛ն ամենեքեան ոյք
գործեն զանօրէնութիւն. մեր-
ժեսցին և այլ մի՛ կարասցեն հաս-
տատել:

Տունք. ժդ:

Գուբղայս. ե. Տունէ:

Կանոնս բոլոր. ժը: փոխէ:

Նու. բձղ: Տունէ:

Ը՛ղաչեմ զձեզ տեարք իմ սուրբք
և եղբարք իմ. յիշեսջիք առ քս
զոսկան րաբունապետ աշակերտ
զտէր յովհաննիսի որդի զանդրէ
նացի կարապետս զապաստանոր
բանի. զսրբագրող մատենիս.
և դուք յիշեալք լիջիք՝ի կրկնա
կի գալստեանն նորա. ամէն:



Մ՝օւէս խօսի ըն՟ ցօղոյն կենաց.քն ։

# Մօսէսի Բ. ծառաես մարգարէի :

Հայեցարուք երկինք. եւ
խօսեցայց. լուիցէ
երկիր զպատգամս
բերանոյ իմոյ :
Ընդունելի լիցի որպէս անձրեւ
բարբառ իմ. եւ իջցէ որպէս
ցօղ պատգամք իմ :
Որպէս անձրեւ ՚ի վերա սիզոյ. եւ
որպէս տարափ ՚ի վր խոտոյ. զի զա
նուն տն կարդացուք. եւ տուք
զօրհնութիւն տն այ մերոյ :
Ած որոյ ճշմարտութեամբ են
գործք նորա. եւ ամ ճանապարհք
նորա իրաւամբք են :

Ած հաւատարիմ է և ո՛չ գոյ ՚ի
նմա անիրաւութիւն. արդար և
ճշմարիտ է Տր̃:

Մ՛եղան և ո՛չ նմա որդիքն արա
տոյ. ծնունդք խոտորեալք և
թիւրեալք:

Ո՞չ այդ մ՛յնէ՝ զոր Տն̃ հատու
ցանէիք դուք՝ ժողովուրդք յի
մարք և ո՛չ իմաստունք:

Ո՞չ սա ինքն է հա՛յրն քո որ ստա
ցաւ զքեզ. արար և ստեղծ
զքեզ:

Յ՛ուշ լիցին քեզ աւո՛ւրքն յաւ
իտենից. իմացարո՛ւք զամս ազգաց
մինչև յա՛զգս:

Հարցջի՛ր դու ցհա՛յրս քո և պատ
մեսցե՛ն քեզ. ցծերս քո՝ և ասաս
ցե՛ն քեզ:

 Ի ժա

Ի ժամանակի, որ՛ բաժանեաց
բարձրեալն զա՛զգս մրդ. եւ որպէս
սփռեա՛ց նա՛ զորդիսն ադամայ ։
Կացոյց զսահմանս հեթանոսաց
ըստ թուոյ հրեշտակաց այ ։
Եղեւ բաժին տն, ժողովուրդ
իւր յակոբ. եւ վիճակ ժառանգու
թեան իւրոյ, իսրայէլ ։
Բաւական՛ն եղեւ նմա յանապա
տի ՛ի ծարաւ տօթոյ յանջրդուոջ
պաշտպանեա՛ց զնա ։
Խրատեա՛ց զնա եւ պահեաց որ
պէս բի՛բ ական. եւ որպէս զարծ
ուի ՛ի թե՛ւս իւր ընկալաւ զնա եւ
ո՛չ ՛ի վ՟ր ձագուց իւրոց գթացաւ
Տարածեաց զթե՛ւս իւր եւ ընկա
լաւ զնա. եւ բարձեալ բերէր զնա
՛ի վերայ միջնողաց իւրոց ։

ՏՐ̃ միա՛յն ածէր զնոսա . եւ՛ չգոյր
ընդ նոսա ա՟ծ օտարս :
Եած էհան զնոսա 'ի զօրութե̃ս
երկրի . եւ կերակրեա՛ց զնոսա
արդեա՛մբք անդաստանաց :
Դիեցո՛յց նոցա զմեղր 'ի վիմէ .
եւ զի՛ւղ յապառա՛ժ վիմէ :
Ի՛ւղ կովուց՝ եւ կաթն մաքեաց .
ճարպով հանդերձ . խոյոց , որ
թուց , ցլուց եւ նոխազաց :
Օ պարարութիւն երիկամ՛ց
ցորենոյ . եւ զարիւն խաղողոյ
է արբ զգինի :
Եկեր յակոբ եւ յագեցաւ . եւ ան
գուշեաց զսիրելի՛ն :
Գիրացաւ . ստուարացաւ լայնա
ցաւ եթող զտ̃ր ա՟ծ զարարի՛չ իւր
եւ յետս եկաց յա՟յ փրկչէ իւրմէ :

Բարկացուցին զիս օտարոտեւք իւեանց. և կռովք իւրեանց դառնացուցին զիս:

Զոհեցին դիւաց՝ և ոչ այ·դիցն զորս ոչ գիտէին. նորք և առժամայնք. զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա:

Թողին զտր՝ որ ծնաւ զնս. մոռացան զած՝ որ կերակրեաց զնոսա:

Է Ետես տր. և նախանձեցաւ. և սրամտեցաւ 'ի վերա ուստերաց և դստերաց նոցա և ասէ:

Դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ. և ցուցից նոցա զի՞նչ լինելոց իցէ. յաւուրս ժամանակի:

Զի ազգ մի թիւր են նոքա և որդիք անհաւատնք. նոքա նախանձե

ցուցին զնս 'ի չաստուածս իւր
եանց. և դառնացուցին զնս 'ի կռո
ւս իւրեանց ։
Ա՛րդ՝ և ես նախանձեցուցից զնս
յազգ անպիտան . և անմիտ ազ
գաւ, զկծեցուցից զնոսա ։

Տունք. Է ։

Տ՛ուք փառս այ՝ տուք զօրհնութի
մարդասիրին. Թագաւորին յաւէ
տենից՝ որ փրկէ զծառայս իւր
և կեցուցանէ ։ մարդասէր տր
Վ՛ասն սրբուհւոյ անարատ մօր
քո կուսի ։
Ե՛ւ վասն խաչի քո պատուակա
նի ․ տր ընկալ զաղաչանս մեր՝
և կեցո զմեզ ։

Ո՛վ արարող երկնից պատմեններն
և տ̃ր ա՛պաճէններն ։

Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան
և յա̃մ ժամու՝ խօսել մեզ զբան
տ̃ն · զոր աղաչեսցուք։
Վասն չանկանելո՛յ մեզ 'ի փորձու
թիւն · որում ո՛չ կարեմք հան
դուրժել · զոր աղաչեսց ։
Վասն ա՛նբիծ և անդատապա՛րտ
կալ մեզ՝ առաջի ահե՛ղ ատենին
ք̃ի · զոր աղաչեսցուք ։
Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նա̃
ահանգիստն՝ կենաց անվրդովմա
նից · զոր աղաչեսցուք։
Վասն արժանի՛ լինելոյ մեզ վե
րի՛ն կոչմանն՝ և երկնից արքայու
թեանն · զոր աղաչեսցուք ։

Սր̃ հոգւոյն հանգուցելոց որք
ճշմարիտ և ուղիղ։ Նուէս միաբ։
Ո անձնինս։ Ողորմեաց մեզ։
Պնդեշերի և՛ խառն ընջեան՝ և յամ
ժամու զքեզ աղաչեմք, և՛ ի քեն
խնդրեմք մարդասէր տր̃. Տո́ւր
մեզ ած̃ փրկիչ մեր. խոնարհեա
ցի ունկն քո ՚ի խնդրուածս մեր։
Ո ի մի ունայն լիցին վաստակք
ծառայից քոց, Եւ համարեա
զաշխատութիւնս մեր ՚ի գործ
արդարութեան՝ և՛ ի պտուղ ած̃
պաշտութե։ Ընկալ տր̃՝ զաղօթս
և զերկրպագ ութի́ս մեր. և
հաստ մեզ զողորմութի քո առա
տապէս։ Ոածկեա զմեզ ընդ
հովանեաւ ամենազօր աջոյդ քո։
Ոաճրացո զմեզ տր̃՝ զօրութ

սբ հոգւոյդ. պահեա զմեզ որ
պէս բիբ ական։ Եւ արա́ առմեզ
զնշան բարի. 'ի գովե́ստ և 'ի փա
ռաբանութիւն անուա́նդ քում սրբոյ
Զի 'ի քո́ փառս կատարի՝ ամ
արարածոց մշտընջենաւոր փա
ռաբանութիւն 'ի բարձունս՝ Հօ́ր
և որդւո́յ և հոգւո́յդ սբոյ՝ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե
նից ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի և յաւ
իտենական. Նայեաց և այց արա
բանաւո́ր հօտի քո զոր ժողովե
ցեր առ քեզ գթութեամբ քով։
Զի քո́ առաջի կամք տր. և առ
'ի քէն ողորմութե́ցդ և գթու

թեանցդ ամէն ունիմք. Զամենե
սեան օրհնեա՛. զամենեսեան ի
մաստնացո՛. զամենեսեան լուսա
ւորեա՛. և ամենեցունց պարգևեա
զերկնից արքայութիւնդ։

Վասն զի՝ դու ես տ̅ր՝ կենաց՝ և
ա̅ծ ողորմութեանց և քեզ վայելէ՝
փառք՝ իշխանութիւն. և պատիւ
այժմ՝ և միշտ՝. և յաւիտեանս
յաւիտենից ամէն։

՚Ի գիշերի և ՚ի տուընջեան՝ և
յա̅մ ժամու անդադար փառաւ
որեմք զհայր, և զորդի՝ և զս̅բ
զհոգիդ այժմ՝ և միշտ՝ և յաւի
տեանս յաւիտենից ամէն։



Սուրբք անպարշտուաց մտեն ՚ի եսերոս
ներեանց ։

Սաղմոս Դաւթի. ՚ի կատարած։ ✠ ԼԶ

ՄԻ ՆԱԽԱՆձեր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ, որք գործեն զանօրէնութիւն։

Զի որպ̃ խոտ՝ վաղվաղակի ցամաքեսցին. և որպէս զդալար խոտոյ, վաղվաղակի անկցին։

Յուսա՛ ՚ի Տ̃ր՝ և արա զքաղցրութիւն. բնակեա՛ց յերկրի՝ և հովուեսցիս ՚ի մեծութեան նորա։

Զ. տուեա՛ 'ի տէ՝ և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի տն զճանապարհս քո՝ և յուսա՛ 'ի նա։

Նա արասցէ՝ և հանցէ որպէս զ լոյս զարդարութիւն քո. և զի րաւունս քո որպէս զօր հասարակ։

Հնազա՛նդ լեր տն՝ և ծառայեա՛ նմա. և մի՛ նախանձիր ընդ այնո սիկ որոց առաւկեա՛լ իցեն ճանա պարհք իւրեանց. ընդ մարդոյ՝ որ գործէ զանօրէնութիւն։

Դադարեա՛ 'ի բարկութենէ՝ և հան դի՛ր 'ի սրտմտութենէ. և մի՛ նա խանձիր ընդ չարս։

Զի չարք սատակեսցին. բայց որք համբերեն տն՝ նոքա ժառանգեսցեն զերկիր։

 Փոքր

Փոքր մի և այլ ոչ ևս իցէ ամբարիշտն. խնդրեսցես զտեղի նորա և ոչ գտցես։

Այլ որք հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր. և փափկասցին ի բազում խաղաղութեան իւրեանց։

Սպասէ մեղաւոր արդարոյ՝ և կրճտէ ի վերայ նորա զատամունս իւր. այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ. Վասն զի յառաջագոյն տեսանէ զի հասանիցէ օր նորա։

Սուր հանին մեղաւորք՝ և լարեցին զաղեղունս իւրեանց. հարկանել զաղքատն և զտնանկն. և սպանանել զայն, որ խոնարհն է սրտիւ։

Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա և աղեղունք նոցա փշրեսցին։

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ՝
քան զբազում մեծութիւն մեղաւ-
որաց. և բազուկք անպարշտաց
խորտակեսցին:
Հաստատէ Տէր զարդարս. և ճա-
նաչէ զաւուրս անբծից. ժառան-
գութիւն նոցա յաւիտեան եղիցի:
Մի՛ ամաչեսցեն նոքա ՚ի ժամա-
նակս չարութեան. այլ յաւուրս
սովու յագեսցին:
Ահա՛ մեղաւորք կորիցեն. այլ
թշնամիք Տէրն, ՚ի փառաւորել և ՚ի
բարձրանալ իւրեանց պակասես-
ցին. որպէս ծուխ զի պակասի:
Փոխ առնու մեղաւորն՝ և ո՛չ հա-
տուցանէ. այլ որ արդարն է՝ ո-
ղորմի և տայ:
Այլք օրհնեն զՏէր՝ ժառանգես-

ցեն զերկիր. եւ ոյք անիծանեն,
սատակեսցին ՚ի նմանէ:
Ի տէ՛ ուղղին գնացք առն. զճա
նապարհս նորա, նա կամի՛ յոյժ:
Թէ՛ պէտ եւ գայթագղեսցի՛ նա,
մի՛ կործանեսցի. զի տր ձեռնկա-
լո՛ւ է նորա:
Մանո՛ւկ էի ես եւ ծերացայ. եւ
ո՛չ տեսի զարդար արհամարհեա՛լ
եւ ո՛չ զզաւակ նր թէ մուրանայ
զհաց:
Զօ՛ր հանապազ ողորմի եւ տա՛յ
փոխ. զաւակ նորա օրհնեա՛լ եղի
ցի յաւիտեան:
Խոտորեա՛ց ՚ի չարէ եւ արա՛ զբա
րի. բնակեսցիս յաւիտեա՛նս յաւ
իտենից ՚ի նմա:
Տր սիրէ՛ զիրաւունս՝ եւ ո՛չ ընդ

վա՛յր հարկանէ զձեռս իւր. այլ
յաւիտեան պահէ զնոսա:

Անօրէնք հալածեսցին 'ի միա
սին. և զաւակք ամբարշտաց սա
տակեսցին.

Այլ արդարք ժառանգեսցեն
զերկիր. և բնակեսցին յաւի
տեանս յաւիտենից 'ի նմա:

Բերան արդարոյն խորհի զիմաս
տութիւն. և լեզու նորա խօսես
ցի զիրաւունս:

Օրէնք ա՟յ իւրոյ՝ են 'ի սրտի
իւրում. և մի գայթագղեսցին
գնացք նորա:

Հայի մեղաւոր ընդ արդար. և
խնդրէ սպանանել զնա. այլ տ՟ր
ո՛չ թողու զնա 'ի ձեռս ն՟ր և ո՛չ դա
տապարտէ զնա. յորժամ դատէ զնա

Համբե՛ր տն՝ և պահեա՛ զճանա
պարհս նորա. և բա՛րձր արասցէ
զքեզ ՚ի ժառանգել զերկիր. և
զսատակումն մեղաւո՛րաց տեսցես
Տեսի զամբարի՛շտն վերացեալ.
և բարձրացեա՛լ որպէս զմայրսն
լիբանանու:
Անցի՝ և ահա ո՛չ էր. խնդրեցի՝
և ո՛չ գտաւ տեղի նորա:
Պահեա՛ զանմեղութիւն. և տես
զուղղութիւն. զի գո՛ն մնացո՛ւ
ածք առն խաղաղարարի:
Անօրէնք հալածեսցի՛ն ՚ի միա
սին. և զա՛ւակք անպարշտաց
կորիցեն:
Փրկութիւն արդարոց ՚ի տնէ՛ է.
վերակացո՛ւ է նոցա ՚ի ժամու
նեղութեան:

Օգնեսցէ՛ նոցա տէր՝ և փրկես-
ցէ՛ զնոսա. ապրեցուսցէ՛ ի մեղաւ-
որաց՝ և կեցուսցէ զնոսա. զի յու-
սացա՛ն ի նա։

Գ. ուրղայս. ԼԵ: Տունէ.



Մ՝ի ասէ զիս յանդիմաներ բարկութեամբ

Մա

Լէ

Սաղմոս դաւթի : առ՝ ի յիշա-
տակ շաբաթու :

---

Տէր մի՛ սրտմտութեամբ
քով յանդիմաներ զիս
և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս :

Զի նետք քո հարան յիս . և յիս
հաստատեցաւ ձեռն քո .

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ
իմոյ յերեսաց բարկութեան քո :

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց
իմոց . յերեսաց մեղաց իմոց :

Զի անօրէնութիւնք իմ բարձրա
ցան քան զգլուխ իմ . և որպէս բեռն
ծանր, ծանրացան ՚ի վերայ իմ :

Նեխեցան և փտեցան վէրք իմ

190 յեր

յերեսաց անզգամութեան իմոյ։
Տառապեցայ եւ խոնարհեցայ յոյժ
զօր հանապազ տրտում գնայի.
զի անձն իմ լի եղեւ չարչարանօք
եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ
իմոյ։
Չարչարեցայ եւ խոնարհ եղէ
մինչեւ յոյժ. մռնչէի առ հեծու-
թեան սրտի իմոյ։
Տէր առաջի քո է ամ ցանկութի
իմ. եւ հեծութիւն իմ ի քէն ոչ
ծածկեցաւ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ էթող
զիս զօրութիւն իմ. լոյս աչաց
իմոց, եւ այս ոչ եղեւ ընդ իս։
Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ
առաջի իմ մերձեցան եւ կային եւ
մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս՝ և խնդրէին զանձն իմ. որք խորհէին զչար ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւն. և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Եւ ես՝ որպէս խուլ՝ զի ոչ լսէ. և որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ և ոչ գոն խօսք ի բերան նորա։

Զի ի քեզ Տէր յուսացայ՝ և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ՝ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ի սասանել ոտից իմոց ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Զի ես ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմե
ցից. եւ հոգացայց վասն մեղա՛ց
իմոց :

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի՛
են. և զօրացեա՛լք են քանզիս.
եւ բազմացա՛ն են որք ատէի՛ն զիս
՛ի տարապարտուց

Եւ որք հատուցին ինձ չա՛ր փո
խանակ ընդ բարւոյ. չար խօ
սէին, զինէն զի ես երթայի զհետ
արդարութեան իմոյ :

Մի՛ թողուր զիս տ՛ր ա՛ծ իմ. եւ մի՛
՛ի բացեայ առնիր յինէն. հայեա՛ց
յօգնել ինձ՝ տ՛ր փրկութեան իմոյ :



Ուեցի ասէ եւ ո՛չ բացի զդեւրան իմ զն

Ի կատարած ։ Իդիթումայ . օրհնութիւն դաւթի ։ սաղմոս

ԼԸ

Ասացի թէ՛ պահեցից զճանապարհս իմ . զի մի՛ մեղայց լեզուաւ իմով ։

Եդի զպահապան բերանոյ իմո՛յ ի հակառակել մեղաւորին առաջի իմ ։

Խուլ եղէ և խոնարհեցայ . լռեցի՛ ի բարութենէ . և ցաւք իմ նորոգեցան յիս ։

Ջեռաւ սիրտ իմ՝ ի խորս իմում և՛ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր ։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի . ցո՛յց ինձ տէր զկատարած իմ . և թիւ աւուրց իմոց քանի՛ է . զի գիտացից թէ որչափ ինչ պակասեալ իցեմ ։

Ա. հա չափով եդեր զաւուրս իմ. և կար զօրութեան իմոյ որպէս ոչ ի՛նչէ առաջի իմ. սակայն ամենև ի՛ն ընդունայն է՝ ամենայն մարդ մեղի :

Ապաքէ՛ն որպէս ՚ի պատկերի շրջի մարդ. սակայն ՚ի զո՛ւր խռովի. գանձէ և ո՛չ գիտէ ո՛ւմ ժողովէ :

Ի՛սկ արդ՝ ո՞վ է համբերութի իմ, թէ ո՛չ դո՛ւ տէր. կամ կա՛յր զօրութե իմոյ՝ թէ ո՛չ ՚ի քէն :

Յամենայն անօրէնութենէ իմմէ փր կեցե՛ր զիս. և նախատինս անզգամա՛ց արարեր զիս :

Խո՛ւլ եղէ և ո՛չ բացի զբերան իմ զի դո՛ւ արարեր :

Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ. զի ՚ի զօրութենէ ձեռի՛ն քո՝ ես պակասեցայ :

Ի շտամբութեան վս̃ մեղաց՝
խրատեցե՛ր զմարդ. մաշեցեր որպ̃
սարդի՛ ոստայն զանձն նորա. սա
կայն ընդունայն է ամ̃ մարդ :

✠ Հանդիսա : ✠

Լո՛ւր տր̃ աղօթի՛ց իմոց. ունկն
դիր խնդրուածոց իմոց, արտա
սուաց իմոց մի՛ լռեր :

Պանդուխտ եմ ես առաջի քո.
նշդե՛հ եւ անցաւոր. որպէս ամ̃
հարք իմ :

Թո՛յլ արա ինձ զի հանգեայց.
մինչ՝ չե՛ւ երթեալ իցեմ. ուստի
ոչեւս գտանիցիմ :

Տունք. Ժե̃ :



Հաստատեցաք ՚ի կողմն քո. եւ ուղղե-
ցան գնացք մեր յերկիրս:

Ի կատարած. սաղմոս դաւ՟թի:

Լ՟Թ

Համբերելով համբերի տն՟. և նայեցաւ առ իս. և լուաւ աղօթից իմոց:

Եհան զիս ՚ի գբոյ տառապանաց ՚ի կաւոյ և ՚ի տղմոյ:

Հաստատեաց ՚ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ:

Եդ ՚ի բերան իմ զօրհնութի՟ն նոր. յօրհնութիւն տն՟ այ՟ մերոյ:

Տեսցեն բազումք. և երկիցեն. և յուսասցին ՚ի տր՟. երանեալ է այր՝ որոյ անուն տն՟ յոյս է նորա:

Ոչ հայեցաւ նա ՚ի նանրութիւն և ՚ի մոլորութիւն սուտ:

Բազում արարեր դու՝ տր՟ աժ՟ իմ զսքանչելիս քո. և խոր

հրդոյ քոյ ո՛չ ոք է որ նմանի քեզ:
Պատմեցի և խօսեցայ՝ և բազո՜ւմ
եղեն քանզի թիւս. ընդ զոհս և ընդ
պատարագս ո՛չ հաճեցար. լսելիս
հաստատեցեր ինձ զողջակէզս.
և զ վասն մեղաց ո՛չ խնդրեցեր:
Յա՛յնժամ ասացեր թէ ահաւա-
սիկ գա՛մ ես. ՚ի գլուխս գրոց
գրեա՛լ է վասն իմ:
Առնել զկա՛մս քո Աստուած իմ կամե-
ցայ՝ և զօրէնս քո ՚ի մէջ որովայնի
իմում:
Աւետարանեցի զարդարու-
թիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա
և զշրթունս իմ ո՛չ արգելից
՚ի քէն:
Տ՟ր դու գիտացեր, զի զարդա-
րութիւնս քո ո՛չ ծածկեցի ՚ի սրտի
 իմու

իմում. զճշմարտութիւնս քո՝ և
զփրկութիւնս քո:

Ասացի՝ և ոչ թաքուցի զողոր
մութիւնս քո. և զճշմարտութիւնս քո
՚ի ժողովրդենէ մեծէ:

Դու տր՝ մի՛ հեռի առներ
զգթութիւն քո յինէն. զի ողոր
մութիւն քո՝ և ճշմարտութիւն քո
յամենայն ժամ ընկալցին զիս:

Շուրջ եղեն զինև չարք՝ որոց
ոչ էր թիւ. հասին ինձ անօրէ
նութիւնք իմ, և ես ոչ կարացի տե
սանել:

Բազում եղեն քան զհեր գլխոյ
իմոյ. և սիրտ իմ եթող զիս:

Կամեա՛ց տր՝ փրկել զիս. և տր
յօգնել ինձ նայեաց:

Ամաչեսցեն և յամօթ լիցին ոյք

խնդրէին զանձն իմ, բառնալ զնա
դարձցին յետս եւ ամաչեսցեն՝ որք
խորհէին ինձ զչար ։

Կրեսցեն զամօթ առժամայն
վաղվաղակի որք ասէին ինձ
վա՛շ վա՛շ ։

Ցնծասցեն եւ ուրա՛խ լիցին ՚ի
քեզ. ամենեքեան որք խնդրեն
զքեզ տ̅ր ։

Ասասցեն յա̅մ ժամ մե̅ծ է ա̅ծ
որք սիրեն զփրկութիւնս քո ։

Ես աղքատ եւ տնանկ եմ, ա̅ծ
խորհեաց զիս. օգնական եւ պաշտպան իմ. եւ դու ա̅ծ իմ մի
յամենար ։

Տունք. Ի̅Ե̅ ։

Գուբղայս. Ծ̅Ը̅. Տունէ.



(Օ)գնեաց տր 'ի մահիճս անկելոյն . խոր հողէն ղտնանէն :

խ

Ի կատարած . սաղմոս դաւթի :

Երանի՛ որ խորհի զաղ
քատն եւ զտնանկն . յաւ
ուր չարի փրկէ զնա տր
Տր փրկէ զնա եւ կեցու
ցանէ . երանելի՛ առնէ
զնա ՚ի յերկրի . եւ ոչ մատնէ
զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց :
Տր օգնական է նմա ՚ի մահիճս
ցաւոց իւրոց . եւ զամ յանկողինս
նորա ՚դարձուցանէ ՚ի հիւանդու
թենէ նորա :
Ես ասացի տր ողորմեաց ինձ . եւ
բժշկեա զանձն իմ . եւ մեղայ քեզ :
Թշնամիք իմ ասացին ինձ չար

ե՞րբ եկցէ՝ զի մեռցի և կորիցէ ա
նուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն
խօսէր ՚ի սիրտ իւր. և ժողովէր
զանօրէնութիւն յանձն իւր:

Արտաքս ելանէր՝ և զնոյն խօսէր
զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ
Եւ որոճեցան զչար ՚ի վերայ իմ.
և զբան անօրէնութեան եդին
՚ի վերայ իմ:

Մի՞թէ որք ննջիցեն և այլ ոչ ևս
յաւելուցուն յառնել. քանզի՝
և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր
և ես յուսացայ:

Որ ուտէր զհաց իմ. յաճախեաց
առնել ինձ զխաբէութիւն:

Այլ դու Տէր ողորմեա՛ց ինձ. և
կանգնեա՛ զիս. և ես հատուցից նոցա:

Յայսմ ծանեայ զի հաճեցար
ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս
Թշնամիք իմ:

Եւ զիս յանբծութեան իմում
ընկալար. եւ հաստատեցեր զիս
առաջի քո յաւիտեան:

Օրհնեա՛լ տ՟ր ա՟ծ իսրայելի յաւ֊
իտեանս յաւիտենից եղիցի՛
եղիցի.

Տունք. ժ՟է.



Փափագեալ հոգւով եւ կամօք դիմէ դա՛ւթ ի առ ա՛ծ. որպ՛ էս եղջերուն զի ընթանայ յաղբիւր ջուրցն։

Ի կատարած • իմաստութեան որդւոցն կորխայ ։ սաղմոս դաւթի ։

---

Խա̃

Որպէս փափագէ եղջերու յաղբեր ջուրց • այնպէս փափագէ անձն իմ առ քեզ ա̃ծ ։

Ծարաւի է անձն իմ առ քեզ ա̃ծ, հզօր կենդանի • երբ եկից երեւեցայ ց երեսացդ ա̃յ ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր, 'ի տուէ եւ 'ի գիշերի • եւ ա́յն, զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ա̃ծ քո ։

Զա́յս ո̃չ յիշէի, տառապէ́ր յիս անձն իմ • քաջամբերեւ, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տա́ննն ա̃յ ։

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան. և ՚ի ձայն բարեկենդանութեան։

Ա՛րդ՝ ընդէր տրտում ես անձն իմ. կամ ընդէր խռովես զիս. յուսա՛ առ ած՝ խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց ած է։

Անձն իմ յիս խռովեցաւ. վասն այսորիկ՝ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանու, յահերմոնէ լեռնէ փոքուէ։

Աո՛րք խորոց կարդացին առ քեզ. ՚ի ձայն սահանաց քոց։

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո՝ անցին ՚ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեսցէ տր զողորմութիւն իւր. ՚ի գիշերի զօրհնութիւն նորա. և աղօթք իմ առ ած կենաց իմոց.

Ասասցէ՛ ա՛յ՝ ընդունօղ իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս. ընդէ՞ր տրտմեալ գնամ ես՝ ՚ի նեղել թշնամեաց իմոց:

՚Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօր հանապազ. թէ ո՞ւր է ա՛ծ քո:

Ա՛րդ՝ ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ա՛ծ. խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ա՛ծ է:

## Տունք. ճդ:



Ա. ղաղակէ մարգարէն դաւիթ առ
ա̃ծ դատ առնել իւրեան ։

## Սաղմոս դաւթի ։

ԽԲ

Դատ արա ինձ Ած․ և իրաւ արա
ինձ ՚ի դատաստանի իմում ։
Յազգէ որ ոչ է սբ․ ՚ի մարդոյ մե
ղաւորէ նենգաւորէ փրկեա զիս
Դու Ած հզօր իմ ես․ ընդէ
ր մոռացար զիս․ ընդէր տր
տում գնամ ես․ ՚ի նեղել թշնա
մւոյ իմոյ ։
Առաքեա Տր զլոյս քո՝ և զճշ
մարտութիւն քո՝ զի առաջնոր
դեսցեն ինձ․ և հանցեն զիս ՚ի
լեառն սբ՝ և ՚ի յարկս քո ։
Մտից առաջի սեղանոյ այ առ Ած
որ ուրախ առնէ զմանկութի իմ ։
Խոստովան եղէց քեզ օրհնու
թեամբ՝ Ած Ած իմ ։

Մ՛որդ՝ ընդէ՞ր տրտո՛ւմես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովե՛ս զիս. յուսա՛ առ ա՛ծ. խոստովանեսցի՛ց նմա՛. փրկիչ երեսաց իմոց ա՛ծ է:

Տունք Է:

Գ. ուբղայս. Լէ. Տունէ:



Արարեր զմեզ ծաղր հեթանոսաց • և
մատնեցեր որպէս զոչխար ՚ի ջենումն։

✠ խդ

Ի կատարած . իմաստութեան որդւոցն կորխայ . սաղմոս դաւթի :

ԱԾ ականջօք մերովք լուաք զոր հարքն մեր պատմեցին մեզ :

Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս նոցա . յաւուրսն առաջինս:
Ձեռն քո խլեաց զհեթանոսս եւ զնոսա տնկեցեր . չարչարեցեր զժողովուրդս քո եւ հաներ զնոսա
Ոչ եթէ սրով իւրեանց ժառանգեսցեն զերկիր . եւ ոչ բազուկ նոցայ թէ փրկեաց զնոսա:
Այլ աջ քո՝ եւ բազուկ քո՝ եւ լոյս

երեսաց քոց. զի հաճեցար դու ընդ նոսա։

Դու ինքն ես՝ Թագաւոր իմ և ած իմ. որ հրամայեցեր զփրկութեանցն յակովբայ։

Քև զթշնամիս մեր հարցուք՝ և անուամբք քով արհամարհեսցուք՝ զյարուցեալսն ՚ի վերայ մեր։

Ո՛չ Թէ յաղեղն իմ յուսացեալ եմ. և ո՛չ սուր իմ կեցուցանէ զիս։

Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնամեաց մերոց. և զատելիս մեր յամօթ արարեր։

Աստուծով պարծեցարուք զօր հանապազ. և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան։

✠ Հանգիստ ։ ✠

Բայց արդ՝ մերժեցեր եւ անարգեցեր զմեզ. եւ ոչ ելեր ած ընդ զօրս մեր:

Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր. եւ ատելիք մեր յափշտակեցին զմեզ:

Տուր զմեզ որպէս զոչխար 'ի զենումն. եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ:

Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ. եւ ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ:

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. ծաղր՝ եւ այպն կատականաց՝ այնոցիկ որք շուրջ են զմեօք:

Արարեր զմեզ յառակս հեթանոսաց. 'ի շարժել զգլուխս ժողովրդոց:

Զօ՛ր ամենայն նախատինք իմ առաջի իմ են. և ամօթ երեսաց իմոց ծածկեա՛ց զիս :

Ի ձայնէ՛ նախատորդին և չարախօսի՝ յերեսաց թշնամւոյն. և հալածչի :

Ա՛յս ամենայնեկն ՚ի վերայ մեր՝ և մեք զքեզ ո՛չ մոռացաք. և ո՛չ ստեցաք ուխտի քում. և ո՛չ դարձաւք յետս սրտիւք մերովք :

Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանապարհաց քոց. խոնա՛րհ արարեր զմեզ ՚ի տեղի չարչարանաց. և ծածկեցին զմեզ ստուե՛րք մահու :

Թէ մոռացեա՞լ իցէ մեր զանուն այ մերոյ. կամ ձգեա՞լ իցէ զձեռս մեր առ աստուա՛ծս օտարս :

Ապաքէն՝ ած խնդրէ՛ զայս. զի
նա քննէ՛ զգաղտնիս սրտից մերոց:
Վասն քո մեռանի՛մք զօր հանա
պազ՝ համարեցաք որպէս զոչխա՛ր
՚ի զենումն :
Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տր.
արի՛ և մի՛ մերժեր զմեզ իսպառ :
Ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո
՚ի մէ՛նջ. մոռանաս զաղքատութի
և զնեղութիւնս մեր :
Խոնարհեցաւ մինչև ՚ի հող ան
ձի՛նք մեր . և յերկի՛ր կցեցան
մէջք մեր :
Արի՛ տր օգնեա՛ մեզ. և փրկեա՛
զմեզ վասն անուա՞ն քո :

Տուն. ԺԷ :



Տարեալ կուսանքն ՚ի տաճար թագաւորին

Ի կատարած · զաւր անցելոց ժամանակաց· որդւոցն կոր խայ, իմաստութեան ։

Սաղմոս օրհնութեան · վասն սիրելւոյն ։

---

Բղխեացէ սիրտ իմ զպատգամս քո բարիս · եւ ասացից զգործս իմ թագաւորի ։

Լեզու իմ որպէս գրիչ արագա դիր դպրի՝ գեղեցիկ տեսլեամբ քան զամ որդւոց մարդկան ։ Եւ

Սփռեցան շնորհք՝ ի շրթանց քոց վասն այս որհնեաց զքեզ ած յաւիտեան ։

Ած զսուր ընդ մէջ քո հզօր · վայելչութեան եւ գեղոյ քո ։

Լարեա ուղղեա եւ թագաւորեա



✠ Խմ ✠

Բղխեացս՛՛ զբան բա՛՛ · Եւ ասեմ

ՙանձեղով

վասն ճշմարտութեան, հեզութեան եւ ար
դարութեան . եւ առաջնորդեսցէ
քեզ սքանչելապէս աջ քո ։
Նետք քո սրեալք են հզօր . եւ
ժողովուրդք ընդ քեւ անկցին
ի սիրտս թշնամեաց թագաւորին։
Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւի
տենից գաւազան ուղղութեան՝
գաւազան արքայութեան քո ։
Սիրեցեր զարդարութիւն . եւ ատե
ցեր զանօրէնութիւն ։
Վասն այսորիկ օծ զքեզ Աստուած,
Աստուած քո իւղով ուրախութեան.
առաւել քան զընկերս քո ։
Զմուռս եւ զհալուէս եւ զկասիա
ի զգեստուց քումմէ . ի տաճարաց
փղոսկրէից ուստի ուրախ արարին
զքեզ դստերք թագաւորաց ի
պատիւ ։

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ 'ի հանդերձս ոսկէհիւսս, զարդարեալ պաճուճեալ ։

Լո՛ւր դո՛ւստր և տե՛ս՝ խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո և զտո՛ւն հօր քոյ. զի ցանկացաւ Թագաւոր գեղո՛յ քո ։

Նա ի՛նքն է տէր քո՝ երկի՛ր պագցես նմա. և դուստր Տիւրոսի եր կի՛ր պագցէ նմա՝ և պատարագօք զերեսս նորա, պաշտեսցե՛ն մեծամեծք 'ի ժողովրդոց ։

Ամենայն փառք դստե՛ր Թագաւորի ի ներքոյ. 'ի վերջաւո՛րս ոսկէհուռս՝ զարդարեա՜լ և պաճուճեա՜լ ։

Տարցի՛ն Թագաւորի կուսանք զհե՛տ նորա. և զընկերս նորա տարցեն նմա ։

Ածցին ցնծութբ՛ եւ ուրախութբ. և տարցին ՚ի տաճար թագաւորի. եւ փոխանակ հարց քոց եղեցին որդիք քո։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ
զէ ամ երկիր. եւ յիշեսցեն զանուն քո՝ ընդ ամենայն ազգս ազգաց։

Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ. յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից։

Տուն. Ժը։




Յետ ջուրցն խառմելոյ՝ եցոյց տր
Նոյի զաղեղն իւր յամպս ։

Ի կատարած որդւոցն կորխայ. ՚ի վերայ գաղտնեաց։

---

խե Աստուած մեր ապաւէն և զօրութիւն օգնական ՚ի վերայ նեղութեանց որք գտին զմեզ յոյժ։

Վասն այսորիկ ո՛չ երկիցուք մեք ՚ի խռովիլ երկրի. ՚ի փոփոխիլ լե րանց ՚ի սիրտս ծովու։

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա. խռովեցան լերինք ՚ի զօրու թենէ նորա։

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ. և սրբեաց զյարկս իւր բարձրեալն։

Աստուած ՚ի մէջ նոցա՝ և նոքա մի՛ սասա նեսցին. օգնեսցէ նոցա Աստուած՝ ՚ի վա ղորդենէ մինչ և ՚ի վաղորդայն։

Խռովեցան հեթանոսք՝ և խո
նարհեցան թագաւորութիւնք
Ետ զձայն իւր բարձրեալն. և խռո
վեցաւ երկիր ։

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդու
նող է մեր ա՟ծ յակոբայ ։

Եկայք և տեսէք զգործս ա՟յ. որ
արար զնշանս և զարուեստս ՚ի վե
րայ երկրի ։

Ի՛հար զպատերազմ ՚ի ծագաց
մինչև ՚ի ծագս երկրի. զաղե
ղունս փշրեսցէ, զզէնս խորտա
կեսցէ, և զասպարս այրեսցէ հրով ։

Զանխեցէք և ծանիջիք զի ես
եմ ա՟ծ. բարձր եղէց ՚ի հեթա
նոսս. և բարձրացայց ՚ի վ՟ր երկրի

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդու
նող է մեր ա՟ծ յակոբայ ։




Համբարձումն է քի տն մերոյ յեր
կինս ։ 228

 ✠ խզ ✠

Ձեռս հարէք ամ հեթանոսք . աղաղակեցէք առ ած ՚ի ձայն ցնծութեան ։

Զի բարձրեալ է և ահաւոր . թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի ։

Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ . և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց ։

Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութիւն . զգեղեցկութեանցն յակոբայ զոր եսիրեաց ։

✠ Հանգիստ ։ ✠

Համբարձաւ ած օրհնութե

թեամբ. և որ մեր ձայնիւ փողոյ.

Սաղմոս ասացէք այ մերում, սաղմոս ասացէք. Թագաւորին մերում. սաղմոս ասացէք։

Թագաւոր մեծ ՚ի վերա ամ երկրի ած է. սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ։

Թագաւորեաց ած ՚ի վերա հեթանոսաց. ած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ։

Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ ածն աբրահամու, զի այ զօրութիւնք, յերկրէ յոյժ համբարձան։

Տունք. Թ։



Նաւէն որ 'ի թարսխս. համեմատեալ՝ եղա

Սաղմոս օրհնութե(ան). որդւոյն կորխայ. երկրորդ շաբաթու։

---

խէ Մե՛ծ է տր՝ և օրհնեա՛լ է յոյժ ՚ի քաղաքի այ մերոյ. ՚ի լեառն սբ՛ նորա։

Հաստատեալ ցնծութեամբ՝ ամենայն երկիր. լերինք սիոնի. կողմանք հիւսիսոյ՝ քաղաք թագաւորին մեծի։

Այ ՚ի տաճարի իւրում յայտնի. ՚ի ժամանակի, որպէս օգնական լինէր նոցա։

Զի ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան. և անցին ՚ի միասին։

Նոքեանք տեսին այսպէս և զարմացան. խռովեցան սասանե-

ցան. և դողումն կալաւ զնոսա։
Ա՛նդ երկունք որպէս 'ի ծնըն-
դեան. 'ի հողմն սաստիկ, փշրես-
ցէ զնաւս 'ի Թարսիս։
Որպէս լուաք, այնպէս և տե-
սաք 'ի քաղաք տն՛ զօրութեանց
'ի քաղաք այ մերոյ։
Ա՛ծ զհիմունս եարկ 'ի նմա յաւի-
տեան. ընկալաք ա՛ծ՛ զողորմու-
թիւնս քո՝ 'ի մէջ ժողովրդեան քո
✠ Փ՜ անդխստ։ ✠
Ըստ անուան քում. այնպէս
և օրհնութիւն քո ընդ ամ՛ տիե-
զերս. և արդարութբ լի է աջ քո
Ուրախ եղիցի լեառն սիոն. և
ցնծասցեն դստերք յուդայ. վն՛
իրաւանց քոց տր։
Շրջեցարուք զսիոնիւ պաշտ

Ժողովդ

պանեցէ՛ք նմայ. և պատմեցէք
զաշտարա՛կս նորա :
Դի՛ք զսիրտս ձեր ՚ի վե՜ր զօրու-
թեա՛նց նորա. և բաժանեցէք
զամրո՛ւրս նորա. զի պատմե՛լ կա-
րասջի՛ք յա՛զգ այլ:
Սա՛ է Ա՜ծ, Ա՜ծ մեր յաւիտեա՛նս
յաւիտենից. և սա՛ հովուեսցէ
զմեզ՝ մինչև յաւիտեան.

Տունք. ժզ:



Լուարուք պատգամացն այ ծնունդք և
ազգք երկրայինք ։

Ի կատարած որդւոցն կորխայ: սաղմոս օրհնութե՟ դա՟ւթի:

ԽԸ

առակս զբերանն իմ.
և խօսցից

Լուարո՛ւք զայս՝ ա՟մ ազգք, և ունկնդի՛ր լերուք ամենեքեան որք բնակեալքդ էք յաշխարհի:

Որ ծնո՛ւնդք երկրի, և որդիք մարդկան. ՚ի միասին մեծամե՛ծք և տնանկք:

Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն. և խորհուրդ սրտի իմոյ զհանճար:

Խոնարհեցուցից յառակումն զո՛ւնկն իմ. բացից զառակս օրհնութեամբ ՚ի սկզբանէ:

Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի. զի անօրէնութիւնք գնացից իմոց շո՛ւրջ եղեն զինև

 Յու

Յուսացեալքն 'ի քեզ զօրութե՟
իւրեանց. 'ի բազմութիւն մեծու
թեան իւրեանց պարծեսցին։
Եղբայր ո՛չ փրկէ՝ և ո՛չ փրկէ մարդ
և ո՛չ տայ ա՟յ զփրկանս իւր. և ո՛չ
զգի՛նս փրկանաց անձի՛ն իւրոյ։
Վաստակեա՛ց յաւիտեան՝ և կեց
ցե՛ս մինչ իսպառ. և ո՛չ տեսցես
զապականութիւն։
Յորժամ տեսցես թէ իմաս
տունք մեռանին, միասին անզ
գա՛մք և անմիտք կորիցեն. և թող
ցեն օտարաց զմեծութի՟ իւրեանց։
Գ. երեզմա՛նք նոցա տո՛ւնք նոցա
եղիցին յաւիտեան. և յա՛րկ քն՟ց
ազգէ մինչև յազգ՝ և կարդաս
ցին անուանք նց՟ 'ի հո՛ղս իւրց՟։
Մ՝արդ 'ի պատուի՛ էր և ո՛չ իմա

ցաւ . հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և նմանեցաւ նոցա ։

Այս ճանապարհէ գայթագղութե՟ նոց՟ նոցին . յետ այսորիկ՝ բերանովք իւրեանց հաճեսցին ։

Որպէս խաշն ՚ի դժոխս մատնեսցին . և մահ հովուեսցէ զնոսա և տիրեսցեն նոցա ուղիղք՝ ընդ առաւօտս ։

Օգնութիւնք նոցա մաշեսցին ՚ի դժոխս . և ՚ի փառաց իւրեանց անկցին ։

Բայց սակայն՝ Ած փրկեսցէ զանձն իմ ՚ի ձեռաց դժոխոց ։ յորժամ ընդունիցի զիս ։

Մի երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ . և յորժամ բազմասցին փառք տան նորա ։

Զի ո՛չ թէ՛ ՚ի մեռանե՛լն իւրում առցէ՛ ընդ իւր զա͞մ. և ո՛չ թէ՛ իջցե՛ն փառք տանն նորա ընդ նմա։

Զի անձն նո͞ր՝ ՚ի կեա՛նս իւրում օրհնեսցի. և խոստովա՛ն եղիցի քեզ՝ յորժամ բարի՛ արասցես դու նմա.

Մտցէ նա մինչև յազգ հա՛րց իւրոց. և մինչև յաւիտեան զլոյս մի՛ տեսցէ։

Մա՛րդ ՚ի պատուի՛ էր, և ո՛չ իմացաւ. հաւասարեցաւ անասնո՛ց անբանից՝ և նմանեցաւ նոցա։

Տունք ։ Ե ։

Գ. ուբղայս խբ. Տունէ ։



Ա՜Ծ խօսելով կոչէ 'ի դատաստան զա-
զգս որդւոց մարդկան ։

ճե

✠ խթ

Աստուածոց, տ͞ր խօսեցաւ. եւ կոչեաց զերկիր՝ յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու։ Ի սիօնէ մեծ վայելչութիւն փրկութեան գեղոյ նորա։

Ա͞ծ մեր յայտնապէս եկեսցէ. եւ ա͞ծ մեր մի դադարեսցի։

Հուր առաջի նորա բորբոքեսցի. եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։

Կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ՝ եւ զերկիր, ՚ի դատել զժողովուրդ իւր. ժողովել առ ինքն զսուրբս իւր. եւ որք դնեն զպատարագս

ուխտից ՚ի վերայ մեղանաց նորա:
Պատմեսցեն երկինք զարդարու-
թիւն նորա. զի ած դատաւոր է:
Լուր ժողովուրդ իմ՝ և խօսե-
ցայց ընդ քեզ. ևի սրայէլ՝ քեզ
վկայեցից. զի ած, ած քո ես եմ:
Ոչ թէ վասն պատարագաց քոց
կշտամբեմ զքեզ. զի ողջակէզք
քո առաջի իմ են յամ ժամ:
Ոչ ընդունիմ ՚ի տանէ քումմէ
զուարակս. և ոչ ՚ի հօտից քոցնո
խազս:
Իմ է ամ գազան անտառի. երէ
լերանց՝ և ամենայն անասուն:
Գիտեմ ես զամ թռչունս երկ
նից. և գեղեցկութի վայրի՝ ընդ իս է
Եթէ քաղցեայց. քեզ ինչ ոչ ասա
ցից. զի իմ է աշխարհ լրիւ իւրով

Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակա՛ց քոց. և ո՛չ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։

Մատո̃յ պատարագ զօրհնութե̃ն և կատարեա՛ բարձրելոյն զո՛ւխտս քո։

Կարդասցես առ իս յաւուր նեղութե̃ քո. ես փրկեցի՛ց զքեզ՝ և դու փառաւո՛ր արասցես զիս։

Սա՛կայն՝ մեղաւորին ասէ̃ ա̃ծ. իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ. կամ առնուս զուխտ իմ՚ի բերա՛ն քո։

Զի դու ատեցե՛ր զխրատ իմ. մերժեցե՛ր և յետս ընկեցեր զամենայն բանս բերանո՛յ իմոյ։

Եթէ տեսանէի՛ր զգող՝ ընթանայէ՛ր ընդ նոսա. և ընդ շո՛ւնս դնէիր զբաժին քո։

Բ՝երան քո յաճախե՛ր զչրու͞ն
և լեզու քո նիւթէ՛ր զնենգու͞թն
Նստեալ զեղբօրէ քումմէ չա
րախօսէիր. և՛ ի մ͞ջ որդւո՛յ մօր քո
դնէիր զգայթագղութիւն:
Զ՛այդ ա͞մ արարեր՝ և ես լռե
ցի քեզ. կարծեցեր անօրէնդ՝ ՚ի
մտի քում. թէ ե՛մ քե՛զ նման իցեմ:
Յ՛անդիմանեցից՝ և կացու
ցից զա՛յս ա͞մ առաջի քո. իմացա
րո՛ւք ամենեքեան, որք՝ մոռա
ցեալ իցէք զա͞ծ:
Գ՝ուցէ՛ երբէք յափշտակեսցէ
և ո՛չ ոք իցէ որ փրկեսցէ:
Պատարագ օրհնու͞թե փառաւո͞ր
ո՛ր արասցէ զիս. և անդ է ճանա
պարհ. ուր ցուցի՛ց նմա զփրկու
թիւն ա͞յ:



Նաթան մարգարէն յանդիմանէ զդաւիթ վն բերսաբեէ․ և վն սպանմանն ուրիայէ։

Ի կատարած սաղմոս դա՜Թի : 'ի ժամանակի զի եկն առնա նաԹա՛ն մարգարէ . երբ զի մտեա՛լ էր նա առ բերսաբէ է :

---

ծ [illegible]

Ողորմեա՛ ինձ Ա՜Ծ՝ ըստ մեծի ողորմութեան քում. և ըստ բա զու՛մ գԹութեան քո՜մ, քաւե՜ա զանօրէնութիւնս իմ.

Առաւե՛լ լո՜ւա զիս յանօրէնութենէ՛ իմ մէ. և 'ի մեղաց իմոց տէ՛ր արա զիս :

Զանօրէնութիւնս իմ ես ինձէ՛ն գիտեմ. և մեղք իմ առաջի ի՛մ են յամենայն ժամ:

Քեզ միա՛յն մեղայ տէր . եւ չա՛ր առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո. և յաղթօղ ի դատել զքեզ:

Անօրէնութեամբ յղացայ. և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու տէր՝ զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս՝ իմաստութեան քո յայտնեցեր ինձ:

Ցօղեսցես յիս մշտկաւ և սուրբ եղէց լուա՛. և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո՛ 'ի մեղաց իմոց և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Օ սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած. և զհոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում:

Ծ: ԳԹ

Մ՛ի՛ ընկենուր զիս ՚ի երեսաց քոց. և զհոգի քո սուրբ, մի՛ հաներ յինէն:

Տուր ինձ զցնծութիւն փրկութեան. և հոգւով պետութեամբ քով հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քե՛զ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ ա՛ծ, ա՛ծ փրկութե՛ իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեա՛ն քում:

Տ՛ր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս ի՛սկ ո՛չ հաճեցար:

Պատարագ ա̃յ հոգի՛ խոնարհ
զսի՛րտ սր̃բ եւ զհոգի՛ խոնարհ, ա̃ծ
ո՛չ արհամարհէ ։

Բարի՛ արա տ̃ր կամօք քով
սիօնի . եւ շինեսցին պարիսպք
երուսաղէմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պա
տարա՛գս արդարութեան . յոր
ժամ ուխտեալ զոհարանն ելցէ
’ի սեղան քեզ պատարագս ։

Տունք . Է ։



տից պատ̃գս հն̃ցեն ’ի սեղան քո



Դաւիթ կախեցաւ ՚ի պատուհանէն. և
փախեաւ ՚ի ձեռաց սաւուղայ։ 250

Ի կատարած իմաստութե՟ սաղ
մոս դաւթի: ՚ի ժամանակի զի
եկն դովեկ և պատմեաց
սաւուղ՚այ. եթէ ահաւ
ասիկ դաւիթ ՚ի տան
աբիմելէքայ է:

---

Զ ի՞պարծի ՚ի չարութե՟. հզօրն
յանօրէնութե՟. զօր հանապազ զա
նիրաւութիւն խօսեցաւ ՚ի լե
զուի իւրում:

Որպէս զածելի սուր՝ սրեա՛ց
զնենգութի՟ի. սիրեաց զ չարութի
քա՛նզ բարութիւն. և զանօրէնու
թի՟ քանզ խօ՛սս արդարութե՟:

Սիրեա՛ց նա զա՟մ խօ՛սս կործան
ման. և զ լեզո՛ւս նենգաւորս:

Վասն այսորիկ՝ ա՟ծ կործանեսցէ

զնա իսպառ . խլեսցէ և հանցէ
զնա յարկաց . և զարմատս նորա
յերկրէն կենդանեաց ։

Տեսցեն արդարք և երկիցեն.
զնմանէ ծիծաղեսցեն և ասասցեն
Ահա այր է, որ ոչ արար զած իւր
օգնական . այլ յուսացաւ սա ՚ի
բազում մեծութիւն իւր. և զօրա
ցաւ ՚ի նանրութեան իւրում։

Այլ ես որպէս ձիթենի պտղա
լից ՚ի տան այ . յուսացայ յողոր
մութիւն այ. յաւիտեան և յաւի
տեանս յաւիտենից։

Խոստովան եղէց քեզ տր յաւի
տեան զի արարեր . և համբերից
անուան քում. զի քաղցր ես առա
ջի սրբոց քոց ։

Տունք Է Պուբղայս ԾԶ տունէ։



Ի։ պականեցին անդդամք անօրէնութե՛
զանձինս իւրե՛ց։

ծբ

Ի կատարած վասն մաղաղեթայ իմաստութիւն Դաւթի։

Ասա՛ց անզգամն 'ի սրտի իւրում թէ ո՛չ գոյ ա՟ծ. ապականեցա՛ն և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն։

Տ՟ր յերկնից նայեցա՛ւ յամենայն որդի՛ս մարդկան. տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ՛ զա՟ծ։

Ամենեքեան խոտորեցա՛ն 'ի միասին. և անպիտանացան։

Ո՛չ ոք է որ առնէ զբարի. և ո՛չ է՛ ոք՝ մինչև 'ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենե-
քեան. որք գործեն զանօրէնու-
թիւն:

Որք ուտեն զժողովուրդ իմ որ
պէս զկերակուր հացի. և զտէր
ած ոչ կարդացին: Ղուկի Տէղ

Անդ երկիցեն երկիւղիւ ուր
ոչ էիցէ երկիւղ. զի ած ցրուեսցէ
զոսկերս մարդահաճոյից:

Ամաչեսցեն և յամօթ լիցին. զի
ած անարգեաց զնոսա:

Ո՞ տացէ 'ի սիոնէ զփրկութիւն
իսրայելի. 'ի դարձուցանել տն
զգերութիւն ժողովրդեան իւ-
րոյ. ցնծասցէ յակոբ՝ և ուրախ
եղիցի իսրայէլ:

Տունք. Թ:



Ադոնիբեզեկ զի փախուցեալ կալան զդաւրն
ծղ

Ի կատարած ընդ օրհնութեան դաւթի։ Ի ժամանակին զի եկին զիփացիքն. եւ ասէին ցսաւուղ՝ ահա դաւիթ թագուցեալ նստի առ մեզ

✠ ԾԳ ✠ Ա

Ա՟Ծ յանուն քում կեցո զիս. եւ ի զօրութ՟ե քում իրաւ արա ինձ։

Ա՟Ծ լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Զի օտարք յարեան ի վերայ իմ. եւ հզօրք խնդրեցին զանձն իմ. եւ ոչ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց։

Ահա ա՟ծ օգնական իմ. եւ տ՟ր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ. ճշմարտութ՟բ քով սատակեա զնոսա։

Եւ կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում, Տէ՛ր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցե՛ր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Տունք. է.



Համեմատելով բանին զոր՝ եւ վեցերորդ
տան սաղմոսերգ ասէ մարգարէն Դաւիթ,
ասէ՝ տայր ով ինձ զթեւս որպէս
աղաւնւոյ։ 259

Ի կատարած ընդ օրհնութիւնս իմաստութեան սաղմոս դաւթի։

ծդ

Ունկնդիր Աստուած աղօթից իմոց. և մի անտես առներ զխնդրուածս իմ.

Նայեաց առ իս և լուր ինձ. զի տրտմեցայ ես 'ի ձանձրանալ իմում. և խռովեցայ։

Ի ձայնէ թշնամւոյն և 'ի նեղել մեղաւորին խոտորեցան յիս անիրաւութիւնք. և բարկութեամբ ոխս պահէին ինձ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս. և երկեւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։

Ահ և դողումն եկն 'ի վերայ իմ. և ծածկեաց զիս խաւար։

Ասէի տայր ոք ինձ զթեւս որպէս

ղա՛նուոյ. զի թուչէին վերանայի. և
հեռացեն դադարեին յանապատի։
Ա՛կն ունէի յայ̃մ, որ փրկէր զիս
՚ի կարճ մտութենէ. և ՚ի խզայրանա
լոյ մրրկեալ յինեղ սրտութենէ ։
Ընկլո՛ տէր՝ և բաժանեա՛ զլեզուս
՚նց̃. զի տեսի զանօրէնութի̃.
և զհակառակութիւն ՚ի քաղաքի
Ի տուէ և ՚ի գիշերի շուրջ եղեն
զպարսպօք նց̃ անօրէնութի. չա
րիք և մե՛ղք են ՚ի մէջ նոցա. և ո՛չ
պակասեա՛ց ՚ի հրապարակա՛ց նց̃
վա՛շխ և նենգութիւն ։
Ո՛ թէ թշնամի՛ն նախատեա
լէր, համբերեի արդեօք. և կամ
ատելեոյն մեծաբանեա՛լ էր ՚ի վե̃ր
իմ, թաքչէի արդեօք ՚ի նմանէ
Ի՛սկ արդ՝ դու մարդ հաւասար

իմ. առաջնո՛րդ իմ և ծանօթ իմ:
Մ·պա՛յքէն՝ ՚ի՛նոյն քաղ ցրացու
ցեր՝ ինձ և քեզ կերակուր. զի
գնայա՛ք միաբանութեամբ ՚ի տան այ
Եկեսցէ մա՛հ ՚ի վերայ նոցա. և
կենդանւո՛յն իջցեն ՚ի դժոխս. զի
չարութիւնք ՚ի բնակութեան նոցա
և ՚ի մէջ նոցա:
Ես առ ած կարդացի՝ և լուա՛ւ
ինձ. յերեկո՛յս՝ ՚ի վաղորդա՛յն և
՚ի հասարա՛կ աւուր:
Պատմեցի՛ և ասացի՛ և լուիցէ՛
ձայնի իմում. փրկեսցէ ՚ի խաղա
ղութեամբ զանձն իմ ՚ի մերձաւորա՛ց
իմոց. զի կարեօք հասին ՚ի վր իմ:
Լուիցէ ած՝ և խոնա՛րհ արասցէ
զնոսա. որ յառա՛ջն է քանզ յաւի
տեանս:

Զի ոչ գոյր նոցա փոխանակ.
եւ ոչ երկեան յԱյ։
Ձգեաց զձեռն իւր ՚ի հատու-
ցանել նոցա՝ եւ նոքա պղծեցին
զօրէնս նորա։
Բաժանեցան ՚ի սրտմտութենէ
երեսաց նորա. եւ էհաս ՚ի
սիրտս նոցա։
Կակուղ էին բանք նոցա քան զ-
ձէթ. եւ նոքեանք որպէս սլաք։
Ընկեա՛ ՚ի Տր զհոգս քո եւ նա կե-
րակրէ զքեզ. եւ ոչ տայ յաւի-
տեան զսասանութիւն արդարոյն։
Դու Այ՝ իջուսցես զնոսա ՚ի գուբ
ապականութեան. արք արիւնա-
հեղք եւ նենգաւորք. մի՛ հասա-
րակեսցեն զաւուրս իւրեանց.
այլ ես ՚ի քեզ Տր յուսացայ։



Ե՛լ հուր յորթոյն որ ՚ի ձեռս սուտ մար
գարէիցն. եւ այրեաց զնոսա։ 264

# Իան Մօսիսէ Մարգարէի։

Զի հո՛ւր բորբոքեցա՛ւ 'ի բարկութենէ իմմէ. այրեսցէ եւ իջցէ մինչ 'ի դժո՛խս ներքինս։

Կերիցէ զերկիր՝ եւ զա͞մ բոյս երկրին նց. վառեսցին հրով. եւ բորբոքեսցին հիմունք լերանց նոցա։

Կուտեցից զ չարիս ա͞մ 'ի վերա նոցա. եւ նետովք իմովք՝ սպառեցից զնոսա։

Մաշեսցին եւ հիւծեսցին 'ի սովու գազանաբեկ. գէշ անկեալ ա͞մ թռչնոց երկնից։

Լա՛րս առանց բժշկութ͞ե արձա

կեցից 'ի վ̅ր նոցա . զգազանս անա
պատի . որք այսր՝ և անդր՝ քար
շեսցեն զնոսա ընդ երկիր :

Արտաքուստ մանկակորոյս ա
րասցէ զնոսա սուր, և 'ի ներքուստ
'ի շտեմարանաց նոցա՛, ահաւոր
հարկե՛րք ահից:

Օ երիտասարդս , ծ կուսանօք
համանդերձ. և զտղայս, հասասատե
լօ՛ք ծերօք համանդերձ :

Ասացի՛ թէ ցրեցի՛ց զնոսա . և
դադարեցուցից զյիշատակս նց̃
յազգաց :

Թէ ո՛չ՝ վասն բարկութե̅ սրտ
մտութե̅՛ թշնամւոյն . զի մի՛ եր
կայնակեացք եղիցին . և մի՛ բարձ
րասցին . հպարտասցեալ թշնա
միքն և ասասցեն :

Եթէ ձեռն մեր բարձրէ և բա
զուկ մեր հզօր. և ո՛չ տր ած ա
րար զա՛յս ամ:

Զի ազգմի խորհրդակորո՛յս
էնոքա. և ո՛չ գոյ ՚ի նոսա իմաստու
թի. և ոչ խորհեցան ՚ի միտ առ
նուլ զա՛յս ամ. և ա՛րդ՝ ընկալցին
զամօթ յանձինս իւրեանց:

Զարմանք մի մեծ ա՛յս են.
զիա՞րդ մին զհազարս հալա Ն
ծեսցէ. կամ երկուք զբե՛ւրս շար
ժեսցեն:

Եթէ ո՛չ ածն իւր մատնեալէր զնո
սա, և տուեա՛լ իցէ զնոսա, ՚ի
ձեռս թշնամեաց նց:

Զի ո՛չ են դիք նոցա որպ զած
մեր. այլ թշնամի՛ք մեր վատախոր
հուրդք:

Յայգուն առաւօտայ երթ նոցա
և տունկք նոցա ՚ի դամբարայ։
Խաղող նոցա խաղո՛ղ դառնու-
թեան. և ողկո՛յզ նոցա ՚ի դառնու-
թեան լեղւոյ։
Սրտմտութի՛ւն բարկութե՛ան վիշա-
պաց. գինի նց սրտմտութի՛ւն իժից
անհնարի՛ն առանց բժշկութե՛ան։
Ո՛չ այս ա՛մ ժողովեա՛լ է առ իս.
կնքեալ և պահի ՚ի գանձի իմում։
Յաւուր վրիժուց հատուցման,
հատուցից նոցա. ՚ի ժամանակի,
յորում հարցի զքայլի ո՛տն նց։
Մե՛րձ է օր. կորստեան նոցա
հասեա՛լ է պատրաստութեամբ
ա՛ռ ՚ի վերայ նոցա։
Դատէ՛ տ՛ր զժողովուրդ իւր.
և ՚ի ծառայս իւր մխիթարի։

Զի ետես զնոսա լքեալս. և լու
ծեալս. և մատնեալս ՚ի գերութիւն
Եւ ասացէ Տր՝ ո՞ւր են դիքն ձեր՝
յորս յուսացեալ էիք դուք ՚ի նո
սա. զորոց զճարպ սպանդեցն ու
տէիք. և ըմպէիք զգինի զոհիցն
Արդ՝ յարիցեն օգնեսցեն. և
եղիցին ձեզ թիկունք։

✠ Նորին Մովսէսի։ ✠

Զանէրո՛ւք և տեսէք՝ զի ես եմ.
և ո՛չ գոյ այլ Ած, բա՛ց յինէն։
Ես սպանանեմ՝ և ես կեցուցա
նեմ. հարկանեմ, և ես բժշկեմ. և
ո՛չ ոք իցէ՝ որ հանիցէ զձեզ ՚ի ձե
ռա՛ց իմոց։

Համբարձից յերկինս զձեռս իմ.
երդուեայ աջո՛վ իմով. և ասացից
թէ, կենդանի եմ ես յաւիտեան

Սրեցից որպէս փայլակն զսու-
սեր իմ. և ՚ի խնդրե՛ր վրիժուց,
արձակեցից զա՛ջ իմ:

Հատուցից զհատուցումն թշնա-
մեաց իմոց. և ատելեա՛ց իմոց՝
հատուցից զհատուցումն նոցա,
նոցին:

Արբեցուցից զնետս իմ յարենէ
նոցա. և սուր իմ կերիցէ մի՛ս. յա-
րենէ վիրաւորելոց. գերելոց
գլխո՛ց՝ իշխանաց՝ թշնամեացնոց:

Ուրա՛խ եղիցին երկինք նովաւ.
և երկի՛ր պագցեն նմա, ա՟մ որ-
դիք ա՟յ:

Ուրա՛խ եղերուք հեթանոսք
ընդ ժողովրդեան նորա. և զօ-
րացուսցեն զնա ա՟մ հրեշտակք ա՟յ:

Խնդրելո՛վ խնդրեսցէ վրէժ ար-
եան

եան որդւոց նոց̃. և հատուցումն
թշնամեաց նոց̃ հատուցանէ նոցա:
Հ ատուցումն ատելեաց նոցա
հատուցանէ նոցա. և սրբեսցէ տէր
զերկիր ժողովրդեան իւրոյ:

---

Դ ու ես տէր մեր՝ դու ես ք̃ս Զո̃
փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք
մեր: Մ արդասէր տէր վասն
սրբուհւոյ անարատ մօր քո
և կուսի. և վասն խաչի քո պա
տուականի. ընկալ զաղաչանս տէր
մեր և կեցո զմեզ:
Ր արող մի նախանձիրեն և խոս
տովանեն:
Մ ս̃ ուղղելոյ զգնացս մեր՝ ի ճա
նապարհս խաղաղութեան՝ զտէր՝ ա
ղաչեսցուք:

Վ՟ն ցրւելոյ ՚ի մէնջ, զա՟մ խորհր՛դս չարին, զ՟տր աղաչեսցուք:

Վ՟ն պարգեւելոյ մեզ առո՛ղջ խորհուրդս՝ եւ առաքինի՛ վարս՝ զ՟տր՛ :

Վ՟ն պահելո՛յ զմեզ՝ ընդ հովանեաւ ամենազօ՛ր աջոյն իւրոյ. զ՟տր աղաչես:

Վ՟ն խորտակելո՛յ զհակառակորդն՝, վաղվաղակի ընդ ոտի՛ւք մերով. զ՟տր աղ:

Վ՟ն հոգւո՛ցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ՚ի ք՟ս ննջեցին զ՟տր:

Եւս եւս՝ եւս միաբանութե ճշմարիտ եւ ս՟բ՛ հաւատոյս մերոյ զ՟տր:

Զանձի՛նս մեր՝ եւ զմիմեանս, տ՟ն ա՟յ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ տ՟ր ա՟ծ մեր, ըստ
մեծի ողորմութեան քում. սաստ
ցուք ամենեքեան միաբանութ՟ք
տ՟ր ողորմեաց տ՟ր ող։

Տէր երկնի և երկրի արարիչ ա՟մ
արարածոց. երևելեա՛ց և աներ
ևութից՝ առ քե՛զ կարդամք յա՟մ
ժամ. զի ընդ ա՟մ տեղիս է տէրու
թ՟ի քո. և արքայութ՟ի քո ամե
նեցո՛ւն տիրէ։ Շնորհեա՛ մեզ
երկիւղիւ՛ ՚ի պաշտօն քո կանխել
հանապազ։ սիրել զքեզ ՚ի բոլո՛ր
սրտէ ՚ի բովանդա՛կ մտաց և յա՟մ
զօրութենէ՛ մերմէ՛. պահե՛լ ըզ
պատուիրա՛նս քո. Համբառնալ
առ քեզ զձե՛ռս մեր ՚ի սրբութ՟ի
առա՛նց բարկութ՟ե և երկմտու
թ՟ե. Եւ գտանել ՚ի քէն զշնո՛ր

հս և զողորմութի. և զաւաքինա
սէր գործոյաջողութի. Ո՛վ զի՛
դու ես տր կենաց՝ և ած ողորմու
թե. և քե՛զ վայելեն, փա՛ռք իշ
խանութի և պատուէ այժմ և։

Խաղաղութի ամենեցուն։

Տ. ուժ ամենազօր և յաղթօ՛ղ
տրութեդ՝ կրկնի ամ ծունր յեր
կրպագութի. և փառաւորի յամե
նեցունց թագաւորութի քո։
Նայեա՛ց յերկրպագութե՛ս
մեր՝ և ուսո՛ մեզ առնել զարդա
րութի ճշմարտութե. Ո՛վ զի՛
դու ես ած խաղաղութե՛ որ բար
ձեր զթշնամութի՝ ի միջոյ. և արա
րեր զխաղաղութի յերկինս և
յերկրի։ Դու հեռաւորաց և մեր
ձաւորաց աւետարանեցեր զնո՛ր

պարգևս քոյին բարեացդ.
Սուրբ և զօրեղ մեծի շնորհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քոյ. ած մեր՝ և տէր. և փրկիչ յս քս:
Որ ես օրհնեալ ընդ հօր և սբ հոգւոյդ. այժմ և միշտ. և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
Յերգս օրհնութեան՝ և ի ձայն սաղմոսաց. անդադար փառաւորեմք զ հայր և զորդի և զ սբ հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:
Կանոն բովանդակ. ժթ. փոխել և յժը տուն: իսկ յետին փառքն չեն յայսմ հաշուի:

Է որկ ընդ երգով



Յեզաբէլ. զն կոխեցին զդաւիթ ՚ի գեթ ։

՚Ի կտրծ վն ժղվրդեանն. որք ՚ի սրբոյն հեռացեալք էին: ՚ի ժամանակի զի կալան զնա այլազգիքն ՚ի գեթ: յարձանագիր սաղմոս դաւթի:

ՈՂՈՐՄԵԱՅ ինձ տր զի կոխեաց զիս մարդ՝ և զօր համապազ պատերազմունք նեղեցին զիս:

Կոխեցին զիս թշնամիք իմ զօր հանապազ. և բազումք էին որք մարտնչէին ընդ իս 'ի բարձանց:

Յաւո՛ւրն ես ո՛չ երկեայց՝ զի 'ի տ͞ր՛ յուսացայ. աստուծով գովեցից զբանս իմ. յա͞ծ՛ յուսացայ և ո՛չ եր կեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

Զօր հանապազ զբանս իմ անար գեցին. և զինէն էին խոր հուրդք նոցա 'ի չարութեան:

Պանդո՛ւխտք եղիցին և թաք‑ թաքո՛ւրք շրջեսցին ն͞ք՝ գարշա պարի իմում սպասեսցեն՝ ո͞պ և սպասէին անձին իմոյ:

Որպէս առ ոչի՛նչ մերժեսցես զնոսա. և բարկութեամբ զժողո վուրդս հնազանդեսցուսցես:

Ա͞ծ զկեանս իմ պատմեցի՛ քեզ.

Եդիր զարտասուս իմ առաջի՛
քո. ոչ խոստացար դու ինձ։
Դարձցին թշնամիք իմ յետս իւր
եանց. յաւուր յորում կարդա
ցուք առ քեզ։
Ահա ծանեայ զի Ած իմ ես դու
զԱծ օրհնեցից ՚ի բանս իմ. եւ զՏր
գովեցից ՚ի խօսս իմ. յԱծ յուսա
ցայ եւ ոչ երկեայց՝ զի՞ արասցէ
ինձ մարդ։
Յինէն են ուխտք իմ. զոր տաց
քեզ Ած օրհնութեամբ։
Փրկեցեր զանձն իմ ՚ի մահուանէ
զաչս իմ յարտասուաց. եւ զոտս իմ
՚ի գայթագղութենէ. հաճոյ ե
ղէց առաջի Տն յերկրին կենդա
նեաց։

Տունք ժա.



Դաւիթ փախչի յերեսաց սաւուղայ
առ՚ իթաքչիլ ։

Ի կատարած մի՛ ապականեր․ Դաւ-
թի յարձանագիր ։ ՚ի ժամանակի զի
փախուցեալ թագուցեալ էր
նա․ յերեսաց Սաւու՚ղայ
յայրն անդ ։

---

Ողորմեա՛ց ինձ Աստուած ողորմեա՛ց ինձ․
զի ՚ի քեզ յուսացաւ անձն իմ ։
Ի հովանի թևոց քոց յուսացա՛յց․
մինչև անցցէ անօրէնութիւն ։
Կաղաղակեցից առ Աստուած բարձրեալն
առ Աստուած բարերար իմ ։
Առաքեաց յերկնից և կեցոյց
զիս․ ետ ՚ի նախատինս որք կո- ԾԷ
խէին զիս ։
Առաքեաց Աստուած զողորմութիւն և
զճշմարտութիւն իւր․ և փրկեաց

զանձն իմ՝ ՚ի մէջոյ գազանաց. զի
ննջէի ես խռովեալ:

Որդւո՛ց մարդկան, ատամունք իւրեանց զէ՛ն և նե՛տք են. և լեզո՛ւք նոցա որպէս զսուր սուսերս:

Բարձրեա՛լ ես դու յերկինս ա͞ծ. և յա͞մ երկրի են փա՛ռք քո:

Որոգա՛յթս պատրաստեցին ոտից իմոց. և խո՛նարհ արարին զանձն իմ. փորեցին առաջի իմ զխո՛րխորատ՝ և անկան ինքեա՛նք ՚ի նոյն:

✠ Հանգիստ: ✠

Պատրա՛ստ է սիրտ իմ ա͞ծ. պատրա՛ստ է սիրտ իմ. օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք:

Զարթի՛ր փա՛ռք իմ, զարթի՛ր սաղմոսիւք և օրհնութեամբ. և ես զարթեայց առաւօտուց:

Խոստովան եղէց քեզ ՚ի ժողովուրդս տր․ և սաղմոս ասացից քեզ յազինս։

Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւնք քո․ և մինչև յամպս ճշմարտութիւնք քո։

Բարձր եա՛լ ես դու յերկինս ած․ և յա՛մ երկրի են փառք քո՛։

Տունք ճդ։



Մ՛րդւար խօսեցէք սաէ եւ մի փակէք զուռնիս
ձեր ողջ իժ էց ։

Ի կատարած մի՛ ապականեր յար
ձանագիր սաղմոս դաւթի ։ ԾԷ

Եթէ արդարև զարդարութիւն
խօսէիք . ուղիղ դատէիք
որդիք մարդկան ։
Քանզի և արդ խոկ, ՚ի սրտի ձե
րում զանօրէնութիւն գործէք . Է
և յերկրի զանիրաւութիւն ձեռք
ձեր նիւթեն ։
Օտարք եղեն մեղաւորք ՚ի մօ
րէ . խաբեցան յարգանդէ, և խօ
սեցան զսուտ ։
Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան
օձի՝ որպէս իժի և քարբի . զի
խցեալ է զականջս իւր ։
Զի մի՛ լուիցէ նա զձայն՝ թովչի՛
ճարտարի . և մի՛ առցէ դեղ՝ ի դե
ղատուէ իմաստնոյ ։ Ած

Մի՛ փշրեսցէ զատամունս նոցա
'ի բերանս իւրեանց. եւ զժանիս
առիւծուց խորտակեսցէ տէր :

Նուաղեսցին նոքա որպէս
ջուր զի հեղանի. 'ի լարել աղեղան
նետ տկարասցին ոպ՟ մոմ, զի հալի,
եւ սպառեսցին :

Անկաւ հուր՝ եւ ոչ տեսին զարեւ
մինչ չէ՛ 'ի միտ առեալ էր զփուշս
իւրեանց. եւ որպէս դժնեա՛կ բար
կութեամբ՝ կենդանւոյն կլցէ
զնոսա :

Ուրախ եղիցի արդարն յորժամ
տեսցէ զհատուցումն. եւ զձեռս
իւր լուասցէ յարեան մեղաւորի:

Ասասցէ մարդ. թէ արդարեւ
գուցէ պտուղ արդարոյ. եւ է՛
ած՟՝ որ դատէ զնոսա յերկրի :



ւաճիթ համբարձեալ զձեռան դուղէ
առ. տէր փրել իթշնամեաց ։

Ի կտրծ մի ապականեր. Դաւթի
յարձանագիր։ 'Ի ժմնկի զի սաւ
ուղ' առաքեաց եւ պաշարեաց
զքաղաքն նորա. զի սպանցէ
զնա սաղմոս Դաւթի։



րկեա զիս 'ի թշնամեաց
իմոց ած, յայնցանէ որք
յարուցեալքեն 'ի վերայ
իմ, ապրեցո զիս։
Փրկեա զիս յայնցանէ,
ոյք գործեն զանօրէնութի. յա
րանց արիւնահեղաց ապրեցո
զիս։
Որսալ զանձն իմ կամեցան.
եւ հասեն 'ի վերայ իմ հզօրք։

Դարձցի՛ն ընդ երեկոյս․ սովես
ցի՛ն որպէս շո՛ւնք․ եւ շրջեսցի՛ն
զքաղաքաւ։
Նոքա սփռեսցին յուտե՛լ․ ա՛պա
թէ ո՛չ յագեսցին, տրտնջեսցեն
Եւ ես օրհնեցից զօրհնութի՛ս տն
եւ ցնծացայց յառաւօտուն յողոր
մութեամբ քով։
Զի դու ե՛մ պաշտպան՝ եւ տուն ա-
պաւէնի․ յաւուր նեղութեան
իմոյ օգնակա՛ն իմ։
Քեզ սաղմո՛ս ասացից՝ ած ա
պաւէ՛ն իմ․ ած ողորմութեան
իմոյ։

Տունք ժա։



Հրձիգ արար դաւիթ զասորեստան ։

Ի կտրծ զառանցելոց ժմնկց. առ ուսմանէ ։ 'ի ժմնկի զի հրձիգ արարին զմիջագետս. եզասորես տաննն սոբողայ ։ Եւ 'ի դարձին հարկանէր յովաբ զձորն աղտեց յերկոտասան հազարս ։ արձանագիր դաւթի ։ ✠ ճթ ✠

---

Ած մերժեցեր եւ աւերեցեր ըզ մեզ. բարկացար, եւ գթասցես 'ի մեզ ։ Շարժեցեր զերկիր եւ խռովեցուցեր զնա. բժշկեա զհարուածս նորա՝ զի սասանեցաւ ։ Ցուցեր ժողովրդեան քում ըզ խստութի. եւ տուեր ըմպել մեզ զգինի յիմարութեան ։ Տուեր երկիւղածաց քոց զնշան զի ապրեսցին յերեսաց աղեղան ։

 Ան

ցնծացին

յերգոմ

ծվ

✠ Հանգիստ ✠

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քո՛ և լո՛ւր մեզ:

Աստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ իւրմէ. բա՛րձր եղէց՝ բաժանեցից զսիւքէմ. և զհովիտսն յարկաց չափեցից:

Իմ է գաղաադ. և իմ է մանասէ. եփրեմ հզօրիչ գլխո՛յ իմոյ:

Յուդա թագաւո՛ր իմ. մովաբ աւազան յուսո՛յ իմոյ:

Յեդովմ՛ ուղղեցից զգնացս իմ. և ինձ այլազգիք հնազանդք եղեն:

Ո՛ տարցէ զիս ՚ի քաղա՛ք ամուր. կամ ո՞վ առաջնորդեսցէ ինձ մինչև յեդովմ ՛:

Եթէ ոչ դո՛ւ ած, որ մերժեցե՛ր զմեզ. և ո՛չ ելեր ընդ զօրս մեր:

Տո՛ւր մեզ զօգնութիւն ինեղութեան ։ զի ընդունայն է փրկութիւն մարդոյ ։

Աստուծո՛վ արասցուք զզօրութիւն . և նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ որք նեղեն զմեզ ։

Տունք ծ̃է ։



Դաւ՛իթ կացեալ ՚իւլիմն իւ՛ր ծնկաց
աղօթէ առած ։

Ի կատարած ընդ օրհնութիւս սաղմոս դաւթի ։

Կ

Լո՛ւր ած աղօթից իմոց . և նայ
եա՛ց յիմ յաղօթս իմ ։
Ի ծագաց երկրէ կարդացի առ
քեզ . մինչ ՚ի վհատակել սրտի իմոյ ։
Ի վէմ բա՛րձր արարեր զիս . և
առաջնորդ եղե՛ր ինձ . և եղեր
յոյս՝ և աշտարակ հզօր եղեր ինձ .
յերեսա՛ց թշնամւոյն .
Բնակեցա՛յց ես յարկս քո յաւի
տեան . և ծածկեցա՛յց ընդ հո
վանեաւ թևո՛ց քոց ։
Զի դու ած , լուա՛ր աղօթից իմոց .
և ետուր ժառանգութի , որք
երկնչէին յանուանէ քումմէ ։
Աւուրս յաւուրց յաւելցե՛ս թա



րե
և
ժողով

գաւորի. ամաց նո՜ աւուրք, ազ
գաց մինչեւ յազգս նորա։
Նայ՛ ևմնայ յաւիտեան առաջի
այ՜. ողորմութիւն ևճշմարտու
թիւն, ո՞ք խնդրեսցէն ՚ինմանէ։
Ա՛յսպէս սաղմոս ասացից քեզ
յաւիտեանս յաւիտենից. ևտաց
քեզ զաղօթս իմ օր ըստօրէ։

Տունք Ը։

Պ. ուբղայս. եբ. տունէ։



Ոչ երկնչիմ ասէ ՚ի ձէնջ· զի զա՟ծ ունիմ
ինձ աւգնական։

ԿԱ

Ի կատարած. ՚ի վերայ դիթո
մայ. սաղմոս դաւթի։

Բայց միայն՝ այ՟ հնազանդ
լեր անձն իմ. զի ՚ի նմանէ
է՝ ինձ փրկութիւն։
Նա է ած՟ իմ և փրկիչ իմ.
ապաւէն իմ, զի մի սասանե
ցայց առաւել։
Մինչև յե՞րբ յառնէք ՚ի վր՟ մար
դոյ սպանանել. ամենեքեան որպ՟
յորմոյ թեքելոյ և ՚ի ցանկոյ մեր
ժելոյ։
Բայց միայն զպատիւ իմ խորհե
ցան մերժել յինէն. և ընթացան
՚ի ծարաւս իւրեանց։

Բերանօք իւրեանց օրհնէին. եւ սրտիւք անիծանէին:

Բայց սակայն՝ ա̃յ հնազանդ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է՝ ինձ համբերութիւն: ԿԱ

Նա է ա̃ծ իմ եւ փրկիչ իմ. ապաւէն իմ, զի մի՛ սասանեցայց:

Յա̃յ է զօրութիւն իմ եւ փառք իմ. ա̃ծ օգնութեան իմոյ՝ յոյս իմ է՛ առ ա̃ծ:

Յուսացարուք 'ի նմա, ա̃մ ժողովք ժողովրդոց. եւ սփռեցէք առաջի նո̃ր զսիրտս ձեր. զի ա̃ծ օգնական է մեր՝ յաւիտեանս ժամանակաց:

✠ Հանգիստ: ✠

Սակայն՝ ընդունայն են որդիք մարդկան. սուտ են որդիք մարդ-

կան. ՚ի կշիռս իւրեանց մեղանչէին
և ինքեանք յունայնութեան են
՚ի միասին ։

Մի՛ յուսայք յանիրաւութիւն
և յափշտակութեան մի՛ ցանկայք
ժա և մեծութիւն թէ առաւել դայ
ցէ. մի՛ յօժարեսցին սիրտք ձեր ։
Մի՛ անգամ խօսեցաւ Ած. և եր
կուս զայս լուայ ։
Զի Այ է զօրութի՝ և քո՛ Տր ողոր
մութիւն. և դու հատուցանես
իւրաքանչիւր ըստ գործս նոցա ։

Տուն ժբ ։



Այսպէս նստեալ յանապատին ծառ
ա՛յէր առ Ած հոգի դաւ՛թի մարգարէին
և յանուն նորա համբարձեալ զձեռան.
և տեսանէր զհրշտակն Այ ։ 

ԿԲ

Սղմս դաւթի մինչդեռ նրա
էր նա յանապատին անդ 'ի
Հրէաստանի :

Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ
առնեմ. ծարաւեաց առ քեզ հո
գի իմ. քանի՛ պատիկ եւս, եւ մար
մին իմ :

Որպէս երկիր անապատ եւ ան
ջուր, ուր ո՛չ գոյ 'ի նմա ճանապարհ:
Այսպէս 'ի սրբու երեւեցայց քեզ.
տեսանել զզօրութիւն քո եւ զփառս քո:
Վասնզի լաւ է ինձ ողորմութիւն
քո քան զկեանս իմ. եւ շրթունք
իմ գովեսցեն զքեզ:
Այսպէս օրհնեցից զքեզ 'ի
կեանս իմ. եւ յանուն քո համբար
ձից զձեռս իմ:

Ոպ ՚ի ճարպոյ պարարտութէ,
լցցի անձն իմ, և շրթամբք ցնծու
թե օրհնեսցէ զքեզ բերան իմ։
Զի թէ յիշէի զքեզ յանկողնի
իմում. ընդ առաւօտս կանխէի
խօսէի ընդ քեզ։
Զի եղեր իմ օգնական. ՚ի հո
վանի թևոց քոց ցնծացայց։
Եկն զկնի քո անձն իմ. և զիս
ընկալաւ աջ քո. և նոքա ՚ի նանիր
խնդրեցին զանձն իմ։
Մտցեն ՚ի ներքոյ անդնդոց
երկրի. մատնեսցին ՚ի ձեռս սրոյ
և բաժինք աղուեսուց եղիցին։
Թագաւոր յուսացաւ ՚ի տր. գո
վեսցին ամենեքեան որք երդ
նուն նովաւ. խցցին բերանք այ
նոցիկ՝ ոյք խօսին զանիրաւութի։



Լարեաց զաղեղն Թշնամին։ ձգել զնետ
ս. ուղղոն սրտեւք։ 306

## ՚Ի կատարած սաղմոս Դաւթի ։ ԿԳ

Լո՛ւր Ած աղօթից իմ ով յաղա-
չել ինձ առ քեզ. Եւ յերկիւղէ
թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ։

Ծածկեսցես զիս ՚ի ժողովո՛յ
չարաց. ՚ի բազմութենէ որք գոր-
ծեն զանօրէնութիւն։

Որք սրեցին որպէս սուսեր զլե-
զուս իւրեանց. եւ լարեցին զա-
ղեղունս իւրեանց, յի՛րս դառ-
նութեան։

Ձգե՛լ ՚ի գաղտնիս, ա՛յնոցիկ որք
ուղիղ են սրտիւք. յանկարծակի՛
ձգեսցեն ՚ի նոսա եւ մի՛ երկիցեն։

Որք զօրացուցին յանձինս իւր-
եանց զբա՛նս չարութեան. խոր-
հեցան թագուցանել ինձ զորո-
գայթ.

դայթ. և ասացին ոչ տեսանէ
զայս տէր:

առաւօտն

Բննեցին զանօրէնութիւն. և պար
տասեցան ՚ի քննել զքննութիւն:
Մատիցէ այր ՚ի խորութիւն սրտի
իւրոյ. և բարձր եղիցի այծ:
Նետք տղայոց եղիցին վէրք
նոցա. և տկարասցին ՚ի նոսա լե
զուք իւրեանց. և խռովեսցին
ամենեքեան ոյք հային ընդ նս:
Երկեաւ ամ մարդ. և պատմե
ցեն զգործս այյ. և զարարածս
նորա ՚ի միտ առին:
Ուրախ եղիցի արդար ՚ի տր և
յուսասցի ՚ի նմա. նովաւ գովեսցին
ամենեքեան, ոյք ուղիղք են սր
տիւք: Տունք Ժ:
Պ. ուրբաթս Կդ. տունէ:

 Քեզ



Տա՛ն ասեն զմեզ՝ ի պանդխտութենէս
զի տարցուք զաղօթս յէմ։ 

ԿԴ

Ի կատարած սաղմոս դաւթի։
օրհնութեան. երեմիայի. եզե
կիելի. և ժողովրդեանն
յորժամ ի պանդխտու
թենէն կամէին
ելանել։

Քեզ վայել է օրհնու
թիւն ա՟ծ ի սիոն. և քեզ
տացին աղօթք յերու
սաղէմ։

Լուր աղօթից իմոց. զի առ
քեզ ամենայն մարմին եկեսցէ.
Բանք անօրինաց զօրացան ի վ՟ր
մեր. և զամբարշտութիւնս մեր
դու քաւեսցես։

Երանի՛ զոր ընտրեցեր և ընկա
լար. և բնակեսցին ՚ի գաւիթս քո։
Լցուք մեք ՚ի բարութենէ
տան քո. ս՟բ է տաճար քո՝ սքան
չելի արդարութեամբ։
Լուր մեզ ա՟ծ փրկիչ մեր. յոյս ա՟մ
ծագաց երկրի, և որ ՚ի ծով հեռի։
Պատրաստես զլերինս զօրու
թեամբ քով. և զգեցեալ է
զզօրութիւն.
Խռովեցուցանես զմեծութի՟
ծովու. և զձայն ալեաց նորա ցա
ծուցանես։
Խռովեսցին հեթանոսք. և եր
կիցեն բնակիչք երկրի ՚ի նշա
նաց քոց։
Ելս առաւօտու՝ ընդ երեկոյս
զուարճասցին. Հայեցար յերկիր

Երկուշ

արբեցուցէր զնա , և բաղում
արարէր զմեծութիւն նորա :
Գետն Այ լի եղև ջուրք . պատ
րաստ արարէր զկերակուր նորա .
զէ այպէսէ պատրաստութիւն :
Օ ակօս նր արբեցուցէր . և
բազում արարէր զարմտիս նր :
Ի ցօղել նորա զուարթ եղիցի
բոյս նորա . օրհնեսցի պսակ
տարւոյ քաղցրութեան քում :
Դաշտք քո լցցին պարարտու
տ թեամբ . և պարարասցին դե
ղեցկութիւնք անապատի :
Բլուրք զցնծութիւն զգեցցին
և զգեցցին խոյք մաքեաց :
Հովիտք բազում արասցեն զցո
րեան . աղաղակեսցեն և օրհնես
ցեն :




Ր. զաղաղակեցէք սաղմոսիւք. և խոյս և խունկս մատուցէք պատ͞րգ տ͞ն ։ 313

կե

Ի կատարած սաղմոս դաւթի յարութեան ։

Աղաղակեցէք առ ա՟ծ ա՟մ երկիր. սաղմոս ասացէք անուա՛ն նորա. և տուք զփառս օրհնութեա՛ն նորա ։

Ասացէ՛ք ա՟յ, ո՟չ զի ահեղ են գործք քո. ՚ի բազում զօրութեան քում ստեցին քեզ թշնամիք քո ։

Ամենա՛յն երկիր՝ երկի՛ր պագցեն քեզ. սաղմո՛ս ասասցեն քեզ. և սաղմո՛ս ասասցեն անուա՛ն քում ։

Եկայք և տեսէք զգո՛րծս ա՟յ. ո՟չ զի ահե՛ղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան ։

Որ դարձոյց զծո՛վ ՚ի ցամաք. և ընդ գետս անցցեն ոտանաւորք ։

Անդ ուրախ եղիցուք մեք ՚ի նմա. որ տիրէն զօրութեամբ իւրով յաւիտենից:

Աչք նորա ՚ի հեթանոսս հային. և որք դառնացուցին զնա՝ մի՛ բարձրասցին յանձինս իւրեանց:

Օրհնեցէք հեթանոսք զած մեր. և լսելի արարէք զձայն օրհնութեան նորա:

Այն որ ետ զանձն իմ ՚ի կեանս. և ո՛չ ետ զդողութիւն ոտից մերոց:

Փորձեցեր զմեզ ած և քննեցեր, որպէս և քննի արծաթ:

Իջուցեր զմեզ յորոգայթ. և եդեր զնեղութի՛ ՚ի թիկունս մեր և անցուցեր զմարդիկ ՚ի վերայ գլխոց մերոց:

Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր. եւ հաներ զմեզ ՚ի հանգիստ: Մտից ես ՚ի տուն քո պատարագօք. եւ տաց քեզ զուխտ իմ. զոր խոստացան քեզ շրթունք իմ. եւ զոր բերան իմ խօսեցաւ ՚ի նեղութեան.

Զողջակէզս զուղղարկեալս մատուցից քեզ՝ խոյօք եւ խնկօք. եւ քեզ մատուցից զուարակս եւ նոխազս.

Եկայք լուարուք ինձ՝ եւ պատմեցից ձեզ՝ ամենեքեան որք երկնչիք յ՟այ. զոր ինչ արար անձին իմոյ: Առ նա բերանով իմով կարդացի. եւ բարձր արարից զնա լեզուաւ իմով:

Զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի

իմում. մի թէ լուէր ինձ տր :
Վասնայսորիկ լուաւ ինձ ած. և
նայեցաւ ՚ի ձայն խնդրուածաց
իմոց :
Օրհնեա՛լ է ած՝ որ ո՛չ ՚ի բացեա
արար զաղօթս իմ. և ո՛չ զողորմու
թիւն իւր յինէն :

## Տունք ԺԹ :



Մրւեցուցանէ տր զերեսաւուր. ողոր
մելով եօհելով։ 

Ի կատարած ընդ օրհնութեան սաղմոս երգոց ։

ՃԻԲ

Ա՛ծ ողորմեաց մեզ՝ և օրհնեա՛ զմեզ. երևեցո՛ զերեսս քո՛ ի մեզ՝ և ողորմեաց մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո. յազգս ամենայն, զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՛ծ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազգք. զի դու դատես զժողովուրդս յուղղութիւն. և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժո

ղովուրդք ած . գոհասցին զքեն ժողովուրդք ամենայն ։

Երկիր ետ զպտուղ իւր . եւ օրհնեսցէ զմեզ ած , ած մեր ։

Ած մեր օրհնեսցէ զմեզ . եւ 'ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի ։

Տունք է .

Պուրղայս . Խբ . տունէ ։



Դաւիթ կաքաւէր առաջի տապանակին
տն՛ և երգեր զսաղմոսս զայս։ Ե թ̃ 32է

կէ

## Ի կատարած Սաղմոս Դաւթի։

Յարեսցէ ած՝ և ցրուեսցին ամ թշնամիք նորա փախիցեն ատելիք նր յերեսաց նորա։

Որպէս պակասէ ծուխ, պակասեսցին. և որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց այ։

Եւ արդարք ուրախ եղիցին և ցնծասցին առաջի նորա. և զուարճասցին յուրախութե՛ իւրեանց։

Օրհնեցէք զած՝ և սաղմոս ասասջիք անուան նր. ճանապարհ արարէք այնմիկ որ նստի ընդ արեւմուտս. և տր՛ է անուն նորա։

Ընծայեցին առաջի նորա. եւ խորտակեցին յերեսաց նորա։

Որ հայրն է որբոց՝ եւ դատաւոր այրեաց ած. ՚ի տեղւոջ սրբութեան իւրում։

Ած բնակեցուցանէ զհամակրօնս ՚ի տան՝ եւ հանէ զկապեալսն քաջութեամբ իւրով. սոյնպէս եւ զդառնացօղսն որք բնակեալ են ՚ի գերեզմանս։

Ած ընդ ելանելն քո առաջի ժողովրդեան քո. եւ ընդ անցանելն քո ընդ անապատ, երկիր շարժեցաւ։

Զի ամպք՝ եւ երկինք ցօղեցին յերեսաց այ ՚ի Սինայէ. առաջի այ իսրայէլի։

Անձրեւ կամաց պատրաստեցեր



Խոնարհեցին | զմիակրօնս ։ Զէբ, Զաղմն

ած ժառանգութեան քում. Թէ
պէտ հիւանդացաւ. սակայն դու
հաստատեցեր զնա. Եգաղանք
քո բնակեսցեն ՚ի նմայ ։
Պատրաստ արարեր քաղցրու
թեամբ քով աղքատի, ած. տր
տացէ զբան, ոյք աւետարանեն
զօրութեամբ բազմաւ ։
Թագաւոր զօրութեանց սիրե
լւոյ. զգեղեցկութիւն տան քո
բաժանեալ յաւարի. Թէպէտ
ննջեսջիք ՚ի մէջ վիճակաց.
Թեւք աղաւնւոյ արծաթապատ
և թիկնամէջ նր ՚ի գոյն ոսկւոյ ։
Ի գումարել երկնաւորին զթա
գաւորս ՚ի վերա նորա. ձիւնաս
ցին ՚ի սաղմոն ։
Լեառն այ լեառն պարարտ.

լեառն մածեալ և լեառն պա-
րարտ . ևզէ՞նչ կարծէք լե՛րինք
հպարտացեալք :

Լեառն, ընդ որ հաճեցաւ ա՟ծ բնակել ՚ինմայ . քանզի՝ և տ՟ր եւս բնակեսցի ՚ինմայ յաւիտեան :

Կառք ա՟յ բիւրապատիկք՝ հազարք ուղղիչք, տ՟ր՝ ՚ի նոսա, ՚ի սինէ սրբութենէ՛ իւրմէ :

Ել ՚ի բարձունս՝ և գերեաց զգերութիւն . էառ աւար՝ բաշխեաց պարգևս՝ և ետ որդւոց մարդկան . քանզի՝ և թէ բահաւանատից ևս բնակեալ եղիցի ՚ինմայ :

Տ՟ր ա՟ծ օրհնեալ՝ օրհնեա՛լ տ՟ր՝ զօրհանապազ առաջնորդեսցէ մեզ ա՟ծ փրկիչ մեր :

Ած մեր, ած կենարար. և ՚ի տեառնէ՛ են ե՛լք մահու։
ֆն Բայց սակայն՝ ած փշրեսցէ զգլուխս թշնամեա՛ց մերոց. և զհե՛րսն կատարածոյին, որք գնան յանօրէնութեան իւրեանց։
Ասա՛ց տր ՚ի խորոց անդնդո՛ց դարձուցից. և ՚ի միջո՛յ ժանեաց, զայն ՚ի դրո՛ւրս կորզեցից։
զուգ Որպէս թացցի ոտն քո յարենէ. և լեզո՛ւք շանց քոց յարենէ թշնամեա՛ց քոց։
Երևեցան գնա՛ցք քո ած. գնացք ա՛յ թագաւորին մերոյ սրբոյ։
ն Կանխեցին իշխանք հանե՛լ զօրհնութիւն. ՚ի մէջ կուսանաց և դուլ չայց։
Յեկեղեցիս օրհնեցէ՛ք զած. և

զոր յաղբերացն խորայինն ։

Ընդ բենիամին ՚ի տղայութե՜ն զարմանալի ․ իշխանք յուդայ առաջնորդք նորա՝ իշխանք զաբօղոնի ․ և իշխանք նեփթաղիմայ ։

Հրամայեա ա՛ծ զօրութեամբ քով ․ և զօրացո՛ զայս, զոր հաստատեցե՜ր ՚ի մեզ ։

Ի տաճարէ քումմէ յերուսաղէմէ ․ քե՜զ մատուսցեն թագաւորք զպատարագս ։

Սաստեա՛ ՚ի գազանս եղեգան ․ ՚ի ժողովս զուարակաց՝ և ՚ի դասս երինջուց ։

Խոտեսցին այնոքիկ, որք ընտրեալք են արծաթով՝ ցրուեա՛ զհեթանոսս՝ և ոյք կամին ընդ պատերազմս ։

Եկեսցեն հրեշտակք յեգիպ-
տոսէ. եւ հնդիկք յառաջագոյն
ձեռնատու լիցին առ ած :
Թագաւորութիւնք երկրի օրհ-
նեցէք զած. եւ սաղմոս ասասցէք տն:
Ճանապարհ արարէք այնմիկ.
որ նստի յերկինս երկնից ընդ-
յարեւելս :
Ահա տացէ զձայն իւր ՚ի ձայն
զօրութեան. եւ տուք զփառս ան:
Ի վերայ իսրայէլի մեծվայելչու-
թիւն նորա. եւ զօրութիւն նորա
մինչեւ յամպս երկնից :
Սքանչելի է ած ՚ի սուրբս
իւրում՝ ած իսրայէլի:
Նա տացէ զզօրութիւն հաս
տատութեան ժողովրդեան իւրոյ.
օրհնեալ է ած :



Ո՛ Հոգիս ընկղմեցին պտոյտք շրջանաց
ջուրց բանաւորկուճին կեցո ասէ զիս տ͞էր ։

## Ի կատարած Սաղմոս Դաւթի վասն զաւանցելոցն ։

Կեցո՛ զիս ա՛ծ՝ զի հասին ջուրք յա՛նձն իմ. ընկլայ ես ՚ի խո՛րս անդնդոց՝ ուր ո՛չ գոյ ինձ հանգիստ։ Եկի ես ՚ի խո՛րս ծովու. և ալիք ջանք ընկղմեցի՛ն զիս ։

Վաստակեցա՛յ ես առ աղաղակել. Նկերկերեցա՛ւ կոկորդ իմ ։

Նուաղեցան ա՛չք իմ. առ յուսալ ինձ առ տ՛ր ա՛ծ իմ ։

Բազում եղեն քան զհեր գլխո՛յ իմոյ. ո՛յք ատէի՛ն զիս ՚ի տարապարտուց ։

Զօրացա՛ն յիս թշնամիք իմ և ա

տեղիք իմ՛ յինաներ. յինչ զոր ո՛չ յա
փշտակեալ էի՞ տուժէի նոցա:

Աձ՝ դու ծանեա՛ր զանզգամու
թիւն իմ. եւ յանցանք իմ՛ ի քէն
ո՛չ ծածկեցան:

Մի՛ ամաչեսցեն վասն իմ, որք
համբերեն քեզ տր՝ տր՛ զօրու
թեց եւ մի՛ պատկառեսցին վասն
իմ, որք խնդրեն զքեզ աձ իէլի:

Վասն քո համբերի նախատանաց
եւ ծածկեաց ամօթ զերեսս իմ:

Օտա՛ր եղէ ես յեղբարց իմոց.
եւ հիւր որդւոց մօր իմոյ:

Նախանձ տան քո եկեր զիս.
եւ նախատինք նախատչաց քոց,
անկա՛ն ՚ի վերայ իմ:

Խոնարհեցուցի պահօք զանձն
իմ, եւ եղեն ինձ այս նախատինք.

արարի զհանդերձս իմ քուրձ,
և եղէ յառա՛կ նոցա ։

Զյինէ՛ն խորհէին, որք նստէին առ դրունս ․ և զիս ա՛յպն առնէին, որք ըմպէին զգինի ։

Եւ ես յաղօթս կայի առ քե՛զ տ̅ր ․ ՚ի ժամանակի ընդունելի ։

Տ̅ր ՚ի բազում ողորմութեան քում լո՛ւր ինձ ․ ՚ի ճշմարտութեան փրկութեան քո ։

Ապրեցո՛ զիս ՚ի կաւո՛յ՝ զի մի՛ ընկլայց ․ ապրեցայց ես յատելեա՛ց իմոց ․ և ՚ի խորոց ջրո՛ւրց բազմաց ։

Մի՛ ընկլուցեն զիս պտո՛յտք ջուրց ․ և մի՛ ընկղմեսցեն զիս անդո՛ւնդք խորոց ․ և ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր ՚ի վերայ իմ ։

Լո՛ւր ինձ տ̅ր՝ զի քա՛ղցր է ողոր

մութիւն քո․ ըստ բազում գթու-
թեան քում հայեաց յիս՝ և մի
դարձուցաներ զերեսս քո 'ի ծա-
ռայէս քումմէ, զի նեղեալ եմ
ես, վաղվաղակի լուր ինձ ։

Հայեաց յանձն իմ և փրկեա
զիս․ Վասն թշնամեաց իմոց
ապրեցո զիս ։

Դու գիտես զնախատինս իմ
զամօթ իմ, և զպատկառանս իմ ։
Առաջի քո են ամենայն նեղիչք
անձին իմոյ․ Նախատանաց համ
բեր սիրտ իմ, և թշուառու-
թեան ։

Ակն ունէի թէ ոք տրտմեսցի
ընդ իս՝ և ոչ ոք էր․ և մխիթարիչ
ինձ ոչ գտաւ ։

Ետուն 'ի կերակուր ինձ զլեղի․

և՚ի ծարաւ իմ արբուցին ինձ զքացախ ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ. ՚ի հատուցումն և՚ի գայթագղութիւն ։

Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն. և զթիկունս նոցա հանապազ կորացո՛ ։

Արկցես ՚ի վերայ նոցա զբարկութիւն քո. և սրտմտութիւն բարկութեան քո հասցէ ՚ի վերայ նոցա ։

Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ. և՚ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ ։

Զի զոր դու հարեր, հալածեցին և՚ի վէրս ցաւոց իմոց յաւելին ։

Դի՛ր զմեղս ՚ի վերայ մեղաց նոցա. զի մի՛ մտցեն յարդարութիւն քո ։

Ջընջեսցե՛ն նոքա ՚ի դպրութե-
նէ՛ քումմէ կենաց. եւ ընդ ար-
դարս քո մի՛ գրեսցին:

Աղքատ եւ ցաւա՛ծ եմ ես. փրկու-
թիւն քո ա՛ծ ընկալցի զիս:

Օրհնեցից զանո՛ւն այ իմոյ օրհ-
նութեամբ. եւ բա՛րձր արարից
զնա գովութեամբ:

Հաճոյ եղիցի այ քան զո՛րթ մա-
տաղ. որ բերէ զեղջե՛րս եւ
զկճղակս:

Տեսցեն աղքատք եւ ուրա՛խ եղի-
ցին. խնդրեցէ՛ք զած, եւ կեց-
ցին անձինք ձեր.

Զի լուա՛ւ տր տնանկաց. եւ զկա-
պեալս իւր ո՛չ արհամարհեաց:

Օրհնեսցեն զնա երկինք եւ եր-
կիր. ծովք եւ ամ որ զեռայ ՚ի նոսա:

ԱԾ՝ փրկէ զսիոն՝ և շինեսցին քաղաքք հրէաստանի. շինեսցեն բնակեսցեն և ժառանգեսցեն զնա:

Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ. և որք սիրեն զանուն քո, բնակեսցեն ՚ի նմա:

Տունք ԼԸ:



Օգնեաց տէր Դաւթի . և ամաչեցին թշնամիք նորա : Ի Է 

Ի կատարած դաւթի. առ՛ի յիշատակ փրկելոյն զնա տեառն, սաղմոս ։

Ած յօգնել ինձ նայեաց. և տէր՛ յօգնել ինձ փութա ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, ոյք խորհին ինձ զչար ։

Դարձցին առժամայն ամաչեցեալ. որք ասեն ինձ վա՛շ վա՛շ ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ ամենքեան որք խնդրեն զքեզ տէր ։

Ասասցեն յամ ժամ մեծ է տէր. ոյք սիրեն զփրկութիւնս քո ։

Ես աղքատ և տնանկ եմ, տէր օգնեա ինձ. օգնական և փրկիչ իմ, և տէր իմ մի յամենար ։



Համբարձեալ զձեռսն դաւիթ ՚ի քեզ
ասէ տ՟ր յուսացայ ։ 

Հ

Ի կատարած Որդւոյն Յովնադաբայ. Յառաջնոյ Գերութեան. սաղմոս դաւթի։

Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փր կեա՛ եւ ապրեցո՛ զիս։

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո՛ եւ կեցո՛ զիս։

Եր իմ ած ապաւէն, եւ տեղի ամուր կեցուցանե՛լ զիս. զի հաստատութիւն իմ եւ ապաւէն իմ դու ես։

ԱԾ իմ, փրկեա՛ զիս ի ձեռաց մեղաւորի. ի ձեռաց անօրինի՛ եւ անիրաւի։

Դու ես համբերութիւն իմ տէր՝
տէր յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ:
Ի քէն հաստատեցայ ես յար
գանդէ. յորովայնէ մօր իմոյ դու
ես պաշտպան իմ. եւ առ ՚ի քէն է
օգնութիւն իմ յամ ժամ:
Որպէս զի նշանակ եղէ ես բազ
մաց. եւ դու օգնական իմ եւ հզօ
րն իմ:
Լցցի բերան իմ գովութեամբ
որպէս օրհնեցից զփառս քո. զօրհա
նապազ զմեծ վայելչութիւն քո:
Մի՛ ընկենուր զիս տէր ՚ի ժամա
նակս ծերութեան. ՚ի պակասել
զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս:
Զի ասացին թշնամիք իմ ինձ. եւ
որք պաշարեցին զանձն իմ. խոր
հեցան ՚ի միասին եւ ասացին:

է Ած եթո՜ղ զնա՝ հալածեսցուք
և հասցո՛ւք նմա. զի ո՛չ ոք է որ
փրկէ զնա։

Ած իմ, մի՛ հեռի առներ յինէն.
և ա՛ծ յօգնել ինձ նայեաց։

Ամաչեսցեն և պակասեսցեն ոյք
չարախօսս կային զանձնէ իմմէ.
զգեցցին զամօթ և զպատկառանս, ոյք խնդրէին ինձ զչար.

Ես յամենայն ժամ յուսացայց. և
յաւելից յօրհնութիւնս քո։

Բերան իմ պատմեսցէ զարդարութիւնս քո. զօրհանապազ զփրկութիւնս քո։

Որպէս ո՛չ թէ խարդախութիւն
ինչ գիտէի ես զփրկութեն. այլ
մտից 'ի զօրութիւն տն. Տէր յիշեցից զարդարութիւնս քո միայն։

ԱԾ իմ, ուսուցեր զիս ՚ի մանկու-
թենէ իմմէ. և ցայրդ և ս պատմե-
ցից զարդարութիւնս քո ։

Մինչև յալևորել և ՚ի ծերանալ
իմում. ած իմ ՚ի թողուր զիս ։

Մինչև պատմեսցեն բազուկ քո՝
ազգի ամենայնի որ գալոցն է ։

Զօրութիւնս քո և զարդարու-
թիւնս, մինչ ՚ի բարձունս. զոր արա-
րեր մեծամեծս. ած ո՛ նման է քեզ ։

Որչափ ցուցեր ինձ զնեղութի
բազում և չարչարանս՝ դարձար
և մխիթարեցեր զիս. և ՚ի խորոց
անդընդոց երկրէ հաներ զիս ։

Յաճախեցեր ՚ինձ § զզօրութիւն
քո. դարձար և մխիթարեցեր
զիս. և ՚ի խորոց երկրէ, միւս
անգամ հաներ զիս ։

 Ի՛րրդ

Ա՛րդ՝ և ես խոստովան եղէց քեզ ՚ի կապարաստութիւն սաղմոսաց, ճշմարիտդ ա՛ծ. և սաղմոսասացից քեզ օրհնութեամբ, սուրբդ Իսրայէլի։

Ցնծասցեն շրթունք իմ յորժամ սաղմոս ասիցեմ քեզ. և անձն իմ զոր և փրկեցեր։

Այլ և լեզու իմ զօր հանապազ խօսեսցի զարդարութիւնս քո։

Ի ժամանակի որպէս յամօթ լիցին՝ և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։

Տունք էզ.



Գ̃ թագաւորք մոգուցն բերեն ընծայս
Յս̃ի. Քս̃ի Թգ̃րին ։ 

ՀԱ Ի Սողոմոն. սաղմոս Դաւթի ։

Ա՛Ծ զիրաւունս քո արքայի
տուր. եւ զարդարութիւնս քո
որդւոյ թագաւորի ։

Դատել զժողովուրդս քո ար
դարութեամբ. եւ զաղքատս քո
իրաւամբք ։

Առցեն լերինք զխաղաղութիւն
ժողովրդեան. եւ բլուրք զար
դարութիւն ։

Իրաւ արասցէ աղքատաց ժողո
վրդեան. եւ կեցուսցէ զորդիս
տնանկաց. եւ խոնարհեցուսցէ
զամբաստանս ։

Կացցէ եւ մնասցէ ընդ արեւու.
յառաջ քան զլուսին, ազգէ
մինչեւ յազգ ։

Ելցէ որպէս զանձրև ՚ի վերայ գեղ
մանն. որպէս զցօղ զի ցօղի ՚ի յերկիր։
Ծագեսցի յաւուրս նորա արդա
րութիւն բազում. և խաղաղութիւն,
մինչև կատարեսցի լուսինն։
Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի
ծով. ՚ի գետոց մինչև ՚ի ծագս
աշխարհի։
Առաջի նորա նախ հնդիկք
անկցին. և թշնամիք նորա զհող
կերիցեն։
Թագաւորք Թարսիսի և կղզեաց՝
պատարագս մատուսցեն նմա.
Թագաւորք արաբայ և սաբայ.
պատարագս բերցեն նմա։
Երկիր պագցեն նմա ամենայն
թագաւորք երկրի. և ամենայն ազգք
ծառայեսցեն նմա։

Զի փրկեաց զաղքատն ՚ի հզօրէ․ զաղքատն և զտնանկն՝ որոյ ոչէ ր օգնական ։

Խնայեսցէ նա յաղքատն և ՚ի տնանկն․ և զանձինս տնանկաց կեցուսցէ․ և ՚ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա ։

Պատուական է անուն նորա առաջի ն՞ց՝ կեցցէ, և տացի նմա յոսկւոյն արաբացւոց ։

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ․ և զօր հանապազ օրհնեսցեն զնա ։

Եղիցի հաստատութիւն ընդ ա՞մ երկիր․ և ՚ի վերա գլխոց լերանց ։

Բարձրասցի՛ քան զլիբանան պտուղ նորա․ և ծաղկեսցի ՚ի քաղաքի ա՞ն որպէս խոտ երկրի ։

Եղիցի անուն տն օրհնեալ յաւի
տեան · զի յառաջ քանզարեւ՛ է
անուն նորա :

Ի նմա օրհնեսցին ամենայն ազգք
երկրի · եւ ամենայն ազինք երանե
ցեն նմա :

Օրհնեալ տր ած իսրայէլի որ
առնէ զսքանչելիս միայն · եւ օրհ
նեալ է անուն սուրբ փառաց նո
րա յաւիտեան · Լցցի փառօք
նորա ամենայն երկիր · եղիցի՛
եղիցի՛ :

Տունք ե :

Գուբղայս եղ տուն է :

Կանոնս ՃԺԶ տուն է եւ ԺԷ
փոխ :



Եղկաննա մխիթարէ զսիրտ Աննայի
մի ողբալ վասն անզաւակութեն ։

# Աղօթք Աննայի Մօրն Սամուէլի ։

Հաստատեցաւ սիրտ իմ ՚ի
տէր . և բարձրացաւ եղ
ջիւր իմ յԱստուած փրկիչ իմ ։
Ընդարձակեցաւ բերան իմ
՚ի վերայ թշնամեաց իմոց .
ուրա՛խ եղէց ՚ի փրկութեան քում ։
Զի ո՛չ գոյ սուրբ որպէս զՏէր . և
ո՛չ արդար որպէս զԱստուած մեր . և
չի՛ք սուրբ , բա՛ց յԱստուծոյ մերմէ ։
Մի՛ պարծիք և մի՛ խօսիք զամ
բարտաւանս . և մի՛ ելցէ ընդ բե
րանս ձեր՝ բան հպարտ մեծաբա
նութեան ։



Ըստ գիտութեանց տր՝ ած պա
տրաստէ իւրում խմաստութեամբ
զգիտութիւն յարարածս իւր։
Յորդորեաց հաստ աղեղունք թու
լացան, և տկարք վառեցան զօ
րութեամբ։

Յագեալք ի հացիցն նուաղե
ցան. և քաղցեալքն լցին զերկիր։
Ամուլն ծնաւ եօթն. և բազ
մածինն նուաղեաց 'ի ծնընդոց։
Տէր մեռուցանէ՝ և տր՝ կեցու
ցանէ. իջուցանէ 'ի դժոխս և
հանէ։

Տէր աղքատացուցանէ և տր՝ մե
ծացուցանէ. խոնարհ առնէ զամ
բարտաւանս մինչև յերկիր, և
բարձր առնէ զտառապեալս յաղ
բեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան. և զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա։

Կատարէ զուխտս ուխտաւորաց և օրհնեաց զամս արդարոց։

Զի ոչ թէ իւրով զօրութեամբ զօրանայ հզօր. այլ տէր տկար առնէ զհակառակորդս իւր տէր սուրբ է։

Մի պարծեսցի խորհրդականն 'ի խորհուրդս իւր. և մի պարծեսցի հզօրն 'ի զօրութիւն իւր և մի պարծեսցի մեծն՝ 'ի մեծութեան իւրում։

Այլ որ պարծին, 'ի տէր պարծեսցի. 'ի խորհուրդս գիտութեան՝ զտէր ճանաչել։

Ըուանել զերաճուսն, եւ գոր-
ծել զարդարութիւն, ՚ի վերա
երեսաց երկրի:

Տր ել յերկինս եւ որոտաց. եւ
ինքն դատէ աւանց բարբառելոյ:
Տայ զզօրութիւն թագաւորաց
մերոց. եւ բարձր առնէ զեղջիւր
օծելոյ իւրոյ:

Տունք Ժ Ը:

Բարձրացաւ եղջեւր իմ յաստուծ
փրկիչ իմ. հաստատեցաւ սիրտ
իմ ՚ի տէր՝ տէրամբ եւ հաւատով:
Արդարանէր տէր՝ վասն սրբուհւոյ
անարատ մօր քո եւ կուսի. եւ մեր
խաչի. քո պատուական ընկալ
զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Բարող ողորմութեան եւ՚ իննեղու-
թեան են:

 Ս.ան

Վասն գտանելոյ մեզ զշնորհս եւ զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ զՏէր

Վասն փրկելոյ զմեզ 'ի զըրպարտութենէ մարդկան՝ եւ յորոգայթից սատանայի զՏէր։

Վասն [illegible] անձանց քրիստոնէից. [illegible] հանգուցելոց զՏէր

Վասն որք 'ի լերինս յայրս եւ 'ի փապարս բնակեալք են սուրբ հարքն մեր զՏէր։

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զժամ ժամանակս կենաց իւրեանց։

Վասն հոգւոցն. Լուեալս։

Զանձինս մեր. Ողորմեայ։

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան

քոյ. Զարթո՛ զմիտս մեր արդա-
րութ՟բ առ քեզ տ՟ր ա՟ծ մեր՝ զի
տեսցեն աչք մեր զփրկութի՟ քո
Եկեսցէ՛ և բնակեսցի՛ առ մեզ
ա՟ծութի՟ն քո. և ողորմութի՟ քո
հովանի և պահապան լիցի ՚ի վ՟ր
պաշտօնէից քոց. Ե՛ւ զմեզ զ-
ծառայս քո արժանի արա ՚ի
տուէ՟ և ՚ի գիշերի՝ և յամենայն
ժամու՟, մի՛շտ խորհել՝ խօսել պա
տու՟իրանաց քոց. Ե՟ գոհանա
լո՛վ փառաւորեսցուք զհայր և
զորդի և զսուրբ հոգին. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից
Խաղաղութի՟ն ամենեցուն։
Կենդանարար զօրութեան և աղ
բեւր անմահութեան, դու ես
քս՟ ա՟ծ փրկիչ մեր։ Որ շնորհե

ցեր մեզ 'ի մէջ գիշերի յառնել՝
և խոստովան լինել առ քեզ՝ վասն
իրաւանց արդարութեան քո։
Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէ՛ր
Ած մեր՝ արա զմեզ արթունս և
պատրաստ 'ի ժամ առաւօտու
ընդ սե̄ս քո։ Եւ ընդ նոսին գո
հանալով փառաւորեսցուք ըզ
քեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սր
բոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն։
Գոհութեամբ և ճշմարիտ խոս
տովանութեամբ՝ անդադար փա
ռաւորեմք զհայր և զորդի և զս̄բ
հոգին, այժմ և միշտ և յաւի
տեանս յաւիտենից։
Օրհնեա՛լ Տր մեր՝ և փրկիչ
ՅՍ ՔՍ ամէն։



ալար զաջոյ ձեռանէ հոգւոյս կամացն ·
ասէ ։

Պակասեցին օրհնութիւնք ՚ի դաւթէ յորդւոյ յեսսեայ. սաղմոս ասափայ։

ՈՐՊԷՍ ԲԱՐԻ
է իսրայէլի աստուած. և
ոյք ուղիղ են սրտիւք.
Բայց զի իմ, փոքր մի և սասա
նեցան ոտք. սակաւ իմի
ևս՝ գայթագղեցին
գնացք իմ։

Նախանձեցայ ես ընդ անօրէնս զխաղաղութիւն մեղաւորաց. որպէս տեսանէի, զի ոչ գոյր վրէպ մահու նոցա։

Հաստատուն են տանջանք նոցա. ի վաստակս մարդկան չէին նոքա. և ընդ մարդկան ոչ տանջեսցին։

Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն. արկին զիւրեամբք զամբարշտութիւն. և զանիրաւութիւն իւրեանց։ Ելցէ որպէս ի ճարպոյ անիրաւութիւն նոցա. զի գնացին նոքա ըստ խորհրդոց սրտից իւրեանց։ Խորհեցան և խօսեցան զչարութիւն. և զապիրատութիւն ի բարձունս խորհեցան։

Եդին յերկինս զբերանս իւր
եանց. եւ զլեզուս իւրեանց
անցին զերկրաւ։
Վասն այսորիկ ժողովուրդ իմ
դարձցի այսրէն. եւ աւուրք իմ
լի կատարեալ գտցին ՚ի նոսա։
Ասացին՝ զիա՞րդ. գիտաց Ած,
կամ դուցէ արդեօք գիտութիւն
առ՚ի բարձրեալն։
Ահա մեղաւորք են եւ յաջող
եալք նոցա. կամ՝ եւ ունին զմե
ծութիւն աշխարհի։
Ասացի՝ զուր՝ ուրեմն արդա
րացուցի զսիրտ իմ. լուացի ըս
քութեամբ զձեռս իմ. եւ եղէ ես
խոշտանգեալ զօրհանապազ. եւ
կշտամբանք իմ ընդ առաւօտս։
Եւ եթէ ասէի թէ այսպէս պատ

Տ. Կեղծ։

մեցից. ահաւասիկ յազգ որդւոց
քոց՝ որոց ուխտեցի ծ :
Ի միտ եդի, թէ սակայն և այս
ջանէ առաջի իմ, մինչև մտից ՚ի
սրբութիւնն այ. և ՚իմ՛տ առից
զկատարած նոցա :
Սակայն՝ վասն նենգութեան
նոցա տարադե՛ր արարեր զնոսա
և կործանեցե՛ս զնոսա յամբար
տաւանութեան իւրեանց :
Իսկ՝ զիարդ եղեն աւեր՝ յան
կարծակի սատակեցան. պակա
սեցան՝ կորեան՝ վասն անօրէնու
թեան իւրեանց. եղեն որպէս
երազք զարթուցելոց :
Տ՜ր ՚ի քաղաքի քում զպատկերս
նոցա անարգեցե՛ս. զի հուր բոր
բոքեցաւ ՚ի սրտի իմում և երի

ուրբաթ

կամունք իմ այլագունեցան ։
ա. արհամարհեալ եղէ՝ և ոչ
փառացի . որպ անաստ՛ւն համարե
ցայ առաջի քո . և ես յամենայն
ժամ ընդ քեզ եմ ։
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ . ՚ի
որհուրդս քո առաջնորդեցեր
ինձ . և փառօք ընկալար զիս ։
Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս
կամ ՚ի քէն զի՞նչ ես խնդրեցից
յերկրի ։
Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին
իմ . Ած սրտի իմոյ , բաժին իմ
Ած յաւիտեան ։
Ահաւասիկ ոյք հեռի արարին
զանձինս իւրեանց ՚ի քէն , կորի
ցեն . սատակեսցես զամենեսեան
որք ապստամբք եղեն ՚ի քէն ։

Եղաւ ... սղին ամիքէն

Ինձ մերձենալ առ ած բարի է
եդնել առ տր զյո՛յս իմ
Պատմե՛լ զամենայն օրհնութիս
քո. ՚ի դրունս դստե՛ր սիոնի:

Տունք ԻԴ.



պէս զանտառաւն փայտ կոտորեցին զդրուն
սնականերն եւ այրեցին զորքութեան։ 365

# Իմաստութիւն Ասափայ ։

Ընդէ՞ր մերժեցեր Աստուած ՚ի սպառ . բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քո ։

Յիշեա՛ զժողովուրդ քո զոր ստացար ՚ի սկզբանէ . փրկեցեր զվիճակ ժառանգութեան քո ։

Լեառն սիոն այս՝ ուր բնակեցար դու ՚ի նմա . համբարձ զձեռն քո՝ ՚ի վերայ ամբարտաւանութեան նոցա ՚ի սպառ ։

Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ՚ի սրբութեան քում . և պարծեցան ատելիք քո ՚ի մէջ բարեկենդանութեան իւրեանց ։

Եդին զնշանս իւրեանց ՚ի նշանս և ինքեանք ո՛չ ծանեան զելս ՚ի վերուստ ։

Փառք

Որպէս զկայտառէ, փայտատօք
կոտորեցին զդրունս նորա . ՚ի
միասին փայտատօք և մրճօք կոր
ծանեցին զնա ։

Այրեցին ՚ի հուր զսրբութիւն
քո յերկրի . և պղծեցին զխորան
անուան քո ։

Ասացին ՚ի սիրտս իւրեանց ազգք
նոցա ՚ի միասին . եկայք լռեցուս
ցուք զամ տօնս այ յերկրէ .

Զնշանս մեր ինչ ոչ տեսաք . և
ոչ ևս գուցէ մարգարէ . և զմեզ
ինչ ոք ոչ ճանաչիցէ ։

Մինչև յերբ այ նախատէ
թշնամին, և բարկացուցանէ հա
կառակորդն զանուն սուրբ քո ։

Ընդէր դարձուցանես զձեռն
քո . և զաջ քո ՚ի միջոյ ծոցոյ
քումմէ իսպառ ։  Այ

Ած Թագաւո՛ր մեր՝ յառա՛ջ քան
զյաւիտեանս. որ արարեր զփր
կութիւն ՚ի մէջ երկրի։
Դու հաստատեցեր զօրութ՛ե
քով զծով. և դու խորտակեցեր
ին զգլուխս վիշապաց ՚ի մէջ ջուրց։
Դո՛ւ փշրեցեր զգլուխս վիշապին
՚ի և ետուր զնա կերակուր զօրա՛ցն
Հնդկաց։
Դու բղխեցուցեր զաղբիւրս
և զվտա՛կս. և դո՛ւ ցամաքեցու
ցեր զգետս սաստիկս։
Քո՛ է տիւ և քո՛ է գիշեր. զլոյս
և զարև դո՛ւ արարեր. և դո՛ւ
հաստատեցեր զամենայն սահմա՛նս
երկրի. զգարուն և զամառն դո՛ւ
ստեղծեր։
Յայս յո՛ւշ լիցի քեզ՝ զի թշնա

մին նախատեաց զՏ՟րդ . ժողո
վուրդ անզգամ բարկացոյց զա
նուն սբ՟ քո :

Մի՛ մատներ գազանաց՝ զանձն
որ խոստովան առնի առ քեզ . և
զանձինս տնանկաց քոց մի՛ մոռա
նար իսպառ :

Հայեաց յուխտ քո. զի լցան տունք
աւերելոց յերկրի անիրաւութեան:

Մի՛ դարձցի տնանկն ամաչե
ցեալ . այլ աղքատն և տնանկն՝
օրհնեսցեն զանուն սուրբ քո :

Արի՛ Ա՟ծ և դատեա՛ զդատաս
տանս քո . յիշեա՛ զնախատինս՝
որ յանզգամէն զօրհանապազ :

Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից
քոց . ամբարտաւանութիւն ատե
լեաց քոց վերասցի հանապազ:



Տ̃Ր̃ հաստատեաց զոխւն յուսոյն ՚ի մեզ։

Ի կ՟տ՟րծի. մի ապականեր. ընդ օրհնութիւնս սաղմոս յասափ։ Երգ առ ասորեստանեայսն։

Խոստովան եղիցուք առ քեզ ա՟ծ, խոստովան եղիցուք՝ եւ կարդասցուք զանուն սուրբ քո։

Պատմեսցէ զա՟մ սքանչելիս քո. յորժամ ժամ առից՝ ես ուղիղ դատեցայց։

Մաշեցաւ երկիր՝ եւ ա՟մ բնակիչք նո՟ր. ես հաստատեցի զսիւնս նո՟ր։

Ասացի անօրինաց, թէ մի անօրինիք. եւ մեղաւորաց, թէ մի բարձրացուցանէք զեղջիւրս ձեր։

Մի համբառնայք ՚ի բարձունս



ՀԴ

զեղջիւրս ձեր. եւ մի խօսիք զա̃յ
անիրաւութիւն:

Զի ո՛չ յարեւելից՝ եւ ո՛չ յարեւ
մտից՝ եւ ո՛չ յանապատէ լերանց,
այլ ա̃ծ դատաւորէ:

Զի այս խոնարհ առնէ՝ եւ զայն
բարձրացուցանէ. բաժակ ՚ի ձե
ռին տ̃ն, գինի լի անապակ ար
կեալ. եւ խոնարհեցոյց յայսմա
նէ յայս:

Սակայն՝ մրուր նորա ո՛չ սպա
ռեսցի. եւ արբցեն զնա ա̃մ մե
ղաւո՛րք երկրի:

Ես ցնծացայց յաւիտեան. սաղ
մոս ասացից ա̃յ յակոբայ:

Զա̃մ եղջիւրս մեղաւորաց
փշրեսցես. եւ բարձր եղիցի եղ
ջիւր արդարոյ:



Նարածեաղզճեան դահիթ․ կարդայ ձա
նեւ աւա՛ր ։

✠ ՀԵ ✠

Ի կատարած ընդ օրհնութ՟եսս ։ Մի ապականեր ․ սաղմոս յասափ ․ երգք առ ասորեստա նեայսն ։

---

Յայտնի է ՚ի Հրէաստանի Ա՟ծ և յիսրայէլ մե՟ծ է անուն նորա ։

Եղև ՚ի խաղաղութեան տեղի նորա ․ և բնակութիւն նորա ՚ի սիօն ։

Անդ խորտակեաց տ՟ր՝ զզօրութիւն աղեղան՝ զվէ՟ն՝ զսուր՝ և զճակատամարտ ։

Լուսատու ես դու սքանչելապէս Ա՟ծ, լերանցն յաւիտենից ․ խռո վեցին ամենեքեան որք անմիտք էին սրտիւք ․ ննջեցին զքունս իւրեանց՝ և ինչ ոչ գտին ։

Ամենայն արք ՝ 'ի մեծութե՟ ձե-
ռաց իւրեանց · 'ի սաստէ՛ քումմէ
ա՟ծ յակոբայ, ննջեցին · և որք
հեծեալ էին 'ի ձիս ։

Դու ահաւո՛ր ես ՝ և ո՞վ կարէ
կալ առաջի քո · որպէս երևե
ցար դու յերկնից · յայտնե՛ եղև
բարկութիւն քո ։

Երկիր երկեա՛ւ և սարսեաց՝
ընդ յառնելն ա՟յ 'ի դատաստան ·
և ընդ ապրեցուցանել զամենայն
հե՛զս երկրի ։

Խորհուրդք մարդկան խոս
տովա՟ն առնե՟ն առ քեզ · և ծած
կեալք իմաստութեամբ օրհ
նեսցե՟ն զքեզ ։

Ուխտս դիք և կատարեցէք ա՟ծն

աստուծոյ մերոյ • ամենեքեան
որք շուրջ էք զնովաւ :

Մատուցէք պատարագս ա
հաւորին • որ քաղէ զհոգիս իշխա
նաց • ահաւոր է նա քան զամ
թագաւորս երկրի :

## Տունք Ճ.



Զ հաց երկնից զմանանայն. և թև
աւոր զլորամարգին ։

✠ ՀԶ ✠

# Ի կատարած վասն դիթօմայ Սաղմոս Յասափ։

Ձայնիւ իմով ես առ տէր՝ կարդացի. ձայնիւ իմով առ Աստուած՝ և նայեցաւ առ իս։

Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած՝ խնդրեցի ձեռօք իմովք. և ՚ի գիշերի առաջի նորա ո՛չ խաբեցայ։

Ո՛չ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զԱստուած և ուրախ եղէ. հոգայի, և նուաղէր ※ յիս հոգի իմ

✠ Հանգիստ ։ ✠

Ժամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ և ո՛չ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջինս. և զամսն յաւիտենից յիշեցի։

Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սրտի իմում.

խնամ. հոգայն՝ և տառապէր
յիս հոգի իմ ։

Միթէ յաւիտենից մերժեսցէ
զիս Տր. և ո՞չ ևս յաւելցէ՛ ՚ի հա
ճել ընդ իս ։

Կամ իսպա՞ռ արգելցէ զողոր
մութի՛ իւր յինէն. կամ կատար
եա՞ց զբան իւր ազգէ մինչև յազգ.
Կամ մոռասցի՞ գթալ ած իմ. և
նս. կամ արգելցէ՞ զգթութիւն
իւր, բարկութեա՛մբ իւրով ։

Ասացի, և այժմ սկսայ. այսէ նո
րոգումն աջո՛յն բարձրելոյ ։

Յիշեցի զգո՛րծս տն՝ իսկզբանէ.
յիշեցի զսքանչելիս նորա ։

Խորհեցայ յամենայն գո՛րծս քո
և ՚ի ձեռագո՛րծս քո խորհեցայ.

Ած ՚ի սրբութեա՛ն են ճանա

պարհք քո. ո՛վ է ա՛ծ մեծ՝ որ
պէս զա՛ծ՛ մեր. դո՛ւ ես ա՛ծ, որ
առնես զսքանչելիս:

Ցուցեր ժողովրդեան քում
զզօրութի՛ն քո. եւփրկեցեր բազ
կաւ քով զժողովուրդս քո. զոր
դիսն յակօբայ եւ յովսեփու:

Տեսին զքեզ ջուրք ա՛ծ. տե
սին զքեզ ջուրք եւերկեան՝ եւ
խորք խռովեցան՛ ի ձայնէ ջ՛րոց
բազմաց:

Զա՛յն ետուն ամպք. քա՛նզի՝ եւ
նե՛տք քո գնան՝ ՛ի ձայնէ որոտա
լո՛յ քո՛ անուոյն:

Երեւեցան փայլատակո՛ւնք քո
տի՛եզերաց. խռովեցաւ եւդո
ղա՛ց երկիր:

Ի ծովո՛ւ են ճանապարհք քո՝

ևշաւ՟իղք քո 'ի ջուրս բազումս.
ևհետք քո ո՛չ երևին։
Առաջնորդեցեր որպէս խաշինս
ժողովրդեա՟ն քո. 'ի ձեռն մո
սեսի ևահարոնի։

Տունք Ժ͞Ը։

Պ. ուբղայս Հ͞Ը. տունէ։



Գորտե՛ն ապականեաց զսեղան թագաւո
րին ։

ՀԷ

Ի կատարած իմաստութեան յասափայ ։

Նայեցրուք ժողովուրդք յօրէնս իմ. և խոնարհեցուցէք զունկն ձեր՝ ՚ի բանս բերանոյ իմոյ ։

Բացից առակաւ զբերան իմ. և խօսեցայց զառակս ՚ի սկզբանէ ։

Որպէս լուաք և ծանեաք զայս. և հարքն մեր պատմեցին մեզ ։

Ո՛չ ինչ ծածկեցաւ յորդւոց նոցա յայլ ազգ. պատմել զօրհնութիւնս տեառն՝ զզօրութիւն և զսքանչելիս իւր զոր արար ։

Հաստատեաց զվկայութիւն իւր առ յակոբ. և օրէնս եդ ՚ի մէջ իսրայէլի ։

Որ ի՛նչ միանգամ պատուէ՛րեաց
հա՛րցն մերոց․ ցուցանել զայս
որդւո՛ց իւրեանց․ զի ծանիցեն
յա՛զգ այլ։
Որդիք որք ծնանիցին՝ յարիցեն
եւ պատմեսցեն զայս որդւո՛ց իւր
եանց․ զի դիցեն առ ա՟ծ զյո՛յս
իւրեա՟ց․ եւ մի՛ մոռասցին․ զգործս ա՟յ։
Զ պատուէ՛րանս նորա խնդրե
լո՛վ խնդրեսցեն․ եւ մի՛ եղիցին,
որպէս եւ հա՛րքն իւրեանց։
Ազգ չար եւ դառնացօղ․ ա՛զգ՝
որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր․ եւ ո՛չ
հաստատեաց առ ա՟ծ զհոգի իւր։
Որդիքն եփրեմի լւաձ՛իգք եւ
պնդաձի՛գք․ յաւուր պատերազ
մի ՚ի կապա՛րձս դարձուցին։
Ո՛չ կացին նոքա յուխտին ա՟ն․

Թուղթ Ղէ

ի՟զ 384 Եւ րատ

և ըստ երասանաց նորա ոչ կամե-
ցան գնալ։

Մոռացան զերախտիս նորա. և զսքանչելիսն զոր եցոյց նոցա։

Առաջի հարց նոցա արար զսքանչելիս իւր. յերկրին եգիպտացւոց. և ՚ի դաշտին տանեոսու։ Տան

Հերձ զծովն և անցոյց զնոսա. կացոյց զջուրսն որպէս տիկս։

Առաջնորդեաց ն̃ց ամպով ՚ի տուէ. և զա̃մ գիշեր ՚ի լոյս հրոյ։ Լուսով

Հերձ զվէմն յանապատի. և ետ ըմպել նոցա որպ̃ ՚ի խորոց մեծէ։

Եհան զջուրսն ՚ի վիմէն. և հոսեաց որպէս զգետս զջուրսն։

Սակայն յաւելին ՚ի մեղանչել. և եւս բարկացուցին զբարձրեալն յանջրդի։

Փորձեցին զա՟ծ ՚ի սրտս իւր
եանց . ՚խնդրել զկերակուր ան
ձանց իւրեանց ։

Տրտնջեցին զա՟յ ասացին . մի
թէ կարօ՞ղ իցէ ա՟ծ՝ պատրաս
տել զսեղան յանապատի ։

Քանզի՝ հարկանէր զվէմն՝ և
հոսէին ջուրք . և վտակք խա
ղային ՚ի նմանէ ։

Մ՛ղէ՝ հա՞ց եւս կարասցէ տալ
նա մեզ . կամ պատրաստեսցէ
զսեղան ժողովրդեան իւրոյ ։

Վասն այսորիկ լուաւ զայս տ՟ր՝
և յապաղեաց . հուր բորբոքե
ցաւ ՚ի յակոբ . և բարկութիւն
ա՟յ, ել ՚ի վերայ իսրայէլի ։

Զի ո՛չ հաւատացին յա՟ծ . և
ո՛չ յուսացան ՚ի փրկութիւն նոր՟։

Հրաման ետ ամպոց ՚ի վերուստ՝ և զդրունս երկնից եբաց. և տեղաց ՚ի նոսա մանանայ ՚ի կերակուր։ ե

Ո հաց երկնից ետ նոցա զհաց հրեշտակաց կերան մարդիկ. և իջոյց ՚ի նոսա զկերակուր ՚ի լիութիւն։ Դպիրք

Եհան զհողմն հարաւոյ. և էած զօրութեամբ իւրով զհիւսիսի։

Տեղեաց ՚ի նոսա միս որպէս զհող և որպէս զաւազ ծովու զթռչունս թեւաւորս։

Եարկ ՚ի մէջ բանակի նոցա. և շուրջ զվրանօք նոցա.

Կերին և յագեցան յոյժ. և զցանկութիւն նոցա ետ նոցա. և ոչ ինչ կարօտ եղեն ՚ի ցանկութենէ իւրեանց։

Մինչ դեռ՝ կերակուրք ՚ի բե-
րանս իւրեանց էին . բարկութի-
ւն ա̃յ ել ՚ի վերայ նոցա :

Եսպան զբազումս ՚ի նոցանէ . և
զընտիրընտիրս յի̃ղէ սատակեաց:

Յայսմ ամենայնի մեղան և՛ս . և
ո՛չ հաւատացին սքանչելեացն նր̃:

Պակասեցան յունայնութեան
աւուրք նոցա . և ամք նոցա փու-
թապէս անցին :

Յորժամ սպանանէր զնոսա ,
խնդրէին զնա . դառնային և ա-
ռաւօտ առնէին առ ա̃ծ :

Յիշեցին՝ զի ա̃ծ օգնական էր
նց̃ . ա̃ծ բարձրեալն փրկիչ էր նց̃ :

Սիրեցին զնա բերանօք իւր-
եանց . և լեզուօք իւրեանց սու-
տեցին նմա . և սիրտք նոցա ոչ էին

ուղիղ ընդ նմա. և ո՛չ հաւատա
ցին ուխտի նորա:
Այլ նաինքն՝ գթած էր. քաւէր
զմեղս նոցա և ո՛չ ապականէր:
Յաճախէր դարձուցանել զբար
կութիւն իւր. և ո՛չ բորբոքեաց
զամ սրտմտութիւն իւր:
Յիշեաց թէ մարմին են նոքա.
հոգի որ երթայ և ո՛չ դառնայ:
Քանիցս անգամ դառնացու
ցին զնա յանապատի. և բարկա
ցուցին զբարձրեալն յանջրդի:
Դարձան՝ և փորձեցին զած. և
զսբն իսրայէլի զայրացուցին:
Ո՛չ յիշեցին զձեռն նորա. յաւ
ուր յորում փրկեաց զնոսա՝ ի ձե
ռաց նեղչաց նոցա:
Որպէս արար զնշանս և զարուէ

Նշանս իւր. յերկրէն եգիպտացւ-
ոց՝ և՚ի դաշտին տայանու։
Դարձոյց յարիւն զգետս նոցա.
և զանձրևս նոցա, զի մի՛ արբցեն։
Առաքեաց ՚ի նոսա շանաճանճ՝
և էկեր զնոսա. և գորտիւք ապա
կանեաց զնոսա։
Ետ ժանկոյ զպտուղս նոցա. և
զվաստակս նոցա, մորախոյ։
Եհար կարկտիւ զայգիս նոցա.
և զթզենիս նոցա եղեամբ։
Մատնեաց ՚ի կարկուտ զանա
սունս նոց. և զստացուածս նոց
հրով դատեցաւ։
Առաքեաց ՚ի նոսա զսրտմտու
թիւն բարկութեան իւրոյ. զսրտ
մտութի՝ զբարկութիւն՝ և զնե
ղութիւն։

Առաքեաց ՚ի նոսա տանջանս ՚ի ձեռն հրեշտակս չարս. և դիմեն ցո՛յց ՚ի նոսա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ։

Ո՛չ անխնայեաց ՚ի մահուանէ զանձինս նոցա. և զանասունս նոցա ՚ի մա՛հ մատնեաց։

Ե՛հար զա՛մ անդրանիկս եգիպտացւոց. զսկիզբն ա՛մ վաստակոց նոցա. ՚ի յա՛րկս քամայ։

✠ Յանդխտ: ✠

Յորդան ետ որպէս խաշին ժողովրդեան իւրոյ. և եհան զնոսա որպէս զհօտ յանապատ։

Առաջնորդեա՛ց նոցա յուսով և ո՛չ երկեան, և զթշնամիս նոցա ՚ի ծո՛վ ծածկեաց։

Եհան զնոսա ՚ի լեառն սրբութեան իւրոյ. ՚ի լեառն յայն՝ զոր
ստացեալ էր աջոյ նորա:

Մերժեաց յերեսաց նոցա զհեթանոսս. եւ վիճակեցոյց ՚ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ եւ բնակեցոյց ՚ի յարկս նոցա
զազգն իսրայելի:

Փորձեցին դառնացուցին զած բարձրեալն. եւ զվկայութիս նորա
ոչ պահեցին:

Դարձան խոտորեցան որպէս եւ հարքն իւրեանց. դարձան եւ
եղեն որպէս զաղեղն թիւր:

Դարձեալ բարկացուցին զնա ՚ի բագինս իւրեանց. եւ դրօշելովք իւրեանց նախանձ արկին նմա:

Լուաւ ած եւ արհամարհեաց զնա

Եւանարգեա՛ց յոյժ զիսրայէլ ։
Մերժեա՛ց յիւրմէ զխորա՛նն
՚ի սելով․ խորանն , զոր բնակե
ցոյց ՚ի մէջ մարդկան ։
Մատնեա՛ց ՚ի գերութիւն զզօ
րութի՛ւն նոցա․ Եւ զգեղ նոցա
՚ի ձեռս թշնամեա՛ց նոցա ։
Արգե՛լ ՚ի սուր զժողովո՛ւրդ
իւր․ Եւ զժառանգութիւն իւր
անտե՛ս արար ։
Զերիտասարդս նց էկե՛ր հուր․
Եւ զկուսանս նց ո՛չ ոք սգացաւ ։
Քահանայք նց անկա՛ն ՚ի սուր․
Եւ զայրիս նոցա ո՛չ ոք էր որ լայր ։
Զարթեաւ որպէս ՚ի քնո՛յ տր․
Եւ որպէս հզօր զի թափէ՛ զգինի ։
Եհա՛ր յետս զթշնամիս իւր․ Եւ նա
խատի՛նս յաւիտենի՛ց արար զնս ։

 Մեր

Մ՛երժեա՛ց նա զխորանն յովսէ
փու. և զազգն եփրեմի նա ո՛չ
ընտրեաց:

Ա. յլ ընտրեաց նա զա՛զգն յուդայ
և զլեառն սիոն, զոր և սիրեաց:

Շ ինեա՛ց որպէս զմիեղջրուճի
ս զսրբութիւն նորա. յերկրի հաս
տատեաց զնա յաւիտեան:

Ը նտրեա՛ց զդաւիթ ծառայ իւր՝
՝ և ընկալաւ զնա ՚ի հօտէ խա
շանց. ՚ի կերջէն ծնելոցն ընկա
լաւ զնա:

Հ ովուել զյակոբ ծառայ իւր.
և զիսրայէլ ժառանգութի իւր:

Ա. րածէր զնոսա իմաստութբ
սրտի իւրոյ. յանմեղութիւն ձե
ռաց իւրոց առաջնորդէր նոցա:

Գ. ուբղայս Հգ. տունէ:



Արկին զմարմինս սրբոյն կերակուր գա
զանաց երկրի ։

ՀԸ

# Սաղմոս Ասափայ ։

Ած եկին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո. եւ պղծեցին զտաճար սուրբ քո ։

Արարին զերուսաղէմ որպէս հնձանս մրգապահաց. արկին զդիականունս ծառայից քոց կեր, թռչնոց երկնից. եւ զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի ։

Հեղին զարիւն նոցա որպէս զջուր, շուրջ զերուսաղէմաւ. եւ ոչ ոք էր որ թաղէր զնոսա ։

ս Եղեաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր՝ եւ այպն կատականաց

այնոցիկ որք շուրջ էին զմեօք ։
Մինչև յե՞րբ Տէր՝ բարկանաս
դու իսպառ բորբոքեսցի որպէս
հուր նախանձ քո ։
Հեղ զբարկութիւնս քո ՚ի վերայ
ազգաց՝ որք զքեզ ո՛չ ճանաչեցին
և ՚ի վերա՛յ թագաւորաց որք զա
նուն քո ո՛չ կարդացին. զի կերին
զյակոբ՝ և զտեղիս նորա աւերեցին ։
Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս
վաղվա՛ղ եկեսցեն առ մեզ ողորմութիւն
քո Տէր՝ զի աղքատացա՛ք յոյժ ։
Օգնեա՛ մեզ Աստուած փրկիչ մեր.
վասն փառաց անուա՛ն քո՛ ։
Տէր փրկեա՛ զմեզ՝ և քաւեա՛ զմեղս
մեր. վասն անուան քո ։
Մի՛ երբեք ասասցեն ՚ի հեթա
նոսս. թէ՞ ո՛ւր է Աստուած նոցա ։

Եւ յայտնի՛ ինչ լիցի ՚ի վերա հե
թանոսաց. առաջի աչա՛ց մերոց.
առ՚ի խնդրել զվրէժ արեան
ծառայի՛ց քոց՝ որոց և հեղաւ։

Մտցէ՛ առաջի քո հեծութիւն
կապելոց. և ըստ մեծութեա՛ն
բազկի քո, շահեա՛ դու զորդիս
սպանելոց։

Հատո՛ դրացեաց մերոց եօ՛թն
պատիկ ՚ի ծոցս նոցա նախատինս՝
որք նախատեցի՛ն զքեզ տ՟ր։

Մեք ժողովուրդք և խա՛շն արօ
տի քոյ. խոստովա՛ն եղիցուք առ
քեզ յաւիտեան. ազգէ յա՛զգ
պատմեսցուք զօրհնութիւնս քո։

Տունք ժ՟դ.



Որ բազմեալ ես ի քերովբէս. կեցո՛ զմեզ
զօրութեամբ որդւոյ քո:

Ի կատարած ՚ի վերայ զուարճացելոցն, վկայութիւն Ասափայ սաղմոս ՚ի վերայ աթուրացւոցն: կամ եթովպացւոցն :

ՀԹ

Որ հովուեսդ իսրայէլի նայեաց որ առաջնորդես որպէս խաշին յովսեփու :

կօ Որ նստիս ՚ի քերովբէս՝ յայտնեաց. առաջի եփրեմի. բենիամինի եւ մանասէի :

ա Զարթո զզօրութիւնքո. եկ ՚ի կեցուցանել զմեզ :

Աստուած զօրութեանց դարձո զմեզ. երեւեցո զերեսսքո ՚ի մեզ եւ կեցցուք:

Տէր Աստուած զօրութեանց՝ մինչեւ յերբ բարկանաս յաղօթս ծառայից քոց :

Ջամբեցեր մեզ զհաց արտասուաց. և արբուցեր մեզ զարտասուս չափով:

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. այպն կատականաց թշնամեաց մերոց:

Տէր զօրութեանց դարձո զմեզ՝ երևեցո զերեսս քո՛ ՚ի մեզ և կեցցուք:

Այգի յեգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս՝ և զնա տնկեցեր, և առաջնորդեցեր նմա: Գ զնոսա՛

Պատրաստեցեր զարմատս նորա և ելից զերկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա. և բարունակ նորա զմայրսն այ̃: զմայրիսն

Ձգեաց զորթ իւր մինչև ՚ի ծով. և մինչև ՚ի գետս են շառաւիղք նր̃.

Ընդէ՞ր քակեցեր զցա՛նկ նորա.
և կթեն զնա անցաւո՛րք ճա
նապարհի:
Ապականեաց զնա խո՛զ անտառի
և երէվայրի արածեցաւ 'ի նմա:
Աստուած զօրութեանց՝ դա՛րձ, հայ
և եա՛ց յերկնից և տես. ա՛յց արա
այգւոյս այսմիկ. և դարմա՛ն տար
սմա, զոր տնկեաց ա՛ջ քո:
Ի վերայ որդւո՛յ մարդոյ՝ զոր զօ
րացուցե՛ր զնա 'ի քեզ. այրե
ցեալ 'ի հուր և աճերեալ. 'ի սաս
է տէ քումմէ կորիցեն:
Եղիցի ձեռն քո 'ի վերա ա՛ռն.
աջ քո 'ի վերայ որդւո՛յ մարդոյ՝
զոր զօրացուցե՛ր զնա 'ի քեզ:
Ո՛չ ևս խռացեալ եղիցուք մեք
'ի քէն. կեցուսցե՛ս դու զմեզ.
 և զա

եւզանուն քո տէր կարդասցուք։

Ա՟ծ զօրութեանց դարձո՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ՚ի մեզ եւ կեցցուք։

Տունք ժէ։



Առածու եւեղջեր փողով· աղաչեցէք զԹագաւորն Տն։

Ի կտրծ մտ հնձանաց ։ սղմս յասափ. հինգերորդ շաբաթուն ։ Ձ

Ցնծացէք առ ած, օգնականն մեր. և աղաղակեցէք առ ած յակոբայ ։

Առէք սաղմոս և տուք զօրհնութիւն. սաղմոս ասասցէք նմա 'ի ձայն քաղցրութեան ։

Փող հարէք 'ի գլուխս ամսոց. յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց ։

Հրաման է այս իսրայէլի. և իրաւունք են այ յակոբայ ։

Վկայութիւն յովսեփու զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ ։

Ի բա՛ց արար ՚ի բեռանց զԹիկո՛ւ-
նըս նո՛ր · եւ ձեռս նորա յո՛րԹ եւ
՚ի Թի ծառայեցի՛ն ։

Ի նեղուԹե՛ն կարդացե՛ր առ իս՝
եւ փրկեցի՛ զ.քեզ · լուա՛յ քեզ ՚ի
գաղտնուԹենէ մըրրկի՛ն՝ եւ փոր-
ձեցի զ.քեզ ՚ի վե՛րա Ջո՛ւրցն հա-
կառակուԹեան ։

Լո՛ւր ժողովո՛ւրդ իմ եւ վկայե՛մ
քեզ · եւ Իէ՛լ, Թէ լուիցե՛ս ինձ ։

Մի՛ եւս եղիցի՛ն քեզ աստուա՛ծք
առժամայնք · եւ մի՛ երկիր պագա-
նիցես դու՝ աստուծոյ օտարի ։

Ե՛ս եմ տ՟ր ա՟ծ քո՝ որ հանի ըզ
քեզ յերկրէ՛ն եգիպտացւոց՝
բա՛ց զբերանս քո՝ եւ լցի՛ց զդա ։

Ժողովուրդ իմ ո՛չ լուա՛ւ ձայնի
իմում · եւ իսրայէլ յիս ի՛նչ ո՛չ
նայեցա՛ւ ։

Բարձի թողի զնոսա, երթալ ըզ հետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

Եթէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ. կամ Իսրայէլ զճանապարհս իմ գնացեալ էր:

Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էի զթշնամիս նոցա. և ՚ի վերայ նեղչաց նոցա արկեալ էի զձեռն իմ ՚իմ ՚ր

Թշնամիք տեառն, ստեցին նմա. և եղիցին ժամանակք նոցա աշխարհի:

Կերակրեաց զնոսա ՚ի պարարտութենէ ցորենոյ. և ՚ի վիմէ մեղր յագեցոյց զնոսա:

Տունք ժզ:



Կ․ այցէ մտ․ ՚Ի մէջ աստուածացելոց
առնել դատաստան ։ 

# Սաղմոս Յասափ։

Աստուած եկաց ՚ի ժողովս աստուծոց.
և ՚ի մէջ ի նոցա դատէր զնոսա։
Մինչև երբ դատէք անիրաւու
թիւն. և ակն առնուք մեղաւորաց։
Իրաւ արարէք որբոյն և այրւոյ.
իրաւունս արարէք տնանկին և
խոնարհի։
Ապրեցուցէք զաղքատն և
զտնանկն. ՚ի ձեռաց մեղաւորի
փրկեցէք զնոսա։
Ո՛չ իմացան և ո՛չ ՚ի միտ առին.
՚ի խաւարի գնային. և շարժե
ցին ամենայն հիմունք երկրի։
Ես ասէի թէ աստուածք իցէք.
կամ որդիք բարձրելոյ ամենե
քեան։

Դո՛ւք ահաճառդենք որպէս ըզ
ք մարդենս ՚ Մեռանիք · եւ որպէս
զմի յիշխանաց անկանիցիք ։
Արի՛ ա͞ծ դատեա զերկիր · զի
դու՛ ժառանգեսցես զամենայն
հեթանոսս ։

Տունք Է ։

Պաւրղայս ճզ՟ տունէ ։



Բանակք այլազգեացն սաստկեցան
բոցով բարկութ՟ ան՟։

ՁԲ

Օրհնութիւն սաղմոսաց Դա
ւթայ :

Աո՞վ քեզ նման իցէ
մի՛ լռեր՝ և մի՛ դա
դարեր ած :
Զի ահա՛ Թշնամիք քո գոչեցի՛ն
ևատելիք քո համբարձի՛ն զգը
լուխս իւրեանց :
Ի վերայ ժողովրդեան քո խո
րամանկեցի՛ն զգխոութիւն. խոր
հեցան ՚ի վերա՛յ սրբո՛ց քոց և ա
սացին :
Եկա՛յք սատակեսցուք զնոսա
յազգաց . և մի՛ յիշեսցի անուն
իսրայելի և ևս :

Խորհեցան միաբանութեամբ ՚ի
միասին . և վս՟ քո ուխտ արարին ։
Խորանք եդովմայեցւոց՝ և իս
մայելացիք . մովաբ և հագարացիք
Գեբաղ՝ ամօն՝ ամաղէկ . և այլ
ազգէքն ամենայն բնակչօքն՝
հանդերձ ծուրաւ ։
Նաև ասուր եկեալ էր ընդ նո
սա . ամենեքեան օգնա զօրա
վիգն էին որդւոցն ղովտայ ։
Արա զնոսա որպէս զմադիամ .
որպէս զսիսարայ՝ և որպէս զա
բին՝ ՚ի ծործորսն կիսոնի ։
Սատակեցան նոքա յայէնդով
րայ . և եղեն որպէս զաղբ երկրի ։
Արա զիշխանս նոցա որպէս զօ
րէբն . ըզզէբն . զզէբէէ , զսաղ
մանայ . և զամ՟ իշխանս նոցա .

Որ.ք ասասցին ժառանգեսցուք
'ի մեզ զսրբութիւնն այ :
Ած 'իմ, արա զնս ոպ զանիւ .
եւ ոպ զեղէգն առաջի հողմոյ :
Որպէս հուր, զի այրէ զանտառս
եւ որպէս բոց, զի կիզու զլերինս :
Նյպէս՝ հալածեսցես զնոսա
մրրկաւ քով . եւ բարկութբ
քով խռովեցուսցես զնոսա :
Լից զերեսս նոց անարգանօք .
եւ խնդրեսցեն զանուն քո Տր :
Ամաչեսցեն եւ խռովեսցին յաւ
իտեանս յաւիտենից . եւ ամօթա
լից կորիցեն :
Ծանիցեն զի անուն քո Տր' է .
եւ դու միայն բարձրեալ ես 'ի վր
ամենայն երկրի :
Տուն քժը :



Ի բուեցաւ՟ած Հրեշտակաց իւրոց՝ ի
Նորս սլօն։

Ի կատարած. վասն հնձանաց՝ որդւոցն կորխայ.

Որպէս սիրելի են յարկք քո՝ տ͞ր զօրութեանց. ցանկայ և փափա գէ անձն իմ ՚ի գաւիթս քո:

Սիրտ իմ և մարմին իմ ցնծացին առ ա͞ծ կենդանի:

Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն. տատրակն զբոյն. ուր դիցէ զձագս իւր:

Սեղանք քո տ͞ր զօրութեանց. թագաւոր իմ և ա͞ծ իմ:

Երանի ամենեցուն՝ որք բնա կեալ են ՚ի տան տ͞ն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն ՚ի քէն է. ելս եդ ՚ի սրտի իւրում.

'ի հովանիս տրտմութեան, 'ի տե
ղւո՛ջ յորում ուխտեայ :

Ո՜ օրհնութի՛ւն սատասցի՝ որ զօ
րհ՛նս դնէ. գնասցէ՛ նա 'ի զօրու
թենէ 'ի զօրութիւն. եւ երեւես
ցի ա՛ծ հրեշտակաց 'ի սիոն :

Տէ՛ր ա՛ծ զօրութեանց՝ լո՛ւր աղօթից
իմոց. ունկն դի՛ր ա՛ծ յակոբայ :

Ընդունօ՛ղ ես դու մեր՝ տե՛ս ա՛ծ
եւ նայեա՛ց յերեսս օծելոյ քո:

Վա՛սն զի՝ լա՛ւ է ի՛նձ՝ մի՛ օր, 'ի
գաւի՛թս քո. քա՛ն զհազարս:

Ընտրեցի՛ ես ընդ ա՛ղբ կալ 'ի
տա՛ն ա՛յ. առաւե՛լ քան բնա
կել 'ի յա՛րկս մեղաւորաց :

Ո՜ ողորմութի՛ւն եւ զճշմարտու
թի՛ւն սիրէ՛ տէր ա՛ծ մեր. զշնորհս
եւ զփա՛ռս տացէ :

ՏԷ՛Ր ո՛չ պակաս առնէ զողորմութիւն իւր՝ յա՛յնցանէ, որք գնան յամբծութեան։

ՏԷ՛Ր ա̃ծ զօրութեանց․ Երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ։

Տունք ճ̃դ։



Րծ յերկնից երեւեալ. արդարուն և խա
ղաղուն համբուրեցան: 

ծ̃ղ

Ի կատարած որդւոցն Կորխայ · սաղմոս ։

---

Հաճեցա՛ր տ̃ր ընդ երկիր քո · և դարձուցեր զգերութի՛ւն յակոբայ ։

Թողե՛ր զանօրէնութիւն ժողովրդեան քո · ծածկեցեր զա̃մ մե՛ղս նոցա ։

Լռեցուցե՛ր զա̃մ սրտմտութի̃ս քո · դարձա՛ր ՚ի բարկութենէ սրտմտութեան քո ։

Դա՛րձ առ մեզ ա̃՛ծ փրկի՛չ մեր · դարձո՛ զ սրտմտութիւնս քո ՚ի մէնջ ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տ̃ր · և մի՛ ձգեր զբարկութի̃ քո ազգէ մինչև յազգ ։

Աստուած դու դարձեալ կեցուսցես զմեզ. եւ ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ:

Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. եւ զփրկութիւն քո տուր մեզ:

Լուայց զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ. առ սուրբս իւր՝ եւ առ այնոսիկ, որք դարձեալ են առ նա սրտիւք:

Սակայն՝ մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում:

Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ.

Սաղ. ԿԴ

արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն. և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութի՛ առաջի նորա գնասցէ. դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։

Տունք ԺԲ։

Գ. ուրբաթս. նդ. տունէ։

Յաւուր նեղութեան իմոյ, կար-
դացի առ քեզ՝ և լուար ինձ։
Ո՛չ ոք է նման քեզ յաստուածս
տէր. և ո՛չ ոք է որպէս զգործս քո։
Օ ամենայն ազգս զոր արարեր՝
եկեսցեն և երկիր պագցեն առա-
ջի քո. և փառաւոր արասցեն
զանուն քո յաւիտեան։
Մե՛ծ ես դո՛ւ տէր՝ և առնես
զսքանչելիս. և դու միա՛յն ես աստուած։
Առաջնորդեա ինձ ՚ի ճանապար-
հի քում. և գնացից ՚ի ճշմարտու-
թեան. և ուրա՛խ եղիցի սիրտ իմ՝
երկնչել յանուանէ քումմէ։
Խոստովան եղեց առ քեզ տէր՛
աստուած իմ. բոլորով սրտիւ իմով.
և փառաւոր արարից զանուն քո
յաւիտեան։

Մեծ եղև 'ի վերա իմ ողորմու-
Տր թիւն քո. և փրկեցեր զանձն իմ
'ի դժոխոց ներքնոց։

Ած անօրէնք յարեան 'ի վերա
իմ. և ժողովք հզօրաց խնդրե-
ցին զանձն իմ. և ոչ համարեցան
զքեզ Տր առաջի իւրեանց։

Եւ դու Տր Ած իմ, գթած
ես և ողորմած, երկայնամիտ
բազումողորմ և ճշմարիտ. նայ
եաց առ իս և ողորմեաց ինձ։

Տուր զզօրութիւն ծառայի քո.
կեցո զորդի աղախնոյ քոյ. և ա
րա առ իս զնշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչես
ցեն. զի դու Տր օգնեցեր ինձ
և մխիթարեցեր զիս։

Տունք ժզ։

Որպէս զի ուրախ լիցին ՚ի քեզ ամենեքեան · որոց բնակութիւն ՚ի քեզ է ·

Տունք Է·



Սերահօրեալ մեղօք. ննջէ հոգիս 'ի գերեզմանս մարմնոյս։ 

Օրհնութիւն սաղմոսաց՝ որ
դւոցն կորխայ կատարածի. վ՟ն
մաղաղեթայ իմաստութեան. զի
ետ պատասխանի եմ ման
իմաստութեամբ:

---

ձէ

Տ՟ր ա՟ծ փրկութե՟՝ իմոյ. ՚ի տուէ
կարդացի, եւ ՚ի գիշերի առաջի՛ քոյ:
Մտցեն աղօթք իմ առաջի՛ քո
տ՟ր. խոնարհեցո զունկն քո ՚ի
խնդրուածս իմ:
Զի լցաւ չարչարանօք անձն իմ.
եւ կեանք իմ ՚ի դժոխս. մերձե
ցան. եւ համարեցայ ես ընդ այնո
սիկ, որք իջանեն ՚ի գուբ:
Եղէ ես որպէս մարդ առանց
օգնականի: Եւ ՚ի մեռեալս ա
զատ:

Մերձեցան

Որպէս վիրաւորս, որք ննջեն
՚ի գերեզմանի :

զե Զորս դու ո՛չ յիշեցեր. նոքա
՚ի ձեռանէ քումմէ մերժեցան :

Եդին զիս ՚ի գուբ ներքնումն,
՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու :

Յիս հաստատեցաւ սրտմտու
թիւն քո . և զամենայն զբօսանս քո
ածեր ՚ի վերայ իմ :

Հեռի արարեր յինէն զծանօթս
իմ. և եդին զիս նշաւակ խարեանց :

Մատնեցայ և ո՛չ ելանէի . աչք
իմ տկարացան յաղքատութենէ :

Աղաղակեցի առ տէր զօրհա
նապազ . և համբարձի առ քեզ
զձեռս իմ :

Միթէ մեռելո՞ց առնիցես զսքան
չելիս քո . կամ բժիշկք յարուցա

նիցեն . և խոստովանն առնիցեն

առ քեզ ։

Եթէ պատմեսցէ ոք երբեք՝ ի
գերեզմանի զողորմութիւնս քո
կամ զճշմարտութիւնս քո ՝ի կորս

տեան ։

Եթէ ճանաչիցեն ՝ի խաւարի
սքանչելիք քո . կամ արդարու
թիւն քո յերկիր մոռացեալ ։ ք
Ես առ քեզ տէր աղաղակեցի .
առաւօտու աղօթք իմ ժամա

նեսցեն առ քեզ ։

Ընդէ՞ր տէր՝ մերժես զանձն իմ .
կամ դարձուցանես զերեսս

քո յինէն ։

Տնանկ և վաստակաւոր եմ ես
՝ի մանկութենէ իմմէ . ՝ի բարձ
րութենէ խոնարհեցայ և ապշե
ցայ ։

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո . և արհաւիրք քո խռովեցուցին զիս ։

Շրջեցան զինև որպէս ջուր . և զօր ամենայն պաշարեցին զիս ՚ի միասին ։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ , և զծանօթս իմ . վասն թշուառութեան իմոյ ։

Տունք Ե ։

Պ. ուբղայս . Ճբ . տունէ ։



Օծանէ զդաւիթ ծառայն իմ․ իւղով հո-
գւոյն սրբոյ՝ թագաւոր իսրայէլի․ 

Իմաստութիւն եմանայ յեզրայ
Ց էլացւոյ :

ՁԸ

Զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհնեցից . ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով :

Զի ասացեր թէ աշխարհ ողորմութեամբ շինեսցի . յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո :

Եդի ուխտս ընտրելոց իմոց . երդուայ դաւթի ծառայի իմոյ :

Յաւիտեան հաստատեցից ըզ զաւակ քո . եւ շինեցից ազգէ յազգ զաթոռ քո :

Խոստովան եղիցին երկինք

սքանչելեաց քոց տր. Եւ ճշմար
տութիւն քո յեկեղեցիս սրբոց։
Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ. ցէ
կամ ո՞վ նմանեսցի տն յորդիս այ։
Ած փառաւորեալ է ՚ի խոր
հուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ա
հաւոր, ՚ի վերայ այնոցիկ որք
շուրջ են զնովաւ։
Տր Ած զօրութեանց, ո՞վ նմանի
քեզ. հզօր ես դու տր՝ եւ ճշմար
տութիւն քո շուրջ է զքեւ։
Դու տիրես զօրութեանց ծո
վու. եւ զխռովութիւն ալեաց
նորա, դու ցածուցանես։
Դու խոնարհեցուցանես որպէս
վիրաւորս զամբարտաւանս. եւ
՚ի զօրութեն բազկի քո ցրուե
ցեր զթշնամիս քո։

Քո՛ են երկինք՝ և քո՛ է երկիր. զաշխարհ լրի՛ւ իւրով դո՛ւ հաստատեցեր. զհիւսիս և զհարաւ դո՛ւ արարեր. Թաբօր և Հերմոն յանո՛ւն քո ցնծասցեն։

Քո՛ է բազուկ՝ և քո՛ է զօրութիւն. զօրասցի ա՛ջ քո և բարձր եղիցի ձե՛ռն քո։

Յարդարութիւն և յիրաւո՛ւնս հաստատեալ է աթոռ քո՝. ողորմութիւն և ճշմարտութիւն գնասցեն առաջի երեսաց քոց։

Երանի ժողովրդեան, որք գիտեն զօրհնութիւնս քո Տէր. ի լո՛յս երեսաց քոց գնասցեն. և յանուն քո ցնծասցին զօրհանապազ. և յարդարութեան քում բարձր եղիցին։

Պարծանք զօրութեանց մերոց դու ես Տէր. և ՚ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր.

Տեառնէ է օգնութիւն սրբոյն իսրայէլի. Թագաւորին մերոյ։

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո և ասացեր. եդի զօգնութիւն իմ ՚ի վերայ հզօրին. և բարձր արարի զընտրեալն ՚ի ժողովրդենէ իմմէ։

Գտի զԴաւիթ ծառայ իմ. և իւղով սրբով իմով օծի զնա։

Զի ձեռն իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօրացուսցէ զնա։

Ոչ մեղիցէ նմա թշնամի. և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա.

Հարից առաջի նորա զթշնա-

մ՛իս նոր̃. եւ զատելիս նորա ՚ի պար
, տութի՛ւն մատնեցից ։

Ճշմարտութիւն իմ, եւ ողորմու-
թիւն իմ ընդ նմա. եւ յանուն իմ
բա՛րձր եղիցի եղջի՛ւր նորա ։

Եդից ՚ի ծովու զձեռն նորա. եւ
՚ի վերայ գետոց զա՛ջ նորա ։

Նա կարդասցէ առ իս՝ Հա՛յր իմ
Փդ, ես դու. ա̃ծ ընդունօ՛ղ փրկու-
թեան իմոյ ։

Եւ ես անդրանի՛կ արարից զնա. եւ
բա՛րձր քան զա̃մ թա̃գս երկրի ։

Յաւիտեան պահեցի՛ց նմա զո-
ղորմութիւն իմ. եւ ուխտ իմ
հաւատարի՛մ ընդ նմա ։

Հաստատեցից յաւիտեա՛նս
յաւիտենից զզաւա՛կ նորա. եւ
զաթոռ ն̃ր ո̃պ զաւուրս երկնից ։

Եթէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ. եւ յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ:

Եթէ զարդարութիւնս իմ անարգեսցեն. եւ զպատուիրանս իմ ոչ պահեսցեն:

Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա. եւ տանջանօք զանիրաւութիւնս նոցա:

Բայց, զողորմութիւն իմ ոչ արգելից 'ի նոցանէ. եւ ոչ նենգեցից ճշմարտութեան իմում. եւ ոչ անարգեցից զուխտ իմ. եւ զեն ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ, զայն ոչ արհամարհեցից:

Մի անգամ երդուայ 'ի սրբութն իմ. թէ դաւթիս ոչ ստեցից:

Զաւակ նորա յաւիտեան կացցէ.

և աթոռ նորա որպէս զարեգակն առաջի իմ. և որպէս զլուսին, զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս:

Իսկ դու մերժեցեր և անարգեցեր. և ընդվայր հարեր զօծեալ քո:

Պարծուցեր զուխտ ՚ի ծառայէ քումմէ. և պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա:

Քակեցեր զամ պարիսպս նորա և եդեր զամուրս նոր ՚ի դողումն:

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի. և եղև նա նախատ դրացեաց իւրոց:

Բարձր արարեր զաջ նեղչաց նորա. ուրախ արարեր զամ թշնամիս նորա:

Դարձուցեր զօգնութի̃ն 'ի սրո՛յ
նորա. եւ ո՛չ ընկալար զնա 'ի պա
տերազմի:
Անարգեցեր զսրբութի՛ւն նո̃ր
եւ զաթոռ նո̃ր յերկի՛ր կործանեցեր:
Կոճա՛տ արարեր զաւուրս ժա
մանակի՛ց նորա. եւ հեղե՛ր զնո
վա՛ւ զամօթ:
Մինչեւ յե՛րբ դարձուցանես զե
րեսս քո իսպառ. բորբոքեսցի
որպէս հուր բարկութի՛ւն քո:
Յիսկա՛րդ՝ յիշեա՛ եւ տես՝ ո՛վ է իմ ՇԹ
հանդէսս. մի թէ 'ի զո՛ւր ինչ
ստեղծեր, զա̃մ որդիս մարդկան:
Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ եւ ո՛չ տես
ցէ զմահ. կամ փրկեսցէ զանձն
իւր 'ի ձեռաց դժոխոց:
Ո՞ւր են ողորմութիւնք քո՛ առա տ̃ր

ջինքն. զոր երդուեա՛ր դաւթի
ճշմարտութեամբ քով:

Յիշեա՛ զնախատինս ծառայի
քո. զոր ընկալայ ՚ի ծո՛ց իմ, յազ-
գա՛ց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք
քո տր. նախատեցին փոխանակ
օծելո՛յ քոյ:

Օրհնեա՛լ տր ած յաւիտեանս
յաւիտենից՝ եղիցի եղիցի:

---

Գ. ուբղայս. եը ձայն է:
իսկ կանոնս. ժ է փո՛խ է.
և գ ճ խը. տուն:

Զաշակերտ Ոսկան Րաբունա-
պետի. զտէր յովհաննէսի որդի
կարապետ. զսպասաւորս բանի.
յիշեսջիք առ Քս:



Յարոյց Քս՛ զմեռեալ հոգիսն · 'ի գեր
եզմանէ դժոխոց ։

Օրհնութիւն եսայեայ Որ
դւոյն ամոսայ։

Ի գիշերաց կանխէ հոգի իմ
առա՛ւօտ առնել առ քեզ ա՟ծ։
Վասն զի՝ լո՛յս են հրամանք
քո ՚ի վերայ երկրի. ուսարո՛ւք զար
դարութիւն բնակի՛չք երկրի։
Վարկեսցի անպարիշտն՝ և այլ
ո՛չ ևս ուսցի առնել յերկրի՝ զար
դարութիւն ճշմարտութեան։
Բարձցի ամբարիշտն յերկրէ.
և մի՛ տեսցէ զփառս տ՟ն։
Տ՟ր բա՛րձրեալ՝ և բազուկ քո
հզօ՛ր. և նոքա ո՛չ գիտացին։
Ծանիցեն ամաչեսցեն՝ և նա
խանձ անկցի անխրատ ժողովր
դեան.



արկ

դեան. Եւ արդ՝ հուր զԹշնամիս
քո կերիցէ:
Տ՛Ր ա՟ծ մեր՝ տուր մեզ զխաղա
ղութիւն քո. զի ըստ ամ՟ գործոց
մերոց հատուցեր մեզ:
Տ՛Ր ա՟ծ մեր՝ ստացի՛ր զմեզ. զի
բաց ՚ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք.
և զանուն քո անուանեմք զօր
հանապազ:
Իսկ արդ՝ մեռեալք զկենդանու
Թիւն այլ ո՛չ տեսանիցեն և ո՛չ
բժիշկք յարուցանիցեն:
Վասն այսորիկ՝ ածեր՝ հա
րեր՝ սատակեցեր եղծեր՝
զամ՟ արու մանուկ նոցա:
Յաւել տ՟ր զչար՝ ՚ի վերա չարի
նոցա. և ած զչար՝ ՚ի վերա անօ
րինաց երկրի:

Ճան՛

Տ՛Ր 'ի նեղութեան յիշեցինք
զքեզ. զի փոքր մի նեղութիւն է
խրատ քո, 'ի վերայ մեր:

Որպէս երկո՛ւնք յղւոյ՝ զի հա
սեա՛լ իցեն 'ի ժամանակս ծնըն
դեան. եւ առ ցաւս իւր ճչիցէ:

Նոյնպէս եղեաք սիրելոյ քում
տր. յա՛հ երկիւղ քո յղացեալ
երկնեցաք. եւ ծնաք զհոգի փըր
կութեան քո:

Ո՛չ եւս կործանեսցուք մեք. այլ
կործանեսցին անօրէնք երկրի:

Յարիցեն մեռեալք. եւ կենդա
նասցին ամենեքեան՝. որք եդեա՛լ
քեն 'ի գերեզմանի:

Զարթիցեն, ցնծասցին եւ ու
րա՛խ եղիցին դադարեալք յերկրի:

Վասն զի՝ ցօղդ որ ցօղէ 'ի քէն

Ճ֊Յժկիտղ՛

այդ բժշկութիւն է նոցա . բայց երկիրն ամբարշտեա՛ց սատակեսցի ։

Խո՛յս տուր ժողովուրդ իմ . գնա՛ մուտ ՚ի շտեմարա՛նս քո . և փակեա՛ զդրունս քո առաջի երեսա՛ց քոց ։ Փախի՛ր և թաքիր առ ժամանա՛կ մի . մինչև անցցէ բարկութիւն տն ։

Խաղաղութեանց տուօ՜՛ղ քս զխաղաղութիւն և զողորմութի քո՛ պարգևեա՛ մեզ ։

Մ՝արդասէ՛ր տր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի . և վասն խաչի քո պատու՜ականի . ընկալ զաղաչանս մեր . և կեցո՛ զմեզ ։



Ծովուն մեր եղեր յառաջ, քանզի
աւեղծանեն երկրէ :

# Աղօթք Մովսէսի Առն Այ։

Տր ապաւէն եղեր
մեզ՝ ազգէ մինչեւ յազգ
մինչ՝ չեւ լերինք հաս
տատեալ էին. եւ մինչ
չեւ ստեղծեալ էր զերկիր՝ եւ
զամ՛ տիեզերս ։
Յաւիտենից մինչեւ յաւիտեա
նս դու ես. մի դարձուցաներ

Ն զմարդ ՚ի տառապանս. և ասա
ցեր, դարձարո՛ւք առ իս որդիք
մարդկան:

Հազար ամ՝ յա՛չս տ՟ն որպէս օ՛ր
երեկի, զի էանց. և որպէս
պա՛հ մի գիշերոյ. և ամք նոցա
անարգութեա՛մբ եղիցին:

Ընդ առաւօտս որպէս զդալա
՚րի բուսցին. ընդ առաւօտս
որպէս զդալարի զուարճասցին
և ծաղկեսցին. ընդ երեկոյս թար
շամեսցին՝ չո՛րասցին՝ և անկցին:

Նուաղեցա՛ք մեք ՚ի բարկութե
նէ քումմէ. և ՚ի սրտմտութենէ
քումմէ խռովեցաք:

Եդեր զմեղս մեր առաջի քո.
և զկեա՛նս մեր ՚ի լո՛յս երեսաց քոց:

Ամենայն աւուրք մեր նուաղե
ցա՛ն.

ցա՛ն. և՛ի բարկութենէ քումմէ
խռովեցաք :
Ժամանակ ամաց մերոց անդա-
դա՛ր որպէս սարդի. և թի՛ւ
աւուրց ամաց մերոց ՚ի նոսա եօ
թանասո՛ւն ամ։
Ապա՛ թէ՝ առաւելևս ութսո՛ւն
ամ. և որ ինչ աւելի՛ է քան զա՛յն՝
ցաւօ՛ք և հեծութեամբ :
Ե՛կն ՚ի վերայ մեր հեծութիւն
և խրատեցաք. Ի՛սկ արդ՝ ո՞ գի-
տասցէ ըզ զօրութիւն բարկու-
թեա՛ն քո. և կամ յահէ՛ քումմէ,
զսրտմտութիւն քո համարեսցի : է
Այսպէս ցոյց ինձ զա՛ջ քո. և
որք խոնա՛րհ են սրտիւք, զիմաս-
տութի՛ւնս քո.
Դարձ Տէ՛ր՝ մինչև յե՞րբ. մխիթա-
րեա՛ց ՚ի ծառայս քո : 453 Լ ցա՛ք

Լցա՛ք առաւօտու ողորմութե՛
քո՛վ. ցնծացաք եւ ուրախ եղեաք՝
զամենայն աւուրս կենաց մերոց.
Ուրախ եղեաք փոխանակ աւ՛
ուրցն, յորս խոնարհ արարեր
զմեզ. եւ ամացն, յորս տեսաք
զչարչարանս։

Հայեաց տր ՚ի ծառայս քո՛ եւ ՚ի
գործս ձեռաց քոց. եւ առաջնոր
դեա որդւոց նոցա. եւ եղիցի
լոյս տն այ ՚ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ
արա՛ ՚ի մեզ տր. եւ զգործս ձեռաց
մերոց աջողեա մեզ։

Տունք ճգ.



Ծ վիշապն կլանեցեա ատեւք նռճամ
մամբ։

Օրհնութիւն գովութեան, Դաւթի։

ա Որ բնակեալն յօգնութիւն բարձրելոյն. ընդ հովանեաւ Աստուծոյ յերկնից հանգիցէ։

Ասասցէ Տեառն ընդունօղ իմ ես. ապաւէն իմ Աստուած՝ եւ յուսամ ի նա։

Զի նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողէն. եւ ի բանից խռովութեան։

Ի թիկունս մէջս իւր ընկալցի զքեզ. եւ ի հովանի թեւոց նորա յուսասցես։

Որպէս զզէն, շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա։

Մի երկիցես դու յերկիւղէ գիշերի. եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ։

Յիրէ որ շրջի ի խաւարի. ի դէպ թագաւորութենէ դիւի ի հասարակ աւուր.

Անկցին ՚ի կողմանէ քումմէ հա
զարք . և բիւրք ՚ի ընդ աջմէ
քումմէ . որք առ քեզ ինչ ոչ մեր
ձեսցին :

Բայց միայն՝ աչօք քովք հայես
ցես դու , և զհատուցումն մե
ղաւորաց տեսցես . զի դու տէր
յոյս իմ ես :

Զբարձրեալն արարեր քեզ ա
պաւէն . ոչ հասցին առ քեզ
չարք . և տանջանք մի մերձես
ցին ՚ի յարկս քո :

Զի հրեշտակաց իւրոց պատուէր
եալ է վասն քո . պահել զքեզ ՚ի
յամ ճանապարհս քո .

Ի բազուկս իւրեանց ընկալցին
զքեզ . զի մի երբեք հարցես
զքարի զոտն քո:

՚Դի վերա իժի եւ քարբի գնասցես
դու . եւ ասաո՛ան կոխեսցես զա
ռիւծն եւ զվիշապն :

Ր․ ա՛նզի՝ յիս յուսացաւ եւ
փրկեցից զնա . հովանի եղէց
նմա, զի ծանեաւ զանուն իմ :

Կարդասցէ առ իս՝ եւ ես լուայց
նմա . եւ առ նմա եղէց, ՚ի նեղու
թեան :

Փրկեցից եւ փառաւոր արարից
զնա . երկայն աւուրբք լցուցից՝
եւ ցուցից նմա զփրկութիւն իմ :

Տունք Ժ̅Զ̅ :



Ի սա արմաւենեաց ծաղկեցին առ դարքն ։

ղա

Սաղմոս օրհնութեան. աւուր շաբաթու դաւթի:

Բարի է խոստովան լինել տեառն. եւ սաղմոս ասել անուան քում բարձրեալ.

Պատմել առաւօտու զողորմութիւնս քո. եւ զճշմարտութիւնս քո 'ի գիշերի:

Տասնաղեան սաղմոսարանաւ. 'ի ձայն օրհնութեան գուսլել:

Ուրախ արարեր զիս տէր յարարածս քո. եւ 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց:

Որպէս զի մեծ են գործք քո տէր. եւ յոյժ խոր են խորհուրդք քո:

Այր անզգամ զայս ոչ ծանիցէ. եւ անմիտն զայս ոչ առնու 'ի միտ:

Ի բուսանել մեղաւորաց որպէս
խոտ. ՚ի ծաղկել այնոցիկ որք գոր
ծեն զանօրէնութիւն.

Սատակեսցեն յաւիտեանս յաւի
տենից. եւ դու բարձրեալ ես
յաւիտեանս տ͞ր.

Զի ահա թշնամիք քո տ͞ր. զի
ահա թշնամիք քո կորիցեն.
ցրուեսցին ամենեքեան՝ որք գոր
ծեն զանօրէնութիւն.

Բարձր եղիցի որպէս միեղջեր
ուի եղջիւր իմ. եւ ծերութիւն
իմ ՚ի ձէթ պարարտութեան.

Տեսցէ ակն իմ ՚ի թշնամիսն իմ, եւ
ոյք յարուցեալք են ՚ի վերայ իմ
չարութեամբ. ՚ի նոսա լուիցէ
ունկն իմ.

Արդարքն որպէս զարմաւենիս

ծաղկեսցին. Եւ որպէս զմայրսն
լիբանանու բազումք եղիցին:
Տնկեալք եղիցին 'ի տան տն̄. և
'ի գաւիթս ա̄յ մերոյ ծաղկեսցին:
Եւ ևս՝ և բազումք եղիցին 'ի ծե-
րութեան պարարտութեան.
գիրգք և փափուկք եղիցին, 'ի
պատմել. ուղիղ է տ̄ր ա̄ծ մեր՝
և ոչ գոյ 'ի նմա անիրաւութիւն:

## Տունք ճդ̄:

Գ. ուբղայս. խեւզ̃ տունէ:



Օրհնեալ եկեալ ո՛ր Թագաւո՛ր ·
զգեցեալ զվայելչութիւն ։ 

Յաճուրն առաջին շաբաթու. յոր հաստատեցաւ երկիր. օրհնութիւն գովութեան դաւթի:

✠ ՂԲ

Տ Թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ տր զզօրութիւն՝ ընդ մէջ իւր էած :

Հաստատեաց զաշխարհ, զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո՝ յիսկզբանէ յաւիտեանս դու ես:

Ամբարձան գետք տր. և համբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք յեդնայս իւրեանց:

Ի ձա՛յնէ ջո՛ւրց բազմաց. սքան
չելի եղեն զբօսա՛նք ծովու:
Սքանչելի՛ ես դու տէր ՚ի բար
ձունս. վկայութեանց քոց մեք
յո՜յժ հաւատացաք:
Տա՛ն քում վայելէ սրբութիւն
տէր. ընդ երկա՛յն աւուրս:
Տունք Ղ:

## Սղմ դաւթի Չորեքշաբաթու: ✠ ՂԳ ✠

Աստուած վրէժխնդիր. տէր Աստուած՝
վրէժխնդի՛ր յայտնեցաւ:
Բարձր լեր որ դատես զերկիր.
հատո՛ զհատուցումն ամբար
տաւանից:
Մինչ յե՛րբ մեղաւորք. տէ՛ր՝ մին
չև ե՞րբ մեղաւորք պարծեսցին:
Բարբառեալ խօսէ՛ին զանիր

աւութիւն . խօսեսցին ամենե
քեան՝ որք գործեն զանօրէ
նութիւն :

Զժողովուրդս քո Տէր խոնարհ
արարին . եւ զժառանգութիւնս
քո չարչարեցին :

Զայրին եւ զպանդուխտն սպա
նին . զորբսն կոտորեցին . եւ ասա
ցին ոչ տեսանէ զայս Տէր . եւ ոչ
՚իմիտ առնու ած յակոբայ :

Իմացարուք անզգամք ժողովր
դոց՝ եւ անմիտք, մինչեւ յերբ ոչ
առնուք ՚իմիտ :

Որ տնկեաց զունկն
ինքն ոչ լուիցէ . կամ որ ստեղծ
զակն՝ ինքն ոչ տեսանիցէ :

Որ խրատէ զազգս, ոչապէս թէ
ոչ յանդիմանեսցէ . Որ ուսուցանէ

466 մար

մարդոյ զգիտութիւն · Տէր ճանա
չէ զխորհուրդս մարդկան՝ զի են
ընդ ունայն ։

Երանի՛ մարդոյ՝ զոր խրատես
դու Տէր · և յօրինաց քոց ուսուցա
նես դու նմա ։

Ցածուցանես դու նմա զաւու
րս չարութեան · մինչև փորեսցի
խորխորատ մեղաւորի ։

Ո՛չ մերժէ Տէր զժողովուրդ իւր
և զժառանգութիւն իւր ո՛չ առնէ
անտես ։

Մինչև դարձցին իրաւունք յար
դարութիւն · ընկալցին զնա ամե
նեքեան որք ուղիղ են սրտիւք ։

Ո՛ յարիցէ ընդ իս՝ ի վերայ չարեաց ·
կամ ո՞վ հաճաստեսցի ինձ, ՚ի
՚ի վերայ այնոցիկ որք գործեն զանօ
րէնութիւն ։

Ե Թէ ո՛չ տէրն օգնեալ էր ինձ. փո՛քր մի ևս բնակեալ էր անձն իմ ՚ի դժոխս.

Եթէ ասէի թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ։

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ. մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ։

Մ՛ի հաւասարեսցի քեզ աթոռ անիրաւութեան. ո՛, պատճառաւ է զվաստակս ընդդէմ հրամանի։

Որսացան զանձն արդարոյ. և զարիւն անբիծ, պարտաւո՛ր առնէին։

Եղև տէր ապաւէն իմ. աստուած օգնական յուսոյ իմոյ։

Հատուսցէ նոցա տէր ըստ անօրէնութեան նոցա. և ըստ չարութեան նոցա կործանեսցէ զնոսա տէր աստուած մեր։

# Օրհնութիւն գովութեան Դաւթի:

ՂԴ

Եկայք ցնծասցուք ՚ի Տր. եւ աղա
ղակեսցուք առ Ած փրկիչ մեր:
Կանխեսցուք առաջի նորա խոս
տովանութեամբ. եւ սաղմոսիւք
աղաղակեսցուք առ նա:
Զի մեծ է Տր. թագաւոր մեծ Ն
՚ի վերայ ամենայն երկրի:
Ի ձեռս նր են ամ տիեզերք երկրի Ն
եւ բարձրութիւնք լերանց նորա են:
Նորա է ծով եւ նա արար զնա.
եւ զցամաք ձեռք նորա ստեղծին:
Եկայք երկիր պագցուք նմա.
անկցուք եւ լացցուք առաջի Տն
արարչին մերոյ:
Նա ինքն է Տր Ած մեր. մեք

ժողովուրդք ՚ի ձեռին նորա ՚ և
խաշն արօտի նորա ։

Այսօր եթէ ձայնի նորա լուիջիք․
մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր,
որպէս ՚ի դառնութեանն ։

Յաւուրն փորձութեան յանա
պատին․ ուր փորձեցին զիս հա՛ր
քըն ձեր․ քննեցին զիս ՚ և տեսին
զգո՛րծս իմ զքառասուն ամ ։

Դառնացայ ազգա՛ծն այնմի՛կ
և ասացի․ մի՛շտ մոլորեա՛լ քեն սր
տիւք․ և նոքա ո՛չ ծանեան զճա
նապարհս իմ ։

Որպէս երդուա՛յ ՚ի բարկութե
ան իմում․ թէ մտցեն ՚ի հանգիստ
իմ ։

Փառք Հ․ և Ո․ ։

Կուբղայս Հ․ Ե․ Բ․ Փառնէ ։

 Սաղ

Դառնացայ Է ազգին Է այնմիկ



Օհնեցէք զտէր օրհնութբ նորով · երբեր
պատրեցէք ՚ի դատութենն սրբուն ։ 

ՂԵ

Սաղմոս Դաւթի. ՚ի ժամանակի զի տաճարն շինեցաւ յետ գե րութեանն։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնեցէք զՏէր ամենայն երկիր։

Օրհնեցէք զՏէր՝ և օրհնեցէք զանուն նորա. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա։

Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս նորա. և յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա։

Մեծ է Տէր՝ և օրհնեալ է յոյժ. ահարկու է նա ՚ի վերայ ամենայն կռոց։

Ամենայն կուռք հեթանոսաց
դևք են. այլ տր զերկինս արար։
Խոստովանութիւն և վայելչու-
թիւն առաջի նր. սրբութի և մեծ
վայելչութի ի սրբութե նորա։
Մատուցէք տն տոհմք ազգաց.
մատուցէք տն զփառս և զպատիւ.
մատուցէք տն զփառս անուան
նորա ։

Առէք պատարագս և մտէք
ի սրահս նորա. երկրպագէք տն
ի գաւիթս սրբութե նր. և խռո-
վեսցի յերեսաց նոր ամ երկիր։
Ասացէք ի հեթանոսս թէ տր
թագաւորեաց. հաստատեաց
զաշխարհս զի մի սասանեսցի. և
դատէ զժողովուրդս իւր ուղ-
ղութեամբ ։

Ուրա՛խ եղիցին երկինք ՝ և ցըն
ծասցէ երկիր . զուա՛րճասցի ծով
լրի՛ւ իւրով . ցնծասցի՛ն դաշտք՝
և ամենայն որ է ՚ի նոսա ։

Յա՛յնժամ ցնծասցի՛ն ամենայն
ծառք անտառի յերեսա՛ց տ̃ն , զի
գայ . և գա՛յ նա ՚ի դատե՛լ զերկիր ։
Դատե՛լ զտիեզերս իրաւա՛մբք .
և զժողովուրդս ամենայն ճշմար
տութեա՛մբ իւրով .

Տունք ժ̆ու ե̃ ։



Հրով վառեալ զմորենին. էտես Մովսէս
սինայ լերինն։ Բաղդատեցինք հրոյ փայ
լուկին. և րանցհայրման նման մայրին։ 475

ՂԶ

Սաղմոս դաւթի. ՚ի ժամանակի. զի երկիրն հաստատեցաւ ։

Տէր թագաւորեաց ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք ։

Ամպ և մէգ շուրջ զնովաւ. յիրաւունս և յարդարութեան ուղղեալ աթոռ նորա ։

Հուր առաջի նորա գնասցէ. և այրեսցէ շուրջ զթշնամիս նորա ։

Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց. էտես և սասանեցաւ երկիր ։

Լերինք որպէս մոմ հալեսցին յերեսաց տն. յերեսաց տն ամ երկիր ։

Պատմեսցեն երկինք զարդա

րութիւն նորա. և տեսցեն ամ
ժողովուրդք զփառս նորա։
Ամաչեսցեն ամենեքեան որք
երկի՛ր պագանեն կռոց. և որք
պարծին ՚ի դրօշեալս իւրեանց։
Երկի՛ր պագցեն նմա ամ հրեշ
տակք նորա. զի լուա՛ւ և ուրախ
եղև սիոն. և ցնծասցեն դստերք
յուդայ՝ վասն իրաւանց քոց տր։
Զի դու բարձրեալ ես ՚ի վերա
ամ երկրի. յոյժ բարձրացար ՚ի
վերա ամ կռոց։
Որք սիրէք զտր, ատեցէք զչա
րութիւն. պահէ տր զանձինս
սրբո՛ց իւրոց. ՚ի ձեռաց մեղաւո
րի փրկեսցէ զնոսա։
Լոյս ծագեաց արդարոց. ուղ
ղոց սրտից ուրախութիւն։

Ուրախ եղերուք արդարք ՚ի տր եւ խոստովան եղերուք յիշատա կի սրբութեան նորա ։

Տունքն Ժ և Է ։

ՂԵ Սաղմոս դաւթի. Ի ժամանակի զի երկիրն հաստատեցաւ ։

Օրհնեցէք զտր յօրհնութիւն նոր. զի զսքանչելիս արար ։ Փրկեաց զնա աջ իւր. եւ բազուկ սբ իւր ։ Ցոյց տր զփրկութիւն իւր. առա ջի ազգաց յայտնեաց զարդարու թիւն իւր ։ Յիշեաց ողորմութիւն իւրոյ ըզ յակոբ. ճշմարտութիւն իւրոյ զտունն իսրայէլի. եւ տեսին ամ ծագք երկրի զփրկութիւն այ մերոյ Աղաղակեցէք առ տր ամ երկիր

օրհնեցէք ցնծացէք՝ և սաղմոս
ասացէք։
Սաղմոս ասացէք տն մերում օրհ
նութեամբ. օրհնութեամբ և ի
ձայն սաղմոսաց։
Ի ձայն օրհնութեն կուածոյ փողոյ
օրհնութե՛ ցնծութե՝ և ի ձայն
եղջեր փողոյ. աղաղակեցէք ա-
ռաջի թագաւորին տն։
Խռովեսցի ծով լրիւ իւրով.
աշխարհք և ամենայն բնակիչք
նորա. և գետք ծափս հարցեն
ի միասին § զեռամբ։
Լերինք ցնծասցին առաջի տն,
զի գայ. և հասանելէ տր ի դատել
զերկիր։
Դատէ զաշխարհս արդարութբ
և զժողովուրդս իւր ուղղութբ։

Սաղմոս ՂԷ



Ա. Հարոն և մովսէս քահանայք տն կարդային
առ տր · Եւ նա լսէր նոցա ՚ի նեղանէ ամենայն։

## Սաղմոս Դաւթի :

ՂԸ

Տ Թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստին 'ի քերոբէս սասանեցաւ երկիր :

Տէր 'ի Սիօն մեծ ես. և բարձր 'ի վերայ ամենայն ժողովրդոց :

Խոստովան եղիցուք անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է. և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ :

Դու պատրաստեցեր զուղղութիւն. զիրաւունս և զարդարութիւն յակոբայ դու արարեր :

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է :

Մովսէս և Ահարոն երիցունք
նորա . սամուէլ ընդ այնոսիկ ,
որք կարդան զանուն նորա ։
Կարդային առ Տէր՝ և նա լսէր
նոցա . և ՚ի սեան ամպոյ խօսէր
ընդ նոսա ։
Պահէին զվկայութիւնս նորա .
և զհրամանս զոր ետ նոցա ։
Տէր Աստուած մեր՝ դու լսէիր նոցա .
Աստուած դու քաւիչ լինէիր . և վրէժ
խնդիր ՚ի վերայ ամենայն գործ
ոց նոցա ։
Բարձր արարէք զՏէր Աստուած մեր
երկիր պագէք ՚ի լեառն սուրբ նորա
զի սուրբ է Տէր Աստուած մեր ։

Տունք Ժ ։

ՂԹ

# Սաղմոս խոստովանութեան դաւթի ։

Ողղակեցէք առ Տ՟ր ամ՟երկիր
ծառայեցէք Տ՟ն ուրախութ՟բ։
Մտէք առաջի նորա ցնծութ՟բ.
Ծաներուք զի նա է Տ՟ր Ա՟ծ մեր։
Նա՛ արար զմեզ՝ և ո՛չ մեք էաք
մեք ժողովուրդք և խաշն արօ
տի նորա ։
Մտէք ընդ դրունս նորա խոս
տովանութեամբ . և օրհնութ՟բ
՚ի յա՛րկս նորա ։
Խոստովա՛ն եղերուք Տ՟ն . և
օրհնեցէք զանունն նորա .
Քա՛ղցր Տ՟ր՝ յաւիտեա՛ն է
ողորմութիւն նորա. ազգէ մինչև
յա՛զգ է ճշմարտութիւն նորա ։

Տունք Է ։

Ճ

# Սաղմոս դաւթի ։

Յողորմութիւն և յիրաւու՛նս օրհնեցից զքեզ տէր․ սաղմոս ,ասացից և՛ իմաստ առից ։

Ճանապարհ անբիծ մինչև եկեսցէ՛ս առ իս․ գնայի ես յանբծութե՛ սրտի՛ իմոյ՝ ՚ի մէջ տա՛ն իմոյ ։

Ո՛չ եդի առաջի աչաց իմոց զիրս անիրաւութեան․ որք առնէին զուրացութիւն, ատեցի ։

Ո՛չ մերձեցաւ առ իս որ թի՛ւրն էր սրտիւ․ խոտորեալ յինէն անզգամին․ և ես ինչ ո՛չ փոյթ առնէի ։

Որ խօսէր գա՛ղտ զընկերէ՛ իւր մէ․ զնա բացէ՛ իբրա՛ց հալածէի ։

Որ ամբարտաւա՛ն էր աչօք․ և

ագահ սրտիւ. ընդ նմա և զհաց
ո՛չուտէի:
Աչք իմ ՚ի հաւատացեալս երկ
րի զի նստցին նոքա ընդ իմ: հս
Որ գնայր ՚ի ճանապարհ անբիծ
նա պաշտէր զիս:
Ոչ բնակէր ՚ի մէջ տան իմոյ, որ ժող
առնէր զամբարտաւանութիւն.
և որ խօսէր զանիրաւութիւն, ոչ էր
ուղղեալ նմա առաջի աչաց իմոց:
Ընդ առաւօտս սպանանէի զա
մենայն մեղաւորս երկրի. սա
տակեցից ՚ի քաղաքէ Տն. զամե գիշ
նեսեան որք գործեն զանօրէ
նութիւն:

Տունք Ճ̃

Գուբղայս Ի̃Ղ Տուն է:



Զորացայ որպէս զխաւիճ. և եղէ որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս։

Ճա

Աղօ́թք ուրկի իբրև ձանձրացն առաջի Տն սփռեսցէ զխնդրուա ծս իւր ։

Տէ́ր լուր աղօթից ի-մոց՝ աղաղակ իմ առ քե́զ եկեսցէ ․ մի́ դար ձուցաներ զերեսս քո յինէն ։

Յաւուր նեղութե̃ իմոյ, խոնար հեցո առ իս զո́ւնկն քո ․ յորում աւուր կարդամ առ քեզ վաղվա ղակի լո́ւր ինձ ։

Սպառեցա́ն ո̃պ ծուխ, աւուրք իմ ․ և ոսկերք իմ որպէս խաւի́ չորացան ։ Դ

Հարա́յ ես ո̃պ խոտ՝ և ցամաքե Դ

 ցաւ

ցաւ սի՛րտ իմ. մոռացայ ուտել
զհա՛ց իմ, ՚ի ձայնէ հեծութե՛ իմոյ
Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմնի՛ն իմ.
ա Նմանեցայ ես հաւալուսն յանա
պատի :
Եղէ ես որպէս բու. յաւերակս
տքնեցայ. և եղէ ես իբր ճնճղուկ
միայն ՚ի տանիս :
Նախատեցին զիս թշնամիք իմ
զօ՛ր հանապազ. և գովիչք իմ
ինեւ երդնուին :
այ Զի մոխիր իբր զհա՛ց կերի. և զըմ
պելի իմ արտասուօ՛ք խառնեցի :
Յերեսաց բարկութե՛ սրտմտու
թե՛ քո. զի դու բարձրացուցե՛ր
և խոնարհեցուցե՛ր զիս :
Աւուրք իմ որպէս զհովանի՛
անցին. և ես իբր զխոտ ցամաքեցայ

Դու տ̃ր յաւիտեան կաս. և յիշա
տակ քո ազգէ մինչև յազգ ։
Դու յարուցեալ գթասցիս 'ի վր̃
սիօնի . ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ ։
Հաճեցան ծառայք քո ընդ քա
րինս նր̃ա . և 'ի հողս նր̃ա գթասցին
Երկիցեն հեթանոսք յանուա
նէ քումմէ . և ամ̃ թագաւորք
երկրի 'ի փառաց քոց ։
Շինէ' տ̃ր զսիօն . և երևեսցի'
փառօք իւրովք 'ի նմա ։
Հայեցաւ նա յաղօթս խոնար
հաց . և ո́չ արհամարհեաց զխն
դրուածս նոցա ։
Գրեսցի այս յազգ այլ . և ժողո
վուրդ զոր ստացեալ է , օրհնես
ցէ' զտ̃ր ։

Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի սրբութենէ իւրմէ. տր յերկնից յերկիր հայեցաւ:

Լսել զհեծութի՛ կապելոց. և արձակել զորդի՛ս մահապարտաց:

Պատմել 'ի սիոն զանուն տն. և զօրհնութիւնս նորա յերուսաղէմ:

Ե Ի ժողովել ժողովրդոց 'ի միասին և թագաւորաց ծառայել տն:

Պատասխանի՛ ետ նմա 'ի ճանապարհի զօրութե՛ իւրոյ, զնուազութի՛ աւուրց իմոց. ասա ինձ.

և մի՛ հաներ զիս 'ի կէս աւուրց իմոց. զի ազգէ յազգ են ամք քո:

Ի սկզբանէ տր, զհիմունս երկրի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են:

Նոքա անցանեն . և դու կաս՝
և ամս յաւիտեան ։

Ամենեքեան որպէս զձորձս մա
շեսցին . և ո՟պ զվերարկուս փո
խեսցես զնոսա և փոխեսցին ։

Այց դու նոյն ես՝ և ամք քո ո՛չ
անցանեն . որդիք ծառայից քոց
բնակեսցեն ՚ինմայ . և զաւակն նոցա
յաւիտեան աջողեսցի ։

կորնչէին

նորա | ենքն

Տունք Ե և Զ ։



Ո՝ղկին ըստ խոստոյ առնուլք մարդոյ,
մահն չնչէ և ցամաքին ։ 492

# Սաղմոս Դաւթի ։

ՃԲ

Օրհնեա անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա ։
Օրհնեա անձն իմ զՏէր . և մի մոռանար զամենայն տուրս նորա ։
Որ քաւէ զմեղս քո . բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո ։ որ
Որ փրկէ յապականութենէ զկեանս քո . պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ ։
Որ լնու բարութենէ զցանկութիւնս քո . նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո ։
Առնէ ողորմութիւնս Տէր . և իրաւունս ամենայն զրկելոց ։
Ծանոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի . և որդւոցն Իսրայէլի զկամս իւր ։

Գթած ողորմած է տր. երկայ
նամիտ և բազումողորմ :

Ոչ՝ իսպառ բարկանայ մեզ տր.
և ոչ յաւիտեան պահէ ոխս :

ուզք,

Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ
տր. և ոչ ըստ անօրէնութեան
մերում հատոյց մեզ :

Զի որպէս բարձր են երկինք
յերկրէ, այնպէս զօրացոյց տր
զողորմութի իւր՝ իվերն երկիւղա
ծաց իւրոց :

աշխարհ,

Որչափ հեռի են արևելք յա
րևմտից. այնչափ հեռի արար
՝իմէնջ զանօրէնութիս՝ մեր :

Որպէս գթայ հայր՝ իվերայ որ
դւոց իւրոց. այնպէս գթասցի
տր յերկիւղածս իւր :

աշտ,

Զի նա գիտաց զստեղծուածս

 մեր

մեր՝ և յիշեաց թէ հող եմք ։

Մարդոյ իբրև խոտոյ են աւուրք իւր. և իբրև զծաղիկ վայրի այնպէս ծաղկի ։

Ընդ էջ ընդ նա հողմ, և ոչ է և ոչ ևս երևի տեղի նորա ։

Բայց ողորմութիւն Տեառն յաւիտեանս յաւիտենից ՚ի վերայ երկիւղածաց իւրոց. և արդարութիւն նորա, որդւոց մինչև յորդիս ։

Որք պահեն զուխտս նորա. յիշեն զպատուիրանս նորա՝ առնել զնա ։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա և ամենեցուն տիրէ ։

Օրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա. հզօրք զօրութեամբ որք առ-
նէք

նէք զբա՛ն նորա ․ լսօ՛ղք ձայնի պատգամա՛ց նորա ։

Օրհնեցէք զտ̃ր ա̃մ զօրութի՛ւնք նորա ․ պաշտօնեայք եւարարօղք լոա կամա՛ց նորա ։

Օրհնեցէք զտ̃ր ա̃մ գո՛րծք նորա ․ ընդ ա̃մ տեղիս է տէրութիւն նորա ․ օրհնեա՛ անձն իմ զտ̃ր ․

Տունք ԻԲ։

Գ․ ուքշւյս ․ ԺԵ ․ Ը․ տունէ ․



Ո՛վ հրեշտակն առեղծեր ՚ի մէջ ծովուն. խա-
ղան զնովաւ պարք հրեշտակաց: 497

ԼԷ

✠ ճդ

Սաղմոս դաւթի. ՚ի վերայ աշխարհագործ արարածոց։

Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ, մեծ եղեր յոյժ։

Խոստովանութիւն եւ զմեծ վայելչութիւն զգեցար. արկեր զլոյս որպէս զօթոց. ձգեցեր զերկինս որպ զխորան. Եւ արկեր ՚ի վերա ջուրց զվերնայարկս նորա։ Որ դնէ զամպս զգնացս իւր. եւ շրջի նա ՚ի վերայ թեւոց հողմոց։ Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս. եւ զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ։

Հաստատեաց զերկիր ՚ի վերա 498 հաս

հաստատութեան իւրոյ. զի մի՛
սասանեսցի յաւիտեան։

Անդունդք որպէս զգեստ վերարկու նորա
ի վերայ լերանց կացցեն ջուրք։

Ի սաստէ քումմէ փախիցեն. և
ի ձայնէ որոտալոյ քումմէ, սար
սեսցին։

Ելանեն լեռնանան. և իջանեն
դաշտանան. ի տեղի յոր հաս
տատեցեր զնոսա։

Սահման եդեր և ո՛չ անցանեն. և
ո՛չ եւս դառնան ի ծածկել զերկիր։

Առաքեցեր զաղբիւրս ընդ ձո՛ր
ձորս. և ի մէջ լերանց գնաս
ցեն ջուրք։

Արբուցանէ զամենայն գազանս վայրի
յագեսցին ցիռք, ի ծարաւս
իւրեանց։

Ա՛նդ թռչունք երկնից բո՛յնս
դիցեն ․ եւ ՚ի միջոյ վիմաց տայցեն
զձա՛յնս իւրեանց ։

Ա՛րբուցանէ զլերինս ՚ի շտեմարա
նա՛ց իւրոց ․ եւ ՚ի պտղոյ գործոց
իւրոց լցցի՛ երկիր ։

Բուսուցեր զխո՛տ ՚ի լերինս ․ եւ
զդալար ՚ի ծառայութի՛ մարդկան։

Հաներ զհա՛ց յերկրէ ․ գինի ու
րա՛խ առնէ ․ իւղ զուա՛րթ ․ եւ
հա՛ց հաստատէ զսի՛րտ մարդոյ ։

Յագեսցին ծա՛ռքն տն̃ ․ եւ մայրքն
Լիբանանու՝ զորս դո՛ւ տնկեցեր։

Ա՛նդ թռչունք երկնից ձա՛գս
հանիցեն ․ եւ բոյն արագլի ա
ռաջի՛ն է նոցա ։

ՏԷ Լեռինք բարձունք եղջերուաց ․
եւ վէմք ապաւէնք նապաստակաց։

Արարեր զլուսին ՝ վասն ժամանակի. արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ ։

Արկեր զխաւար՝ եւ եղեւ գիշեր 'ի նմա գնան ամ գազանք անտառի

Կորիւնք առիւծուց մռընչեն՝ յափշտակել · եւ խնդրեն յայ զկերակուրս իւրեանց ։

Ի ծագել արեւու ժողովին · եւ 'ի մորիս իւրեանց դադարին ։

Ելանէ մարդ 'ի գործս իւր եւ 'ի վաստակս ձեռաց իւրոց, մինչեւ յերեկոյ ։

Որպէս զի մեծ են գործք քո Տր · եւ զամ ինչ իմաստութեամբ արարեր · եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք ։

Այս ծով՝ մեծ եւ անդորր. խանս

ին սողունք որոց ո՛չ գոյ թիւ, գա-
զա՛նք մեծամեծք եւ մանունք. ՚ի
սմա նաւք գնան. վիշապն զոր
ստեղծեր խաղա՛լ նովաւ:

Ամենեքեան քե՛զ սպասեն.
եւ տա՛ս զկերակուր նոցա ՚ի
ժամու:

Տա՛ս դու նոցա եւ կերակրին՝ բա-
նա՛ս զձեռն քո. եւ կերակրես զա-
մենեսեան կամօք քովք:

Դարձուցանես զերեսս քո ՚ի նո-
ցանէ եւ խռովին. հանես զոգի
՚ի նոցանէ, պակասին եւ ՚ի հո՛ղ
դառնան:

Առաքես զոգի քո եւ ստանա՛ս
զնոսա եւ նորոգես զերեսս երկրի:
Եղիցին փառք Տն յաւիտեան. եւ
Տր ուրախ եղիցի յարարա՛ծս իւր:



՚Ի Քառասնորդ ժէ

Ո՛ հայի յերկիր եւ տայ դողումն սմա
մերձի ՚ի լերինս եւ ծխեսցին։
Օրհնեցից զՏ̃ր ՚ի կեանս իմ.
եւ սաղմոս ասացից Ա̃յ իմոյ մինչեւ
եմ ես։
Քաղցր եղիցի նմա օրհնու
թիւն իմ. եւ ես ուրախ եղէց
՚ի Տ̃ր։
Պակասեսցեն մեղաւորք յեր
կրէ. եւ ամպարիշտք մինչեւ
գոյցեն ՚ի նմա՝ օրհնեա անձն իմ
զՏ̃ր։

Տունք ԼԷ։



Մ՝ահուամբ սատակեաց մօսէս. զանդրա
նիկսն եգիպտացւոց։ 504

ՃԴ

# Ալէլուիայ ։

Խոստովան եղերուք Տն՛ եւ կար
դացէք զանուն նորա ։ եւ պատմե
ցէք ՚ի հեթանոսս զգործս նորա ։
Օրհնեցէք եւ սաղմոս ասացէք
նմա ։ պատմեցէք զամ սքանչելիս
նր ։ եւ գովեցարուք յանուն սբ նր
Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ
որք խնդրեն զՏր ։ խնդրեցէք
զՏր՝ եւ հզօրք եղերուք ։ եւ խն
դրեցէք զերեսս նորա յամ ժամ ։
Յիշեցէք զսքանչելիս նորա զոր
արար ։ զարուեստս, եւ զիրաւունս
բերանոյ նորա ։

Զաւակ աբրահամեան ծառայք Հ
նորա ։ եւ որդիք յակոբայ ընտ-
րեալք նորա ։

և Նա՛ինքն է տր ած մեր. յամ
երկրի են իրաւունք նորա։
Յիշեաց յաւիտենից զուխտ
իւր. և զբանն. զոր պատուիրեաց
մինչև ՚ի հազար ամ։
Ուխտն զոր եդ ընդ աբրա
համու. և զերդումն իւր ընդ
ե սահակայ։
Հաստատեաց առ յակոբ զհրա
մա՛նս իւր. և առ իսրայէլ զուխտ
իւր յաւիտենից։
Ասէ ձեզ տաց զերկիրն քանանու
զվիճակն ժառանգութե ձերոյ։
Ո ի էին նոքա թուով սակաւ.
ա նուաստք և պանդուխտք ՚ի նմայ։
Անցին նոքա ազգէ յազգ. ՚ի թգ̃ւ
որութենէ ՚ի ժողովուրդ այլ։
Ոչ եթող մարդկան մեղանչել
506 նոցա.

նոցա . և կշտամբեաց զթա
գաւորն վասն նոցա : ա

Մ՛ի մերձենայք առ յօծեալս իմ
և ’ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք :

Կոչեաց զսով յերկիր նոցայ . և
զամ զօրութիւն հացի եբեկ :

Առաքեաց առաջի նոցա զայր .
’ի ծառայութի՛ւն վաճառեցաւ
յովսէփ : օ

Խոնարհ արարին ’ի կապանս
զո՛տս նորա . և էանց ընդ երկաթ
ա՛նձն նորա :

Մ՛ինչև եկեսցէ բա՛ն նորա . և
բան տն փորձեա՛ց զնա :

Առաքեաց թագաւորն և ելո՛յծ
զնա . իշխան ժողովրդեան ե‿ և
թող զնա :

Կացոյց զնա տէր տա՛ն իւրոյ .

 ’իշխան

'իշխան 'ի վե՛ր ամ ստացո՛ւածո՛ց
իւրոց :

Խրատե՛լ զի՛շխանս նոցա որպէս
զա՛նձն · եւ զծերս նոցա իմաս
տո՛ւնս արասցէ :

Եմուտ իէլ յեգիպտոս · յակօբ
պանդխտեցաւ յերկրին քամայ :

Աճեցո՛յց զժողովուրդ իւր
յո՛յժ · եւ զօրացոյց զնոսա քան
զթշնամի՛ս իւր :

Դարձոյց զսի՛րտս նոցա, յատե՛լ
զժողովուրդ իւր · եւ 'ի նենգե՛լ
զծառայս իւր :

Առաքեաց զմովսէս ծառայ իւր ·
եւ զահարոն ընտրեա՛լ իւր :

Ետ նո՛ց զբա՛ն նշանաց իւրոց ' եւ
զարուե՛ստս իւր յերկրին քամայ :

Առաքեա՛ց զխաւարն, եւ խաւարե

ցո՛յց զնոսա . զի դառնայուցե՛ն
զբան նորա :
Դարձոյց յարիւն զգե՛տս նոցա .
Եւ սպա՛ն զամենայն ձկունս նոցա :
Եռա՛ց յերկիր նոցա գորտ՝ եւ ՚ի
շտեմարանս թագաւորա՛ց նոցա :
Ասա՛ց եւ եկն շանաճա՛նճ եւ մժեխս
ընդ ամենայն սահմանս նոցա :
Դարձոյց զանձրեւս նոցա ՚ի կար
կուտ՝ եւ հո՛ւր յերկիր նոցա բոր
բոքեցաւ :
Եհար զայգիս եւ զթզենի՛ս նոցա .
Եւ փշրեա՛ց զամենայն ծառ սահ-
մանա՛ց նոցա :
Ասա՛ց եւ եկն մարա՛խ եւ խառնիճ
զի ո՛չ գոյր թիւ :
Եկեր զամենայն խոտ երկրի՛ նոցա . եւ
սպառեա՛ց զամենայն պտուղ անդո՛յ նոցա
 Եհար

Եհար զամ անդրանիկս եգիպ-
տացւոց զսկիզբն ամ վաստակոց
նոցա:

Եհան զնոսա ոսկւով եւ արծա-
թով. եւ ոչ գոյր յազգի նոցա
հիւանդ:

Ուրախ եղեւ եգիպտոս ընդ յե-
Ն լանել նոցա. զի անկաւ ահ նոցա
՚ի վերա նոցա:

Սփռեաց զամպ՝ հովանի առնել
նոցա ՚ի տուէ. եւ հրով լոյս տայր
նոցա ՚ի գիշերի:

Խնդրեցին, եւ եկն լորամարգի.
եւ հացիւ երկնից լցոյց զնոսա:

Եհար զվէմն եւ բղխեցին ջուրք.
եւ գնացին գետք ընդ անջրդինս:

Յիշեաց զբան իւր սուրբ. որ
ընդ աբրահամու ծառային իւրոյ:

Եհան զժողովուրդ իւր ցնծու-
թեամբ. եւ զընտրեալս իւր ուրա-
խութեամբ։

Ետ նոցա զգաւառս հեթանո-
սաց. եւ զվաստակս ժողովրդոց
ժառանգեցոյց նոցա։

Զի պահեսցեն զվկայութիւնս
նորա. եւ զօրէնս նորա խնդրես- Ն
ցեն։

Տունք խդ։

Գ. ուքղայս. ճէ. տունէ։



Հերձեաց մովսէս զծովն կարմիր. ցա
մաքեցոյց իբրև զգետին: Ըէ 512

Օրհնութիւն սաղմոսաց
դաւթի ։

Խոստովա՛ն եղերուք տ՟ն
զի քա՛ղցր է. զի յաւիտեա՛նէ
ողորմութիւն նորա։
Ո՞ խօսեսցի զզօրութի՟ս տ՟ն
լսելի արասցէ զա՟մ օրհնու
թի՛ւնս նորա ։
Երանի՛ ո՛ք պահե՛ն զիրաւունս
և առնեն զարդարութիւն յա՟մ
ժամ ։
Յիշեա՛ զմեզ տ՟ր ընդ հաճո՛յս
ժողովրդեան քում. և ա՛յց արա
մեզ ՚ի փրկութեա՛ն քում։
Տեսցուք մեք զքաղցրութիւն
ընտրելո՛ց քոց. ուրախ եղիցուք լեալ

յուրախութեան ազգի քո. և գովե
ցուք մեք 'ի ժառանգութենէ քում:
Փոխ, Մեղաք մեք և ‡ հարքն մեր.
անօրինեցաք և յանցեաք:
Հարքն մեր յեգիպտոս, ոչ իմա
ցան զսքանչելիս քո. և ոչ յիշե
ցին զբազում ողորմութիս քո:
ին Դառնացուցին զքեզ յանցանելն
իւրեանց ընդ ծով կարմիր. փրկ
կեաց զնոսա վասն անուան իւրոյ
զի ծանիցեն զզօրութիս նորա:
Սաստեաց 'ի ծովն կարմիր և ցա
մաքեցաւ. առաջնորդեաց նոց
ընդ անդնդս՝ որպէս ընդ ա-
նապատս:
Կեցոյց զնոսա 'ի ձեռաց ատելեաց
նոցա. և փրկեաց զնոսա 'ի ձեռաց
թշնամեաց նոցա:

Ծածկեաց ծով զնեղի՛չս նոցա. եւ մի՛ ՚ի նոցանէ ո՛չ ապրեցաւ։

Հաւատացին բանի՛ նորա. եւ օրհնեցի՛ն զօրհնութի՛ւս նորա։

Վաղվաղեցին եւ մոռացան զգործս նորա. եւ ո՛չ անսացին խորհրդոց նորա.

Ցանկացան զցանկութի՛ւն յանապատի. եւ փորձեցի՛ն զա՛ծ յանջրդի։

Ե՛տ նոցա զխնդրուա՛ծս նոցա. եւ առաքեա՛ց զլիութի՛ւն յանձի՛նս նոցա։

Բարկացուցին զմովսէս ՚ի բանակի. եւ զահարոն զսբ տն։

Բացաւ երկիր եւ եկո՛ւլ զդաթան. եւ ծածկեաց ըզբանակն զաբիրոնի։

Հուր վառեսցաւ ՚ի ժողովս նոցա.
եւ բոց մաշեսցէ զմեղաւորս։
Ն Արարին զորթ ՚ի Քորեբ, եւ երկիր պագին պատկերին. եւ փոխեցին զփառս իւրեանց ՚ի նմանութիւն որթուն խոտակերի։
Շ Մոռացան զԱծ կենարարն իւրեանց. որ արար զմեծամեծս իւր յԵգիպտոս. զսքանչելիսն իւր յերկիրն Քամայ. եւ զահ իւր ՚ի վերայ կարմիր ծովուն։
Ասաց սատակել զնոսա եթէ ո՛չ Մովսէս ընտրեալն կայր առաջի նորա։
Փառք
Դարձաւ առ տր՝ եւ անցո՛յց զբ՛ր կութիւն նորա. զի մի՛ սատակեսցին նոքա։
Անարգեցին զերկիրն ցանկալի.

եւ ո՛չ հաւատացին բանի նորա ։
Տրտնջեցին ՚ի բանակս իւրեանց. եւ ո՛չ լուան ձայնի տն ։
Համբարձ զձեռն իւր ՚ի վր նոցա. ՚ի հարկանել զնոսա յանապատի ։
Ցրուեսցէ զաւակ նոցա ընդ հեթանոսս. ցրուեսցէ զաւակ նոցա ընդ գաւառս ։
Պղծեցան նոքա ՚ի բէլ փեգովր. բէլ
զի կերան զզոհեալ եզմեռելոտի ։
Բարկացուցին զնա ՚ի գործս իւրեանց. եւ յաճախեաց ՚ի վերա նոցա բեկումն ։
Ապա́ եկաց ՚ի մէջ փենէհէզ ս
քահեաց եւ արգելաւ մահ. հա աւ
մարեցաւ նմա յարդարութիւն ազգէ յազգ մինչեւ յաւիտեան ։
Բարկացուցին զնա ՚ի վր ջուրցն

հակառակութեան ․ չարչարե-
ցաւ մովսէս վասն նոցա զի դառ-
նացուցին զոգի նորա ։

Հրամայեաց շրթամբք իւրովք․
եւ ո՛չ սատակեցին զազգն՝ զոր
ասաց նմա տէր ։

Խառնակեցան ընդ հեթանոսս
եւ ուսան զգործս նոցայ ․ ծառայ
եցին կռոց նոցա՝ եւ եղեւ նոցայ
՚ի գայթագղութիւն ։

Զոհեցին զուստերս եւ զդս
տերս իւրեանց դիւաց․ եւ հեղին
զարիւն անբիծ ։

Զարիւն ուստերաց եւ դստերաց
իւրեանց ․ զոր զոհեցին կռոցն
քանանու ։

Շաղախեցաւ երկիր յարենէ
նոցա՝ եւ պղծեցաւ ՚ի գործս նոցա

518 զի

զի պոռնկեցան ի գնացս իւրեանց:
Բարկացաւ սրտմտութեամբ
Տէր՝ ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ.
և գարշեցոյց զժառանգութիւն
իւր յոյժ :
Մատնեաց զնոսա ՚ի ձեռս հե-
թանոսաց. տիրեցին նոցա ատե-
լիք իւրեանց. և թշնամիք իւր-
եանց նեղեցին զնոսա. և խոնարհ-
եցին ՚ի ներքոյ ձեռաց նոցա :
Բազում անգամ փրկեաց զնոսա՝
և նոքա դառնացուցին զնա ՚ի խոր-
հուրդս իւրեանց. և կորացան
յանօրէնութեան իւրեանց:
Նայեցաւ Տէր ՚ի նեղութիւնս
նոցա. ՚ի լսել ձայնի աղօթից
նոցա :
Յիշեաց զուխտ իւր և զղջացաւ,

ըստ բազում ողորմութեան իւրում. և ետ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամ գերչաց նոցա:

Փրկեա զմեզ տր այ մեր. և ժողովեա զմեզ 'ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան

կց քում սրբոյ. և պարծեսցուք յօրհնութիւնս քո:

Օրհնեալ տր այ իսրայէլի. յաւիտեանս յաւիտենից:

Եւ ասասցէ ամ ժողովուրդն. եղիցի եղիցի:

## Տունք ԽԴ:

Կանոնս. ԺԵ. փոխ է. և ԳԾ և ՃԴ տունէ:



Թագաւորն Եզեկիա . ՚ի հիւանդութե՛ն
իւրում ասաց զայս բան ։

# Աղօթք Եզեկիայի Արքայի :

Ես ասացի. 'ի վերանա՛լ յինէն աւուրց իմոց. թէ գնացի ես 'ի դրո՛ւնս դժոխոց:

Թողի զա՜մս յետինս իմ, եւ ասացի՝ թէ այլ ո՛չ եւս տեսից զփրկութիւն ա՜ծն յերկրին կենդանեաց. եւ ո՛չ եւս տեսից զմարդն. բնակչօ՛ք խուրովք հանդերձ:

Պակասեցայ ես յազգատոհմէ՛ իմմէ. այսուհետեւ թողի՛ լքի՝ զա՜մ զկենա՛նս իմ:

Ե՛լ գնա՛ց՝ մեկնեցաւ յինէն հոգի՛ իմ. որպէս զայն որ քակէ զտաղաւար. եւ եղէ ես ո՛չ զոստա՛յն

սատարայց՝ մերձ 'ի հատանել :
Յաւուր յայնմիկ՝ մատնեցայ ես
յառաւօտէ , որպէս 'ի ձեռս ա-
ռիւծու . այնպէս խորտակեաց
մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօ-
տէ մինչ 'ի գիշեր մատնեցայ:
Որպէս ծիծառն այնպէս ճչեցի.
և որպէս զաղաւնի, այնպէս մնչե-
ցի . զի նուաղեցան աչք իմ 'ի տե-
սանելոյ :
Հայեցայ 'ի բարձունս առ տ̃ր
ա̃ծ՛ իմ, որ փրկեաց զիս. և փա- Ն
րատեցոյց յինէն զցաւս անձին
իմոյ :
Տ̃ր վասն այսորիկ պատմեցաւ
քեզ՝ զարթուցեր զանձն իմ. դար-
ձուցեր զհոգի իմ. մխիթարե-
ցայ և կեցի :

Ահա ՚ի խաղաղութե՛ան դարձաւ
դառնութիւն իմ. փրկեցեր
զանձն իմ զի մի՛ կորեայց. և ըն
կեցեր յետոյ զա՟մ զմեղս իմ:
Զի ո՛չ թէ որք ՚ի դժոխս են,
խոստովան առնե՛ն առ քեզ. և ո՛չ
մեռեա՛լք օրհնեսցեն զքեզ. և ո՛չ
յուսասցի՛ն ՚ի ճշմարտութիւնս
քո, ամենեքեան. որք իջանեն
՚ի դժոխս:
Այլ կենդանիքս օրհնեսցուք
զքեզ տ՟ր. որպէս և ես՝ այսու
հետև մանկո՛ւնս ծնայց. որք
պատմեսցեն զարդարութիւնս
քո տ՟ր, փրկութեա՛ն իմոյ:
Ես ո՛չ եւս դադարեցից օրհնել
զքեզ յօրհնութե՛ան նոր զա՟մ
աւուրս կենաց իմոց, յանդիման
տաճարի՛դ տ՟յ:

Յոյս կենդանութեան յոյս եւ
պահէն փրկութեան. տր յս
փրկիչ. փրկեա՛ եւ փարատեցո՛
զցաւս անձին իմոյ։ մարդասէր
տր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր
քո եւ կուսի։ եւ վասն խաչի քո պա
տուականի. տր ընկալ զաղաչանս
մեր եւ կեցո զմեզ։

Ա. ղաչեմ զձեզ եղբարք իմ՝ ի քս
յիշեցէք միով հայրմեղայիւ. զԹո
րոսի որդի երեւանցի ղլըճենց ո՜
ետիսս. որ խնամ ջերմեռանդ սի
րով ետու տպագրել զսոյն մաս դա
Թի. եւ մեծ ջանիւ աշխատեցայ՝ ի
սմայ անձամբ եւ դրամով. եւ այժմ ող
որմեա ասացէք ինձ եւ իմ ննջեցե
լոցն եւ տր ձեզ ողորմեսցի։



Վարեցին արտս և տնկեցին զայգիս վայե
լել զպտուղս նոցա ։

## Ալէլուիա :

Խոստովան եղերուք տն զի քաղցր է․ զի յաւիտեան է ողորմութիւն նորա :

Ասասցեն փրկեալք տն․ զորս փրկեաց ՚ի ձեռաց թշնամւոյն :

Յամ գաւառաց ժողովեաց զնս․ յարեւելից եւ յարեւմտից՝ ՚ի հիւսիսոյ եւ ՚ի ծովէ :

Մոլորեցան նոքա յանապատի.
Ղ յանջրդի ճանապարհի. քաղաք
բնակութեան ոչ գտին։
Քաղցեան և ծարաւեցան. և
ե անձինք նոցա ՚ի նոսին նուաղեցան։
Աղաղակեցին առ Տէր ՚ի նեղու
թեան իւրեանց ՚ի վշտաց նոցա
փրկեաց զնոսա։
Առաջնորդեաց նոցա ՚ի ճանա
պարհ ուղիղ. զի երթիցեն ՚ի քա
ղաք բնակութեան իւրեանց։
Խոստովան եղիցին Տեառն ողորմու
թեանց նորա. և սքանչելեաց նորա
որդւոց մարդկան։
Զի յագեցոյց զանձինս քաղ
ցեալս. և զանձինս կարօտեալս լցոյց
առատ բարութեամբ։
Նստէին ՚ի խաւարի և ՚ի ս

տուերս մահու. կապեալք էին
յաղքատութեան եւ յերկաթս :
Զի դառնացուցին զբանս այ.
Եւ զխորհուրդս բարձրելոյն բար_
կացուցին :
Խոնարհ եղեն ՚ի ցաւոց սիրտք
նոցա. տկարացան, եւ ոչ ոք էր որ
օգնէր նոցա :
Աղաղակեցին առ տր ՚ի նեղու
թեան իւրեանց. ՚ի վշտաց նոցա
էհան զնոսա.
Փրկեաց զնոսա ՚ի խաւարէ եւ ՚ի
ստուերաց մահու. եւ խզեաց ըզ
կապանս նոցա.
Խոստովան եղիցին տն ողորմու
թիւնք նորա. եւ սքանչելիք նորա
յորդիս մարդկան :
Զի փշրեաց զդրունս պղնձիս

եւ զնէ՛գս երկաթիս խորտակեաց։
Օգնեաց նոցա ՚ի ճանապարհէ
անօրէնութեան իւրեանց . զի
վասն մեղաց իւրեանց խոնարհ
եղեն յոյժ ։

Յա͞մկերակրոց գարշէ՛ին սիրտք
նոցա . եւ մերձեցան մինչեւ ՚ի
դրունս մահու ։

Աղաղակեցին առ տ͞ր ՚ի նեղու-
թեան իւրեանց . եւ ՚ի վշտաց նոց͞
ապրեցոյց զնոսա ։

Առաքեաց զբան իւր՝ եւ բժշ-
կեաց զնոսա . եւ փրկեաց զն͞ոս յա-
պականութենէ իւրեանց ։

Խոստովան եղիցին տ͞ն ողորմու-
թ͞իք նորա . եւ սքանչելիք նո͞ր յոր-
դիս մարդկան ։

Մատուսցեն նմա պատարագս

օրհնութեան. եւ պատմեսցեն զգո՛ր-
ծըս նորա ցնծութեամբ։

Որք իջանէին ՚ի ծո՛վ նաւօք. ՝վ
եւ առնէին զգործս ՚ի ջուրս բա-
զումս։

Նոքա տեսին զգո՛րծս Տեառն. եւզ
սքանչելիս նորա ՚ի խորս անդնդոց։

Ասա՛ց՝ եւ յարեաւ հո՛ղմ եւ մրրիկ
եւ բարձրացան ալիք նորա։

Ելանէին յերկի՛նս՝ եւ իջանէին
յանդո՛ւնդս. եւ անձի՛նք նոցա
յանձի՛նս իւրեանց մաշեցան։

Խռովեցա՛ն՝ սասանեցա՛ն որպէս
արբեալք. եւ ամենայն իմաստու-
թիւն նոցա ընկլաւ։

Աղաղակեցի՛ն առ Տէր ՚ի նեղու-
թեա՛ն իւրեանց. ՚ի վշտաց նոցա
կեցո՛յց զնոսա։

Դարձոյց զմրրիկն յօդս՝ և դա
ՙին դադարեցան ալիք նորա. ուրախ
եղեն զի դադարեցին. և առաջ
նորդեաց նոցա ՚ի նաւահանգիստ
կամաց իւրեանց։
Խոստովան եղիցին տն ողորմու
թիւնք նորա. և սքանչելիք նորա
յորդիս մարդկան։
Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս
ժողովրդոց. և յաթոռս ծերոց
օրհնեսցեն զնա։
Եւ դարձոյց զգետն ի ցամաք.
և զգնացս ջուրց յերկիր ծա
րաւուտ։
Արար զերկիրն պտղաբեր յաղ
տաղտուկս. վասն չարութեան
բնակչաց նորա։
Արար զանապատն ՚ի ճահիճս
 ջուրց.

ջուրց. եզերկիրն ծարաւուտ 'ի գնացս ջուրց։

Բնակեցոյց 'ի նմա քաղցեալս. և շինեցին զքաղաք բնակութեան իւրեանց։

Վարեցին անդս՝ և տնկեցին այգիս. և արարին զպտուղ արմտեաց իւրեանց։

Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ. և անասունք նոցա ոչ նուազեցան։

Նուազեցան նոքա և չարչարեցան 'ի նեղութենէ, չարեաց և 'ի վշտաց։

Եհեղ անարգութիւն 'ի վերայ իշխանաց նոցա. և մոլորեցոյց զնոսա յանապատի՝ և ոչ 'ի ճանապարհի։

Օգնեա՛ց տնանկէն յաղքատու-
թեան . եւ առաջնորդեաց որ
պէս խաշի՛ն ազգի նոցա :
Տեսցեն ուղիղք եւ ուրա՛խ եղի
ցին . եւ ամենայն անօրէն խցցէ՛
զբերան իւր :
Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ՛
զայս . եւ ՚ի մի՛տ առցէ զողորմու-
թի՛ս տն :

## Գ. ուրբաթս ՃԷ. Տունն է.



Պ․ ա՛հիթ հոգւով զայս պաղատանս․ պա
տրաստ է կամք հոգւոյ իմ տր․ օրհնել
զքեզ միշտ սաղմոսիւք։ 

# Օրհնութիւն սաղմոսաց դաւթի ։

ճէ

Պատրաստ է սիրտ իմ ա̃ծ
պատրաստ է սիրտ իմ .
օրհնել և սաղմոս ասել
քեզ փառօք իմովք ։
Օարթիք փառք իմ, զար
թիք՝ սաղմոսնէք և օրհնութ̃ե .
և ես զարթեայց առաւօտուց ։
Խոստովան եղէց քեզ ՚ի ժողո
վուրդս տ̃ր . և սաղմոս ասցէց քեզ
յազինս ։
Մեծ եղև մինչև յերկինս ողոր
մութիւն քո . և մինչև յամպս
ճշմարտութիւն քո .
Բարձրեալես դու յերկինս ա̃ծ .

Եւ յա՛մ երկրի են փառք քո ։

Որպէս փրկեցան սիրելիք քո ·
կեցո աջո՛վ քոյ՝ եւ լո՛ւր մեզ ։

Ա՜ծ խօսեցաւ 'ի սրբութեան
իւրում · բա՛րձր եղէց՝ բաժանե
ցից զսիւքէմ · եւ զհովիտսն յար
կաց չափեցից ։

Իմ է գաղաադ՝ եւ իմ է մանասէ
եփրեմ հզօրիչ գլխո՛յ իմոյ ։

Յուդա՛ թագաւո՛ր իմ · մովաբ
աւազան յուսո՛յ իմոյ ։

Յեդո՛վմ ուղղեցից զգնացս
իմ · եւ ինձ այլազգիք հնազանդք
եղեն ։

Ո՞ տարցէ զիս 'ի քաղա՛ք ամուր ·
կամ ո՛վ առաջնորդեսցէ ինձ
մինչեւ յեդոմ ։

Ա, թէ ոչ դու ա՜ծ, որ մերժեցեր

537 զմեզ ·

զմեզ. եւ ո՛չ ելեր ա՛ծ ընդ զօ՛րս մեր։
Տո՛ւր մեզ զօգնութիւն ՚ի նեղու-
թեան. զի սո՛ւտ է փրկութիւն
մարդոյ։
Աստուծով արասցուք զզօրու-
թի՛ւ. եւ նա յամօթ արասցէ զթըշ-
նամիս մեր։

Տունք ժեէ։



Խօսին լեզուաւ նենգաւորաւ ․ զոր
խաչահանին քն ընդ․ տր յս ։ Մարտեալ
ընդ նա տարապարտուց ։ 

Ի կատարած սաղմոս գանձթի ։

---

ՃԸ Աստուած՝ օրհնութեան իմոյ մի լռեր զի բերան մեղաւորի՝ բերան նեն գաւորի, բացան ՚ի վերայ իմ։ Խօսեցան զինէն լեզուաւ նեն գաւորաւ. եւ բանիւք ատելութեան պաշարեցին զիս։

Մարտեան ընդ իս ՚ի տարապար տուց. եւ փոխանակ սիրոյ իմոյ, մատնէին զիս. այլ ես յաղօթս կայի։

Հատուցին ինձ զչար, փոխա նակ բարւոյ. ատելութիւն, փոխանակ սիրոյ իմոյ։

Կացո ՚ի վերայ նորա զմեղաւոր. եւ սատանայ կացցէ ընդ աջմէ նորա։ Ի դատաստանի ելցէ դա

տապարտեալ . եւ աղօթք նորա
'ի մեղս դարձցին :

Եղիցին աւուրք նորա նուազք. եպիսկոպոսութիւն նորա, զայն այլ առցէ :

Եղիցին որդիք նորա որբք . եւ կին նորա այրի . սասանեսցին փոփոխեսցին որդիք նորա մուրօ՛ղք եղիցին. եւ ելցեն 'ի բնակութենէ իւրեանց: Որոնեսցէ փոխատուն զամենայն ինչս նորա . եւ յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա :

Մի՛ գտցի օգնական նմա . եւ մի՛ ոք ողորմեսցի 'ի վերայ որբոց նորայ :

Եղիցին որդիք նորա 'ի սատակումն՝ եւ յազգէ ջնջեսցի անուն նորա :

Յուդ,

Յեչեսցին մեղք հօր նորա առաջի
տն. և մեղք մօր նորա մի ջնջեսցին
և եղիցին առաջի տն յամ ժամ:

Սատակեսցի յերկրէ յիշատակ
նորա. փոխանակ զի ոչ յիշեաց
առնել ողորմութիւն:

Հալածեաց զայր աղքատ և զզ
տնանկ. սպանանել զայն, որ խո
նարհէ սրտիւք:

Սիրեաց զանէծս՝ և եկեսցէ ՚նմա.
ոչ կամեցաւ զօրհնութի, հեռի
եղիցի ՚ինմանէ:

Զգեցաւ զանէծս որպէս հան
դերձ. մտցէ որպէս ջուր ՚ի փոր
նորա. և որպ ձէթ ընդ ոսկերս նորա:

Եղիցի նմա որպէս հանդերձ՝ զի
ագանի. և որպէս գօտի որ ածի
հանապազ ընդ մէջ:

Այս գործ՝ է՛ այնոցիկ, որք չա
րախօս կային զինէն առ տ̃ր. և ոչ ք
խօսէին զչար՝ զանձնէ՛ իմմէ ։
Այլ դու տ̃ր՝ տ̃ր, արա՛ ընդ իս
ըստ անուա՛ն քում. զի քա՛ղցր է
ողորմութ̃ի քո. և փրկեա՛ զիս՝
զի աղքատ և տնանկ եմ ես ։
Սիրտ իմ խռովեցաւ՝ ի ներքս ի
մում. և ես ո՛րպս ստուեր ՝ի խոնա
րհել իմում պակասեցայ. և թօ
թափեցայ որպէս մարախ ։
Ծունկք իմ տկարացան՝ ի պա
հոց. և մարմին իմ այլագունեցաւ
յիւղոյ ։
Եղէ ես նախատ նոցա. տեսին
զիս՝ և շարժեցին զգլուխս իւրեանց ։
Օգնեա՛ ինձ տ̃ր՝ ա̃ծ իմ. և փրկ
եա՛ զիս՝ ըստ ողորմութ̃ե քում ։

 Ծա

Ծանիցեն զի ձեռն քո այսէ.
տր̃ եւ դու տր̃ արարեր զայս:
Նոքա անիծանիցեն եւ դու օրհ
նեսցես. որք յարուցեալք են
ի վերայ իմ, զամօթ կրեսցեն. այլ
ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ:
Զգեցցին զամօթ, որք չարա
խօս կային զանձնէ իմմէ. եւ արկ
ցեն որպէս կրկնոց՝ զամօթ իւր
եանց զիւրեամբք:
Այլ ես խոստովան եղէց առ. տր̃
յոյժ, բերանով իմով ի մէջ բազ
մաց օրհնեսցեմ զքեզ:
ն Դղէ Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս
ի փրկել զիս յայնցանէ, որք հալա
ծէին զանձն իմ:

Տունք ԻԸ:



Ասաց Տր Տն իմում. նիստ ընդաջմէ փառաց իմոց. զի ես եդից զթշնամին կոխան ներքոյ ոտից քոց։

# Ի կատարած Սաղմոս Դաւթի

Ասաց Տ՟ր՝ ցՏ՟ր՝ իմ, նի՛ստ ընդ
աջմէ՛ իմմէ. մինչև եդից ըզ
թշնամիս քո, պատուանդա՛ն ո-
տի՛ց քոց:
Գաւազան զօրութ՟ե առաքես
ցէ՛ քեզ Տ՟ր ՛ի Սիօնէ. և տիրես
ցես դու ՛ի մէջ թշնամեա՛ց քոց:
Ղդ,
Ընդ քե՛զ է սկիզբն աւուրն զօ
րութ՟ե. ՛ի վայելչութ՟ի սրբո՛ց
քոց. յարգանդէ յառա՛ջ քանզա
րուսեակ ծնա՛յ զքեզ:
ՃԹ,
Երդուա՛ւ Տ՟ր՝ և ո՛չ ևս զղջաս
ցի. դո՛ւ ես քահանայ յաւիտեան,
ըստ կարգի՛ն մելքիսեթեկի. և
Տ՟ր ընդ աջմէ՛ քումմէ:
Խորտակեսցէ յաւուր բարկու
թ՟ե

Թեան զԹագաւորս. դատէ զհե
Թանոս՝ և բազում անէ հարուա
ծս. և խորտակեսցէ զգլուխս
բազմաց յերկրի ։

Ուղխս ՚ի ճանապարհի ար
բուսցէ. վասն այսորիկ՝ և բարձր
արասցէ զգլուխս ։

Տունք Է ։

Գ. ուբղայս ե և է տունէ ։




Ողորմած զԹած ՚Քս̃. կերակրէ
հինգ նկանակաւն. զհինգ հազարսն
յանապատին ։

ՃԺ

# Ա՛ղէ՛ղուիա :

Խոստովան եղէց քեզ տ̃ր՝
բոլորով սրտիւ իմով. ՚ի խոր
հուրդս ուղղոց. և ՚ի ժողո
վուրդս. մեծ են գործք տ̃ն.
և քննեալ են յա̃մի պատուէ
րանք նորա :

Խոստովանութիւն և վայելչու
թիւն են գործք նորա. և արդա
րութի̃ նորա մնայ յա̃իտեանս
յա̃իտենից :

Յիշատակ արար սքանչելեաց
իւրոց, ուղղոց. ողորմած գթած
է տ̃ր՝ և կերակուր տայ երկիւղա
ծաց իւրոց :

Յիշեաց յա̃իտենից զուխտ իւր
և զզօրութիւն գործոց իւրոց

պատուիրեաց ժողովրդեան իւր
ում :

Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց . եւ գործք ձեռաց նորա արդարութիւն եւ իրաւունք են :

Հաւատարիմ են յամենայն պատուիրանք նորա . հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից . արարեալ են ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ :

Փրկութիւն առաքեաց նոր ժողովրդեան իւրում . պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր ՝ սուրբ եւ ահեղ է անուն նորա :

Սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն իմաստութիւն բարի ամենեցուն որք առնեն զնա . եւ օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից

Տունք Ժ :




Քաղցր այրն ողորմն աղքատին.
Եւ տայ փոխ ա̃յ. զի զհատուցումն
առցէ ՚ի հանդերձելումն :

ճԺԱ

Ալէլուիա ՚ի վերա ապաշխարութեան ։

Երանեալ է այր ՝ որ երկնչի ՚ի տնէ . զպատուիրանս նորա , նա կամի ՚ յոյժ ։

Զօր եղիցի յերկրի զաւակ նոր . և յազգ ուղղոց օրհնեսցի ։

Փառք և մեծութի , են ՚ի տան նորա . արդարութի նոր մնայ յաւի տեանս յաւիտենից ։

Ծագեաց ՚ի խաւարի զլոյս ուղղոց ՝ ողորմած գթած ՝ և արդար է տր ։

Քաղցր այր ՝ ողորմի և տայ փոխ յօրինէ զբանս իւր ՚ի դատաստանի . զի յաւիտեան նա մի սասանեսցի ։

Յիշատակ յաւիտենից եղիցի
արդարն. և 'ի համբաւոյ չարէ նա
մի՛ երկիցէ։

Պատրաստ է սիրտ նորա. յու-
սալ առ ա̃ծ։

Հաստատեալ է սիրտ նորա՝ և
նա մի՛ երկիցէ. մինչև տեսցէ
'ի թշնամիս իւր։ ՃՂ

Սփռեաց ետ աղքատաց. ար-
դարութիւն նորա մնայ յաւի-
տեանս յաւիտենից. և եղջիւր
նորա բարձր եղիցի փառօք։

Մեղաւորն տեսցէ և բարկասցի
զատամունս իւր կրճտեսցէ և հա-
լեսցի. ցանկութիւն մեղաւո-
րաց կորիցէ։

Տունք Ժ։




Սանկուէնք նոր սիօնի · օրհնեցէք
զՏր · եւօրհնեցէք զանուննոր ։ 554

ՃԺԲ

# Ալէլուիա :

Օրհնեցէք մանկունք՝ զՏր. և
օրհնեցէք զանուն Տն :
Եղիցի անուն Տն օրհնեալ. յայ
սմհետէ մինչև յաւիտեան :
Յարևելից մինչև ՚ի մուտս արև
ու՝ օրհնեալ է անուն Տն :
Բարձր է ՚ի վր ամ ազգաց Տր.
և յերկինս են փառք նորա :
Ով է որպէս Տր Ած մեր ՚ի բար
ձունս բնակեալ. և զխոնարհս
տեսանէ յերկինս և յերկրի :
Յարուցանէ՛ զաղքատս յերկրէ
և բարձր առնէ զտառապեալս
յաղբևաց :
Նստուցանէ զնոսա իշխանս.
ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախամիտ . որպէս մայր որ դւովք բերկրեալ:

Տունք Է:

Ծաղնաս

556 Ա.Լէ



Ել իսրայէլ յեգիպտոսէ. զերծեալ՚ի ձեռաց փարաւոնի:

## Ալէլուիա ։

ճժա Յելանե՛լն Իսրայէլի յԵգիպտո
սէ՛. տանն Յակոբայ ՚ի ժողովր
դենէ՛ն այլազգեաց ։
Եղև ՚ի Հրէաստան սրբութի՛ն նորա
և Իսրայէլ իշխանութի՛ւն նորա ։
Ծո՛վ ետես և փախեաւ. և Յոր
դանան անդրէ՛ն դարձաւ ։
սաղմ Լերինք ցնծացին որպէս խոյք.
և բլուրք իբրև գառինս մաքեաց ։
Զի՞ է քեզ ծով՝ զի՞ տեսեր և
փախեար. և կամ դու Յո՛րդա
նան՝ զի՞ դարձար անդրէն ։
Լերինք՝ ցնծացէ՛ք իբրև խոյք.
և բլո՛ւրք՝ որպէս գառինք մաքեաց ։
Յերեսաց Տեառն սասանեցաւ եր
կիր. յերեսաց Աստուծոյ Յակոբայ ։

Ո՛, դարձոյց զվէմն 'ի լճակս ջուրց և զապառաժն յաղբերա կունս.

Մ՛ի մեզ տր՝ մի՛ մեզ. այլ ա_ նուան քում տուր զփառս. վասն ողորմութե՟ն և ճշմարտութե՟ն քո։

Մ՛ի երբէք ասասցեն 'ի հեթա նոսս. Թէ ո՛ւր է ած նոցա։

Ած մեր յերկինս և յերկրի. զա՟մ զոր ի՛նչ կամեցաւ արար։

Կուռք հեթանոսաց ոսկի և ար ծա՛թ են. ձեռագո՛րծք են որ դւոց մարդկան։

Բերա՛նս ունի՛ն, և ո՛չ խօսի՛ն. ա՛չս ունի՛ն, և ո՛չ տեսանեն։

Ականջս ունի՛ն, և ո՛չ լսեն. ռ՛ունչս ունի՛ն՝ և ո՛չ հոտոտի՛ն։ է են

Ձեռս ունի՛ն՝ և ո՛չ շօշափեն.

ոտս ունին՝ և ո՛չ գնան. և ո՛չ գոյ
բարբառ ՚ի կոկորդս նոցա.

Նմա՛ն նոցա եղիցին, որք արա
րին զնոսա. և ամենեքեան որք
յուսացեա՛լ են ՚ի նոսա:

Տուն իսրայէլի յուսացաւ ՚ի տ՟ր.
օգնական և ընդունելի է նոցա:

Տուն ահարոնի յուսացաւ ՚ի տ՟ր.
օգնական և ընկեր է նոցա:

Երկիւղածք տ՟ն յուսացա՛ն ՚ի տ՟ր.
օգնական և փրկի՛չ է նոցա:

Յիշեա՛ց զմեզ տ՟ր՝ և օրհնեա՛ց
զմեզ. օրհնեաց տ՟ր զտո՛ւնն իս
րայէլի. օրհնեաց տ՟ր զտո՛ւնն
ահարոնի:

Օրհնեա՛ց տ՟ր զերկիւղա՛ծս
իւր. զփոքրկո՛ւնս և զմեծա
մեծս:

Սղ. ճժգ

Յաւելցէ 'ի ձեզ տ̃ր · 'ի ձեզ և ժե
յորդիս ձեր։
Օրհնեալ էք դուք 'ի տ̃նէ · որ
արար զերկինս և զերկիր։
Երկինք երկնից, տ̃ն են · և
զերկիր ետ որդւոց մարդկան։
Ո՛չ թէ մեռեալքն օրհնեսցեն
զքեզ · և ո՛չ ամենեքեան որք
իջանեն 'ի դժոխս։
Այլ կենդանիքս օրհնեսցուք
զքեզ տ̃ր · յայսմհետէ մինչև
յաւիտեան։

## Փառք Ի̃Գ։

Կ. ուրբաթ · Ճ̃ և Ճ̃ · տունն։




Տ՚երեցին հոգւոյս նե
ւվլեշոք դժոխա

# Ալէլուիա :

Սիրեցի , զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց . խոնարհեցոյց զունկն իւր առ իս . և ես զաւուրս իմ կարդացի առ նա :

Շրջեցան զինև երկունք մահու և վտանգք դժոխոց գտին զիս :

Նեղութիւն և զանձկութիւն գտի . և զանուն Տեառն կարդացի :

Տէր՝ փրկեա զանձն իմ . ողորմած Տէր մեր ողորմի՝ և պահէ զտղայս Տէր :

Ես խոնարհ եղէ՝ և Տէր կեցոյց զիս . դարձ անձն իմ՚ ի հանգիստ քո՝ զի Տէր օգնեաց քեզ :

Փրկեա՛ց զնձն իմ՚ իմահուանէ· զա՛չս իմ յարտասուա՛ց՝ եւ զո՛տս իմ ի գայթագղութենէ. հաճոյ եղէց առաջի. տն՝ յերկրի՛ն կեն դանեաց:

## Տունք Ղ:




Զբաժակ մահուանն ընկալեալ տէր․
եւ կարդաց զէլի էլին ։ 

ՃԺԵ

# Ալէլուիա :

Հաւատացի՝ զոր և խօսեցայ .
և ես խոնարհ եղէ յոյժ :
Ես ասացի՝ ի զարմանալ իմում .
թէ ամենայն մարդ սուտ է :
Զի՞նչ տաց տրիտուր տն . ընդ
ամենայնի զոր ետ ինձ :
Զբաժակ փրկութն ընկալայց
և զանուն տն կարդացից :
Զաղօթս իմ տն՝ տաց՝ առաջի
ամենայն ժողովրդեան նորա :
Պատուական է առաջի տն մահ
սրբոց իւրոց . ո՜ տր՝ ես ծառայ
քո եմ . ծառայ և որդի աղախնոյ քո
Հատեր զկապանս իմ . քեզ մա
տուցից պատարագ զօրհնութն
և զանուն տն կարդացից :

Զաղօթս իմ տն՛ տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա. ՚ի գաւիթս տան տն՝ և ՚ի միջի քո երուսաղէմ։

Տունք ե։

ճժզ

## Ալէլուիա։

Օրհնեցէք զտր ամենայն ազինք. և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Զօրասցի՛ ողորմութի նորա ՚ի վերա մեր. և ճշմարտութի տն մնասցէ՛ յաւիտեան։

Տունք բ։




Տէր մեր երևեցաւ․ արարէք տօնս
ուրախութեան ։ 

Ճժէ

# Ալէլուիա ։

Խոստովան եղերուք տն, զի
քաղցր է ։ զի յաւիտեանս ողոր
մութիւն նորա ։

Ասասցէ տունն իսրայէլի՝ զի քա Ն
ղցր է զի յաւիտեա ։

Ասասցէ տունն ահարոնի՝ զի Ն
յաւիտեանս է ողորմութիւն նոր ։

Ասասցեն երկիւղածք տն ։ զի
քաղցր է ։ զի յաւիտեանս է ։

Ի նեղութեան կարդացի առ տր ։
Եւ լուաւ ինձ յանդորր ։

Տր է՝ իմ օգնական ։ եւ ես ոչ
երկեայց ։ զի՞ արասցէ ինձ
մարդ ։

Տր է իմ օգնական ։ եւ ես տե
սից 'ի թշնամիս իմ ։ Զ

Շրջեցան

Բարի է յուսալ ՚ի տէր՝ քան յուսալ ՚ի մարդիկ. բարի է յուսալ ՚ի տէր՝ քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինև. և անուամբ տն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինև՝ պաշարեցին զիս ՚ի միասին. և անուամբ տն վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինև որպէս մեղուք. վառեցան բորբոքեցան տպ փուշք ՚ի հուր. և անուամբ տն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեցայ՝ և եղէ մերձ ՚ի գլորել. և տէր ընկալաւ զիս

Օօրութի՛ իմ և օգնութիւն իմ տէր՝ և եղև ինձ ՚ի փրկութի:

Ձայն ցնծութե՛ փրկութե. ՚ի յարկս արդարոց:

Ա՛ջ տն արար զօրութի. ա՛ջ տն
բա՛րձր արար զիս. և աջ տն արար
զզօրութի:

Ո՛չ մեռայց, այլ կեցից՝ և պատ
մեցից զգո՛րծս տն:

Խրատելով խրատեա՛ց զիս տր.
և ՚ի մահ ո՛չ մատնեաց:

Բացէ՛ք ինձ զդրո՛ւնս արդարու
թե, զի մտի՛ց ընդ այն՝ և խոստո
վա՛ն եղէց տն:

Ա՛յս դուռն, տն է. և արդարք
մտանեն ընդ սա:

Խոստովան եղէց քեզ տր զի
լուա՛ր ինձ. և եղեր ինձ ՚ի փրկութի:

Վէ՛մն, զոր անարգեցի՛ն շի
նողքն. նա եղև գլո՛ւխ անկեան:

Ի տնէ՛ եղև այս. և է սքանչելի՛
առաջի աչա՛ց մերոց:

 Այս

Այսօրէ զորարար տէր. եկայք ցն
ծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա։
Ով տէր, փրկեա, ով տէր, աջողեա. օրհնեալ որ գաս ա
նուամբ տեառն. եւ օրհնեցաք զձեզ
ի տանէ տեառն։
Աստուած մեր երեւեցաւ մեզ արա
րէք տօնս ուրախութեան կապ
եալս. մինչեւ յանկիւնս սեղանոյ։
Աստուած իմ ես դու, եւ խոստովան
եղէց քեզ. Աստուած իմ ես դու՝ եւ
բարձր արարից զքեզ։
Խոստովան եղէց քեզ տէր, զի
լուար ինձ. եւ եղեր ինձ ի փրկութի։
Խոստովան եղերուք տեառն, զի բա
րի է. զի յաւիտեանէ ողորմու
թիւն նորա։
Տունք ԻԹ։

[illegible]



Երանի՛ է ամբծից որ գնայ յօրէնս տ͞ն։

Ալէլուիա :

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի. Եւ ոյք գնան յօրէնս տն :

Երանի՛ ոյք քննեն զվկայութիւնս նորա. բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա :

Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութիւն, ՚ի ճանապարհս նորա գնասցեն :

Դու՛ պատուիրեցեր զպատուիրանս քո. ՚ի պահել յոյժ :

Ո՛չ թէ յաջողեսցին ինձ ճանապարհք իմ. ՚ի պահել ինձ զարդարութիւնս քո :

Յայնժամ՝ ես ո՛չ ամաչէի. ՚ի

զգուշանամ ինձ ՚ի պատուէրանս
քո ։
Խոստովան եղէց քեզ տէր՝ յուղ
ղութեան սրտի իմոյ ․ տէր ուսայց ՛ց
զիրաւունս արդարութեան քոյ ։
Զիրաւունս քո պահեցից ․ մի պէտ
թողուր զիս մինչ իսպառ ։ Բ
Ի՞ ուղղեսցէ երիտասարդ զճա
նապարհս իւր ․ այլ ՚ի պահել
զբանս քո ։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի
զքեզ ․ մի մերժեր զիս ՚ի պատուի
րանաց քոց ։
Ի սրտի իմում թագուցի զբանս
քո ․ որպէս՝ զի մի մեղայց քեզ ։
Օրհնեալ ես դու տէր ․ ուսո ինձ
զարդարութիւնս քո ։
Շրթամբք իմովք պատմեցից ․

զամենայն իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ. որպէս յամենայնի մեծութեան։
կիմէլ Գ Ի պատուիրանս քո հոգացայ. և զգուշացայ ի ճանապարհս քո։
Զիրաւունս քո խոկացայց. և ոչ մոռացայց զբանս քո։
Հատո՛ ծառայի քում, զի կեցից՝ և պահեցից զբանս քո։
Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ի սքանչելիս օրինաց քոց։
Պանդո՛ւխտ եմ ես յերկրի մի՛ թագուցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ. ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամ ժամ։

Սաստեցէր անբարտաւանից . անիծեալ ոյք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց ։

Ի բաց արա յինէն՝ զնախատինս և զարհամարհանս . զի զվկայութիւնս քո խնդրեցի ։

Նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն . այլ ծառայ քո, խորհէր յիրաւունս քո ։ տաղէդ Դ Դալէթ

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին . և խորհուրդք իմ յարդարութիւն քո ։

Մերձեցաւ անձն իմ 'ի հող . տէր կեցո զիս ըստ բանի քում ։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ, և լուար ինձ . ուսո ինձ զարդարութիւնս քո ։

Ի ճանապարհս արդարութեանց քոց

իմաստուն արա զիս. և քննեցից
զսքանչելիս քո։
Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձ
րանալ. հաստատեա զիս ի
բանս քո։
Զճանապարհս մեղաց ի բաց
արա յինէն. և յօրէնս քո ողոր
մեաց ինձ։
Զճանապարհս ճշմարտութե
քո ընտրեցի. և զիրաւունս քո
ես ոչ մոռացայ։
հե Մերձեցայ ես ի վկայութիւնս
ה քո. տ՛ր մի՛ յամօթ առներ զիս։
Ի ճանապարհս պատուիրանաց
քոց ընթացայ. զի անդորր արա
րեր սրտի իմոյ։
Օրէնսդէտ արա զիս տ՛ր, ի ճա
նապարհս իրաւանց քոց. և խնդ
րեցից զնա յա՛մ ժա՛մ։

Իմաստուն արա զիս տ՟ր․ և քըն-
նեցից զօրէնս քո ․ և պահեցից
զնա բոլորով սրտիւ իմով ։
Առաջնորդեա ինձ ի շաւիղս
պատուիրանաց քոց տ՟ր ․ զի ընդ-
նմա հաճեցայ ։
Խոնարհեցո զսիրտ իմ ի վկայու-
թիւնս քո տ՟ր․ և մի յագահութիւն ։
Դարձո զաչս իմ, զի մի տեսից
զնանրութիւն ․ ի ճանապարհս
քո կեցո զիս ․
Հաստատեա ծառայի քում ․ վամ
զբան քո յերկիւղ քո ։
Հան յինէն զնախատինս, զորս
կարծեցի ․ զի դատաստանք
քո քաղցրեն ։
Ահա ցանկացայ պատուիրանաց
քոց տ՟ր ․ յարդարութեան քում
կեցո զիս ։

Եւ կեսցէ խղճերայ իմ ողորմութն
քո տր . եւ փրկութն քո ըստ բանի
քում :
Տաց պատասխանի ոյք նախա
տեն զիս բանիւք . զի ես 'իբանս
քո յուսացայ :
ցէ Մ` ի 'ի բարցեայ առներ 'իբերա
նոյ իմմէ զբա՛ն ճշմարտութե մին
չեւ՛ յոյժ . զի յիրաւունս քո յու
սացայ :
Պահեցի զօրէնս քոյամ ժամ .
յաւիտեան եւյաւիտեանս յաւի
տենից :
Գնայի ես յանդորրու՛ . զի զպա
տուիրանս քո խնդրեցի :
Խօսէի զվկայութիս քո առաջի՛
Թագաւորաց , եւ ո՛չ ամաչէի :
զայն Խորհէի՛ 'ի պատուիրանս քո ,
1 զո՛ր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ՝ ՚ի պատուիրանս քո, զո՛ր սիրեցի. եւ խորհէի յարդարութեան քում:

Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր յուսացուցեր զիս:

Սա մխիթարեսցէ՛ զիս՝ ՚ի խոնարհութեան՝ իմում. զի բան քո կեցո՛յց զիս:

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ո՛չ խոտորեցայ:

Յիշեցի զիրաւո՛ւնս քո յաւիտենից. Տէր՝ եւ մխիթարեցայ:

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց. եւ որք թողի՛ն զօրէնս քո:

Գովելի՛ են ինձ իրաւունք քո. ՚ի տեղւոջ պանդխտութեան՝ իմոյ:

խէս Յիշեցի ՝ի գիշերի զանուն քո տր
ո եւ պահեցի զօրէնս քո ։
Սա եղեւ ինձ ճանապրհ ՝ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Տունք ծը ։

---

ճզղ, Բաժին իմ ես դու տր.
ասացի պահել զօրէնս քո ։
Աղաչեցի զերեսս քո, բոլո
րով սրտիւ իմով. ողորմեաց
ինձ ըստ բանի քում ։
Խորհեցայ ՝ի ճանապարհս իմ.
եդարձուցի զոտս իմ ՝ի վկայու
թիւնս քո ։
Պատրաստեցայ եւ ոչ խռովե
ցայ. զի պահեցից զպատուի
րանս քո ։

Պարանք մեղաց պատեցան զինե-
ալ զօրէնս քո ես ոչ մոռացայ ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստո-
վան լինել առ քեզ․ վասն ի տր
րաւանց արդարութեան քո ։
Հաղորդեմ ես ամ երկիւղա Թէս
ծաց քոց․ որոց պահեալ էին Ծ
զպատուիրանս քո ։
Ողորմութեամբ տն լի եղև երկիր․
զարդարութիւնս քո ուսո ինձ ։
Քաղցրութիւն արարեր ընդ ծա-
ռայի քում տր․ ըստ բանի քում ։
Քաղցրութիւն, զխրատ, և
զգիտութիւն ուսո ինձ․ զի ՚ի պա-
տուիրանս քո ես հաւատացի ։
Մինչ չև խոնարհեալ էի ես,
մեղայ․ վասն այսորիկ զբանս քո
պահեցի յոյժ ։

՝Քա՛ղցր ես դու տր . և ուսո՛ ինձ
զարդարութիւնս քո :
Բազմացա՛ն յիս անիրաւութիւնք
ամբարտաւանից . այլ ես բոլո
րո՛վ սրտիւ իմով քննեցի՛ց զպա
տուիրանս քո :
Մածաւ որպէս կաթն սի՛րտ
նոցա . այլ ես զօրէ՛նս քո խօ
սեցայ :
եօս Բարի՛ է ինձ, զի խոնա՛րհ արա
րեր զիս . որպէս ուսա՛յց զարդա
րութիւնս քո՛ :
Բարի՛ են ինձ, օրէնք բերանո՛յ
քո ՝քան զհազա՛րս ոսկւոյ և ար
ծաթոյ :
Ձե՛ռք քո արարին՝ և ստեղծի՛ն
զիս . իմաստո՛ւն արա զիս ՝ և ու
սա՛յց զպատուիրանս քո :

Երկիւղածք քո տեսցեն զիս եւ
ուրախ եղիցին. զի ես ՚ի բանս
քո յուսացայ։
Ծանեայ տէր՝ զի արդարութիւն
են դատաստանք քո. յիրաւի
խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո, ՚ի մխի
թարել զիս՝ ըստ բանի քում,
զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո եւ
կեցից. զի օրէնք քո խօսք իմ են։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝
որք ՚ի տարապարտուց անիրաւե
ցան յիս. այլ ես հոգացայց ՚ի պա
տուիրանս քո։
Խրատեսցեն զիս. երկիւղածք դաֆ
քո. եւ որք ճանաչեն զվկայու כ
թիւնս քո.

Եղիցի սիրտ իմ անբիծ, յարդա րութե՛ քում. զի մի ամաչեցից։
Կարօտայ՝ հանձն իմ՚ի փրկութե՛ քո. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ, բանի քում. ասացի Երբ մխիթարեսցէ զիս։
Եղէ ես որպէս տիկ ՚ի պարզի. զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
ՙՔանի՞ ինչ են, աւուրք ծա ռայի քո. Երբ արասցես ինձ իրաւունս ՚ի հալածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխոր հուրդս. այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են. ՙինանիր հալա ծեցին զիս, օգնեա ինձ։

Փոքր մնաց ես՝ և կորուսանէին զիս յերկրի. այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։ խաճ

Ըստ ողորմութեան քում կեցո զիս. և պահեցից զվկայութիւնս բերանոյ քո։

Յաւիտեան Տէր՝ բան քո կայ յերկինս. և յազգ է մինչև յազգ է ճշմարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ. ի հրամանի քում։ Մնայ և տիւ զի ամենեքեան ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ես արդեօք կորուսեալ էի ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայց զար դարութիւնս քո. զի նոքօք կե ցուցեր զիս։ լամէկ ղ

Քո՛ եմ ես՝ կեցո՛ զիս . զի
զարդարութիւնս քո խնդրեցի:
Մեմ Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կո
מ րուսանե՛լ . զի զվկայութիւնս քո
ես 'ի մի՛տ առի :
Ղ Յա̃մ կատարածի տեսի՛ զվախ
ճան . յո՛յժ ընդա՛րր էին ինձ պա
տուիրանք քո :
Որպէս սիրեցի՛ զօրէնս քո . զօր
հանապազ խօ՛սք իմ էին :
Քանզ թշնամիսն իմ իմաստո՛ւն
արարեր զիս 'ի պատուիրանս քո .
զի յաւիտեան ի՛մ էին :
Քան զա̃մ ուսուցի՛չս իմ, իմաս
տո՛ւն եղէ . զի վկայութիւնք քո
խօ՛սք իմ էին :
Քան զծերսն իմաստո՛ւն եղէ .
զի զպատուիրանս քո քննեցի :

Յա՟մ ճանապարհաց չարաց ար-
գելի զոտս իմ. որպէս զի պահե-
ցից զբանս քո:
Յիրաւանց քոց ես ոչ խոտորե-
ցայ. զի դու օրէնսդէտ արա-
րեր զիս:
Որպէս զի քաղցրեն 'ի քիմս իմ Նուն
բանք քո. քան զմեղր բերանոյ յ
իմոյ:
Ի պատուիրանաց քոց իմացեալ՝
ատեցի զա՟մ ճանապարհս չա-
րաց. զի դու օրէնսդէտ արա- Ե
րեր զիս:
Ճրագ են բանք քո ոտից իմոց.
և լոյս տան շաւղաց իմոց:
Երդուայ և հաստատեցի. զի
պահեցից զա՟մ իրաւունս արդա-
րութեան քո:

Խոնարհ եղէ մինչև յոյժ. տէր՝
կեցո՛ զիս ըստ բանի՛ քում։
Ընդ կամս բերանոյ իմոյ հա
ճեա՛ց տէր. և զիրաւունս քո
ուսո՛ ինձ։
Անձն իմ ՚ի ձեռս քո յամենայն
ժամ. և զօրէնս քո ես ո՛չ մոռացայ։
Լարեցին ինձ մեղաւորք զորո
գայթ. ՚ի պատուիրանաց քոց ես
ո՛չ մոլորեցայ։
սամախ Ժառանգեցի զվկայութիւնս
ס քո յաւիտեան. զի ցնծութիւն
է սրտի իմոյ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ, առ
նել զարդարութիւնս քո յաւի
տեան. վասն հատուցման։
Զանօրէնս ատեցի. և զօրէնս
քո սիրեցի։

Օգնական եւ փրկի՛չ իմ ես դու եւ ես ՚ի բա՛նս քո յուսացայ։

Ի բա՛ց եղերուք յինէն չարք. եւ քննեցից զպատուիրա՛նս ա̃յ իմոյ.

Օգնեա՛ ինձ ըստ բանի՛ քում՝ եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսո՛յ իմմէ։

Օգնեա՛ ինձ՝ եւ ապրեցո՛ զիս. եւ խորհեցայց յիրաւո՛ւնս քո յա̃մ ժամ.

Անարգեցե՛ր զամենեսեան՝ որք ապստամբ եղեն յարդարութեց քոց. զի անիրաւութեա՛մբ էին խորհուրդք նոցա։

Անօրէ՛նս համարեցայ զա̃մ յ մեղաւո՛րս երկրի. վասն ա՛յսորիկ՝

սիրեցի զպատուիրանս քո :

այն Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմար

Ա մին իմ. զի ՚ի դատաստանաց քոց

երկեայց յոյժ :

## Տունք ԺԶ :

Արարի իրաւունս եւ ար
դարութիւն. մի՛ մատ
ներ զիս ՚ի ձեռս
նեղչաց իմոց :

Ընկալ զծառայս քո ՚ի բարի. զի
մի՛ ամբարտաւանք զրկես
ցեն զիս :

Սպառեցին աչք իմ, փրկու
թեան քում տր. եւ բանից ար
դարութեան քո :

Արա ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո ինձ։

Ծառայ քո եմ ես՝ իմաստուն արա զիս. և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զՏէր. խափանեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ՝ սիրեցի զպատ- ժէ
ուիրանս քո. քան զոսկի ամենայն ձ
ոսկի և զտպազիոն։

Ամենայն պատուիրանք քո ա-
ջողեցան ինձ. զի ատեցի ես զճանապարհս չարաց։

Սքանչելի են վկայութիւնք քո. վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։

Յայտնութիւն բանից քոց լու-

սաւորէ՛ . եւ իմաստուն առնէ
զտղայս :

Զբերա՛ն իմ բացի՛ եւ առի զհո
գի . ՚ի պատուիրանս քո փափա
գեաց անձն իմ :

Նայեաց առ իս եւ ողորմեա՛ց ինձ
ըստ իրաւունս սիրողաց անուա՛ն
քո :

Զճանապարհս իմ ուղղե՛ա առա
ինձ ըստ բանի քում . եւ մի՛ տիրես
ցեն ինձ ամենայն մեղք :

Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ՛
մարդկան . եւ պահեցից զպատուի
րա՛նս քո :

ՓԵ Լուսեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս
քո՝ եւ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո :

Առուա՛կք ջուրց , իջին յաչա՛ց ի
մոց . զի ո՛չ պահեցին զօրէնս քո :

Արդար ես դու տէր՝ և ուղիղ են
դատաստանք քո ։

Պատուիրեցեր զարդարութի
վկայութեանց քոց տէր․ և ճշմա
րիտ են յոյժ ։

Մաշեաց զիս նախանձ քո․ զի մո
ռացան զբանս քո թշնամիք իմ․

Ընտրեալ է բան քո յոյժ․ և ծա
ռայ քո սիրեաց զնա ։

Մանուկ եմ ես և արհամար
հեալ․ և զարդարութիւնս քո
ես ոչ մոռացայ ։

Արդարութիւն քո, արդարու
թիւն յաւիտենից․ և օրէնք քո
ճշմարիտ են ։

Նեղութիւնք և վիշտք գտին սատեք
զիս․ և պատուիրանք քո խօսք
իմ էին ։ չ

Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա եւ կեցո զիս։

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լուր ինձ տէր՝ զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Աղաղակեցի առ քեզ եւ փրկեա զիս. եւ պահեցից զվկայութիւնս քո։

Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի. եւ ես՝ի բանս քո յուսացայ։

Կանխեցին աչք իմ առաւօտու. խօսել զբանս քո։

Զձայն իմ լուր տէր՝ ըստ ողորմութեան քում. եւ յիրաւունս քո կեցո զիս։

Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն. զի յօրինաց քոց հեռի եղեն։

Մերձ ես դու տէր. եւ ամ պատուիրանք քո ճշմարիտք են։ գոփ Ք

Յսկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց տէր. զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։

Տես զխոնարհութիւն իմ՝ եւ փրկեա զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Դատեա զդատաստանս իմ, եւ փրկեա զիս. եւ ըստ բանի քում կեցո զիս։

Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն. զի զիրաւունս քո ոչ պահեցին։

Գթութիւնք քո բազում են տէր՝ եւ ըստ իրաւանց քոց կեցո զիս։

Բազում են, որք հալածեն եւ նեղեն զիս. ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ։

Հայէի յանագործսն և մաշէի
զի զպատուիրանս քո ոչ պահեցին
Ռէս Տես՝ զի զպատուիրանս քո սիրե-
ցի. Տէր՝ ողորմութեամբ քո կեցո
զիս։

Սկիզբն բանից քոց ճշմարտու-
թիւն է. յաւիտեան են ամ ի
րաւունք արդարութեան քոյ։

Իշխանք հալածեցին զիս ՚ի նա-
նէր. և ՚ի բանից քոց երկեաւ
սիրտ իմ։

Ցնծացայ ես ՚ի բանս քո. որպէս
այն, որ գտանէ աւար բազում։

Զմեղս ատեցի և անարգեցի.
և զօրէնս քո սիրեցի։

Եօթն անգամ յաւուր օրհնե-
ցից զքեզ. վասն իրաւանց ար-
դարութեան քոյ։

Խաղաղութիւն բազում այնո
ցիկ, որք սիրեն զօրէնս քո. և
ո՛չ գոյ ՚նոցա գայթագղութիւն:
Սպասեցի փրկութեան քում
տր. և զպատուիրանս քո սիրեցի:
Պահեաց անձն իմ զվկայութիւնս սին
քո. և սիրեաց զնոսա յոյժ: ש
Պահեցից զպատուիրանս՝ և զվ
կայութիւնս քո. զի ամ ճանա
պարհք իմ առաջի քո են:
Մերձեսցին խնդրուածք իմ
առաջի քո տր. ըստ բանի քում
իմաստուն արա զիս:
Մտցեն աղօթք իմ առաջի քո
տր. և բանիւ քո փրկեա զիս:
Բղխեսցեն շրթունք իմ զօրհ
նութիւնս քո. յորժամ ուսուս
ցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի
ամենայն պատուիրանք քո ար
դարութեամբ են ։

Եղիցի ձեռն քո՛ ի կեցուցանել
զիս. զի զպատուիրանս քո ընտրե
ցի։

Ցանկացայ փրկութե՟ քում տ՟ր՝
և օրէնք քո խօսք իմ են ։

Կեցցէ՛ անձն իմ, օրհնեսցէ ըզ
քեզ. և իրաւունք քո օգնեսցեն
ինձ ։

դաֆ Մոլորեցայ ես ո՟պ զոչխար կորու
ռ սեալ. խնդրեա՛ զծառայս քո զի
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Տունք Ճ և Զ ։

Գլուխքս Ճ և Ծ և Զ տունէ ։

Կանոնս Ժ և Ե փոխ է։ և Ղ և Կ Է
տունէ ։



Մ՝աքրէ որ կայծակամբն ՚ի ձեռն սրո
վբէին . զմարգարէն Եսայի . զորդին
Ամօսայ :

Օրհնութիւն Եսայեայ . կայ ծակնամաքուր ՚ի մարգարէին ։

---

Օրհնեցէք զա̃ծ օրհնութիւն նոր . զի իշխանութիւն նորա ՚ի բարձունս փառաւորի ։

Հանուն նորա փառաւորեալ է ՚ի ծագաց մինչև՝ ՚ի ծագս երկրի։

Որք իջանէին ՚ի ծով նաւօք . կղզիք եւ ամ̃ բնակիչք նոցա ընդ նոսա ։

Ուրախ եղիցի անապատն՝ և ամենայն բնակիչք իւր . ուրախ եղիցին բանակք՝ և բակք կեդարու . և ուրախ եղիցին բնակիչք վիմին ։

Ի գլխո՛յ լերանց գոչեսցեն. տա-
ցեն զփա՛ռս տն եւ զքաջութիւն
նորա, կղզի՛ք պատմեսցեն:
Տ ած զօրութեանց դիմեա՛լ եւ
դայ. զարթուցանել զպատե-
րա՛զմն. յարուցանել զնախա՛նձ.
փո՛ղ հարկանել՝ եւ գոչել ՛ի վերա
թշնամեա՛ց իւրոց, զօրութեա՛մբ
բազմաւ:
Ուրա՛խ եղիցին երկինք ՛ի վե-
րուստ. եւ ամպք ցօղեսցեն զար-
դարութիւն:
Բղխեսցէ՛ երկիր զողորմութի՛
եւ զարդարութի. առ հասարա՛կ
բղխեսցէ:

Տունք Է



Նաւէն ձգեալ յովնան 'ի ծովն. և կլաւ 'ի կէ-
տէն. և յետոյ թքաւ յարտաքս. 504

# Աղօթք Յօնանու մարգարէի:

Ի նեղութեան իմում ես առ տր՝ կարդացի. և լուաւ ած յանդընդոց դժոխոց, աղաղակի՝ իմում:

Լուր տր ձայնի իմում, զի ընկեցեր զիս ՚ի խորս ծովու. և շրջանք գետոց պաշարեցին զիս:

Ամենայն զբօսմունք քո՝ և ալիք քո՝ անցին ՚ի վերայ իմ. և ասացի, մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

Արդ՝ իցէ թէ յաւելից հայել ՚ի տաճար սրբ. քո. զի հեղան զինեւ

Ջուրք մինչև յանձն իմ և ան-
դունդք անհնարինք պաշարե-
ցին զիս ։

Մտ՛աւ գլուխ իմ ընդ փապա՛րս
լե՛րանց. իջի ես ՚ի խո՛րս երկրի.
և աւեսի զնի՛գս նորա, զի էին
որպէս աղխք յաւիտենից.
և ելցե՛ն յապականութենէ
կեանք իմ ։

Ի զքե՛զ տր ած իմ, ՚ի նուաղել
անձի՛ն իմոյ կարդացի և զքեզ
տր յիշեցի. և մտցեն աղօթք իմ
՚ի տաճա՛ր սրբ̃ քո ։

Ո ի ոյք պահէի՛ն զունայնու
թի՛ւն և զստութի՛ւն. յողորմութենէ
իւրեանց մերժեցան ։

Այլ ես ՚ի ձայն օրհնութե՛ն խոս
տովա՛ն եղէց քեզ. մատուցից

606 պա

պատարագս տն՝ եւ կատարեցից զուխտ իմ ՚ի իրկութեան:

Տունք ը:

---

Լկեսցեն աղօթք մեր ՚ի տաճար սբ քո խոնարհեսցի ունկն քո ՚ի խնդրուածս մեր: Մարդասէր տր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քո եւ կուսի. եւ վասն խաչի քո պատուականի. ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ:



Վ՜այ ինձ վ՟ն երկար պանդխտութե՟ս որ
նստիմ ՚ի խորանս կեդարու․ ես խաղաղ խօ
սեմ․ և մարտնչէին ընդ իս․ Ճ Ի 608

Օրհնութիւնք աստիճանաց:

# Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ,

իմում ես առ տէր կարդացի՝ և լուաւ ինձ. տէր փրկեա զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց՝ և ՚ի լեզուէ չարէ:

Զի՞ տացի քեզ՝ կամ զինչ յաւելցի. լեզու նենգաւոր:

Որպէս նետք հզօրի. զի սրեալ

են կայծակամբք կաղնւոյ ։

Վա՜յ ինձ՝ զի ընդերկա՛ր եղև պանդխտութիւն իմ. և բնակե ցայ ես ՚ի վրանս կեդարու ։

Բազո՛ւմ անգամ բնակեցաւ անձն իմ ընդ այնոսիկ. որք ատէի՛ն զողջոյն ։

Ե՛ս էի խաղաղարար. և յորժամ խօսէի, մարտնչէի՛ն ընդ իս ։

Տունք Է.




Ոչ՛ երիցանց հրեշտակաց · այլ՛ ինքն
գայցէ ինձ օգնութիւն ։

Օրհնութիւնք աստիճանաց ։

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս .
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն ։
Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ՝ եկեսցէ
որ արար զերկինս եւ զերկիր ։
Մ՛ի տար սասանութիւն զոտն քո .
եւ մի՛ ննջեսցէ պահապան քո ։
Որպէս ո՛չ ննջէ՝ եւ ո՛չ ՚ի քուն
երթայ . պահապանն Իսրայէլի ։
Տէր պահեսցէ զքեզ՝ եւ Տէր ընդ
կալցի . աջո՛յ ձեռամբն քում ։
Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղի
ցէ . եւ մի՛ լուսին ՚ի գիշերի ։
Տէր պահեսցէ զքեզ յամենայն
չարէ . պահեսցէ՝ Տէր զանձն քո ։
Տէր պահեսցէ զմուտ եւ զել քո .
յայսմհետէ մինչեւ յաւիտեան ։



Ուրախացայ յասելն ինձ ՚ի տուն
տն գնասցուք մեք։

ճիա Օրհնութիւնք · աստիճանաց ·

Ուրախ եղէ ես՝ որք ասէին ցիս
՚ի տուն Տն երթիցուք մեք ·
Հասեալ կային ոտք մեր · առ
դրունս քո Երուսաղէմ ։
Օ Երուսաղէմ շինեալ որպէս
քաղաք · և ընկերութիւն իւր շուրջ
զնովաւ ։
գդա Անդ ելին ազգք՝ ազգք Տն · վկայ
ութիւն իսրայէլի · խոստովան լինել
անուան Տն ։
մդ Անդ արկեալէն աթոռք դատաս
տանի · աթոռս արկեալէն ՚ի տան
Դաւթի ։
ե Հարցէք զողջունէ Երուսաղէմի
և զշինութենէն որք սիրէք զՏր

Եղիցի խաղաղութ՟ե ՚ի զօրութ՟ե
քում. եւ շինութիւն յաշտարակս
եւ յամուրս քո ։

Վասն եղբարց եւ ընկերա՛ց իմոց
խօսեցայց զխաղաղութիւն. վա՟ն
քո եւ վասն տան Տ՟ն Ա՟յ մերոյ
խնդրեցից զբարութիւն ՚ի
քէն ։ ձա՟յ

Տունք Ը՟ .



Ու. մեր համբարձեալ փոչոն դաշիթ.
ամ. որ բնակեալ էք 'ի յերկինս ։ 616

ՃԻԲ

Օրհնութիւն աստիճանաց :

Առ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես յերկինս :

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ՟ն իւրոյ. եւ որպէս աչք աղախնոյ, 'ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Նոյնպէս՝ են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ մեր. մինչեւ ողորմեսցիս 'ի վերայ մեր :

Ողորմեա՛ց մեզ տ՟ր ողորմեա՛ց մեզ զի բազում լցաք արհամարհանօք :

Առաւել լցան անձինք մեր նախատանօք. որոց նախատէին զմեզ. եւ արհամարհանօք ամբարտաւանից :

Տունք Է :

ճի̃դ

## Երգք Գ. աստիճանաց:

Եթէ ո՛չ տէր էր առ մեզ, ասասցէ՛
իսրայէլ եթէ ո՛չ տէրէ առ մեզ:
Ընդ յառնե՛լ մարդկան ՚ի վ̃ր մեր.
Կենդանւո՛յն կամեցան կլլա
նել զմեզ:
Իբր բարկանա՛լ սրտմտութե̃ նոցա ՚ի
վ̃ր մեր. ապա և ջուրք ուրեմն
ընկղմեցէ՛ն զմեզ:
Ընդ ո՛ւղխս անցին անձինք մեր.
Անցին անձինք մեր ընդ ո՛ւղ
խըս անդադարս:
Օրհնեա՛լ է տ̃ր. որ ո՛չ ետ զմեզ
յորս ատամա՛նց նոցա:
Անձինք մեր ապրեցան որպէս
ճընճղո՛ւկք. յորոգայթէ՛ որսո
ղաց:

Որոգայթք նոցա փշրեցան. և
մեք ապրեցաք:
Օգնութիւն է մեզ յանուանէ
տն. որ արար զերկին և զերկիր:
Տունք Ը:

## Երգ աստիճանաց: ✠ ՃԻԴ ✠

Որ յուսայ 'ի տր, որպէս լեառն սի-
ոն. մի սասանեսցի յաւիտեան՝
որ բնակեալն է յերուսաղէմ:
Լերինք շուրջ են զնովաւ. տր
շուրջ է զժողովրդեամբ իւրով.
յայսմ հետէ՝ մինչև յաւիտեան:
Ոչ թողու տր, զգաւազան մե-
ղաւորաց 'ի վիճակս արդարոց.
և արդարք մի ձգեսցեն զձեռս
իւրեանց յանօրէնութիւն:
Բարի արա տր բարեաց. և այնո

ցիկ, որք ուղիղք են սրտիւք:
՚Ի Իսկ զթիւրեա́լսն յաւաշտա
՚Ի կութիւն. տարցի զնոսա Տէր ընդ այնո
սիկ որք գործեն զանօրէնութիւն,
խաղաղութիւն ՚ի վերայ Իսրայէլի:

## Տունք Ե̃:

## Գուբղայս Ե̃ Տունէ:



Ի արձոյց տր̄ զգեւրեւալն խաշն եւ մեք
մխիթարեցաք ։

ՃԻԵ

Ի դարձուցանել Տն զգերու
թիւն Սիոնի՝ եղեաք մեք
մխիթարեալք ։
Յայնժամ լցան բերանք
մեր խնդութեամբ. եւ լեզուք մեր
ցնծութեամբ ։
Յայնժամ ասասցեն ՚ի հեթա
նոսս՝ մեծ արար Տր զ յաւնելն
իւր ընդ մեզ. եւ մեք եղեաք բեր
կրեալք ։
Դարձո Տր զգերութիւնս մեր՝
որպէս զուղխս ՚ի հարաւոյ. որք
վարէին արտասուօք. ցնծու
թեամբ հնձեսցեն ։
Երթալով երթային եւ լային. որք

բարձեալ տանէին զսերմանս իւր
եանց :

Գալով եկեսցեն ևցնծասցեն .
Որք առեալ բերիցեն զորայս իւրեանց

Տունք Է :

## Օրհ.ք աստիճանաց : ՃԻԶ

Եթէ ոչ տր շինէ զտուն . ՚ի նա
նիր վաստակեն շինօղք նորա :
Եթէ ոչ տր պահէ զքաղաք .
՚ի նանիր տքնին պահապանք նոր
Ի նանիր է և ձեզ յառնելն կան
խաւ . ա՛րդ` արիք` մինչ չէք նընջե
ցեալք . և որք ուտէք զհա՛ց ցաւոց :
Ի ժամանակի , տպ տացի քուն
սիրելեաց իւրոց . ժառանգութի
առն , որդիք են . որոց վարձք իւր
են

են. այնէ պղտոուղ որովայնն եւ րոյ
Որպէս նետք 'ի ձեռս հզօրի' այն
Ն պէս են որդիք թօթափելոց։
Երանի, որ էլից զցանկութիւն
իւր 'ի նոցանէ. մի ամաչեսցեն,
յորժամ խօսեսցին թշնամիք
նոցա ընդ նոսա 'ի դրանն։

## Տունք Է։

ՃԻԷ

Երանի ամենեցուն՝ որք երկնչին ՚ի Տեառնէ. և գնան ՚ի ճանապարհս նորա ։

Զվաստակս ձեռաց քոց կերիցես երանի է քեզ և բարի եղիցի ։ Կին քո որպէս զայգի վայելուչ յանկիւնս տան քո . և որդիք քո որպէս նորատունկս ձիթենւոյ , շուրջ զսեղանով քով ։

Այսպէս օրհնեսցի այր մարդ որ երկնչի ՚ի Տեառնէ . օրհնեսցէ զքեզ Տէր ՚ի Սիոնէ ։

Եւ տեսցես դու զբարութիւն Երուսաղէմ . զամենայն աւուրս կենաց քոց ։ Տեսցես դու զորդիս որդւոց քոց խաղաղութիւն ՚ի վերայ Իսրայէլի ։

Փառք ։



Ամառին տանեաց զոյս համեմատ, բայց
է ցորեան ՚իբուռն հնձած ։

## Երգ.ք աստիճանաց :

ՃԻԸ

Բազում անգամ մարտեան ըն
դ իս, ի մանկութենէ իմմէ . ասաս
ցէ իսրայէլ :

Բազում անգամ մարտեան ըն
դ իս ի մանկութենէ իմմէ . և ինձ
ոչ յաղթեցին :

Ի թիկունս իմ հարին մեղաւ
որք . և ընդ երկար արարին զա
նօրէնութիւնս իւրեանց :

Տէր արդա՛ր է . և խորտակէ զո՛ւլն
մեղաւորաց :

Ամաչեսցեն և յետս դարձցին
ամենեքեան որք ատեն զսիոն : ցին

Եղիցին նոքա որպէս զխոտ տա
նեաց . որ մինչ՝ չ և՛ ի բուռն եկեալ
չորացաւ :

Ուստի ո՛չ ելից զբուռն իւր հնձօղն · և ո՛չ զգիրկս՝ որ զո րա՛յն ժողովէր ։

Ո՛չ ասացին ամենեքեան որք անցանէին առ նոքօք, թէ օրհնու թիւն տն ընդ ձեզ · և օրհնե ցինք զձեզ յանուա՛նէ տն ։

Տունք ը ·



Դաւիթ ՚ի խորոց կարդայ առ տէր. ասէ
տէր լուր ձայնի իմում։ 629

ՃԻԹ Օրհնութիւն երգ աստիճանաց:

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր՝
Տէր՝ լուր ձայնի իմում:
Եղիցին ականջք քո. 'ի լսել
զձայն աղօթից իմոց:
*իմ Եթէ զանօրէնութիւնս քննես
*ե Տէր. Տէր իսկ ո՞ կարէ կալ առաջի
քո. զի 'ի քէնն է քաւութիւն:
Վասն անուան քո համբերի Տէր.
*եաց համբեր անձն իմ բանի քում.
յուսացաւ անձն իմ 'ի Տէր:
'Ի պահէ առաւօտու՝ մինչև յե-
րեկոյ. 'ի պահէ առաւօտու՝
յուսասցէ Իսրայէլ 'ի Տէր:
Ի Տէր է ողորմութիւն բազում. 'ի
նմանէ է փրկութիւն. և նա փրկեաց
զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

# Օրհ̄ք Աստիճանաց ։ ՃԼ

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ. եւ
ոչ զբօսան աչք իմ ։
Ոչ գնացի ես ընդ մեծամեծս.
եւ ոչ ընդ այնոսիկ, որք սքանչելի
էին քան զիս ։
Բայց թէ խոնարհեցայ ես՝ որ
պէս մանուկ սարտուցեալ՚ի ստե
նէ մօր իւրոյ. եւ դարձնորա ան
դրէն ՚ի նոյն ։
Այլ թէ հպարտացուցի ար
դեօք զանձն իմ. այսպէս եղիցի
հատուցումն անձին իմոյ. յուսա
ցաւ Իսրայէլ ՚ի Տր̄. յայսմ հետէ
մինչեւ յաւիտեան ։

Տունք Է ։



Շրջանեցաւ Երիքով զօրութբ̃ տապանա
կին . և քհ̃նյքն եո̃թքն ցնծացին ։ 632

# Օրհնութեան երգ Զոհոց:

Յիշեա՛ Տր զդաւիթ. և
զամ հեզութիւն նորա:
Որպ երդուաւ Տն. և
ուխտ եդ Այ յակոբայ:
Եթէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ
և թէ ելից յանկողինս մահճաց
իմոց:
Եթէ տաց քուն աչաց իմոց. կամ
նինջ արտևանաց իմոց. կամ հան
գիստ քրտանաց իմոց. մինչև գտից
զտեղի՝ յարկի Տն Այ յակոբայ:
Ահա լուաք զնմանէ յեփրա
թայ. և գտաք զնա ՚ի դաշտս
մայրեաց:
Մտցուք ՚ի յարկս նորա. և երկիր

պագցուք ՚ի տեղւոջ՝ ուր կացեա
լեն ոտք նորա ։

Արի տէր ՚ի հանգիստ քո՝ դու
եւ կտակարանք սրբութեան քո ։

Քահանայք քո զգեցցին զար
դարութիւն. եւ սուրբք քո, ցնծալով
ցնծասցեն ։

Վասն դաւթի սիրելւոյ քոյ. մի՛
դարձուցաներ զերեսս քո, յօ
ծելոյ քումմէ ։

Երդուաւ տէր դաւթի ճշմար
տութեամբ՝ եւ ոչ ստեաց նմա. ՚ի պտո
ղոյ որովայնէ քումմէ նստուցից
յաթոռ քո ։

Թէ պահեսցեն որդիք քո զո
րհնս իմ. եւ զվկայութիւնս իմ,
զոր ուսուցից նոցա ։

Որդիք նոցա նստցին՝ յաւիտեանս

յաւիտենից յաթոռ քո ։
Հաճեցաւ տր ընդ սիոն. եւ ըն-
տրեաց բնակել ՚ի նմա. ասէ,
այս է հանգիստ իմ յաւիտեանս
յաւիտենից. ՚ի սմայ բնակեցայց՝
զի հաճեցայ ընդ սա ։
Որս սորա օրհնելով օրհնե- ՛բ
ցից. եւ զաղքատս սորա լցուցից
հացիւ ։
Զերիցանց սորա զգեցուցից զփր-
կութիւն եւ սուրբք սորա ցնծա-
լով ցնծասցեն ։
Անդ ծագեցից զեղջիւր ՚ի
դաւիթ. եւ պատրաստ արարից
զճրագ օծելոյ իմոյ ։
Թշնամեաց նորա զգեցուցից
զամօթ. այլ ՚ի վերայ նորա ծաղ- ՛ե
կեսցէ սրբութիւն իմ ։

Սղ ՃԼԲ

# Օրհնութիւն Ոճոց ։

Ահա բարի կամ զինչ վայելուչ.
կեաց զի բնակեն եղբարք ՚ի միասին ։
Որպէս եւղ զի իջանէ ՚ի գլուխ
և ՚ի մօրուսն ահարօնի. և ՚ի մօրուս
ուճացն իջանէ ՚ի գրապան զգես
տու նորա ։
է Որպէս ցօղ՝ զի ցօղէ յահերմո
նէ ՚ի վերայ լերինն սիօնի ։
Զի անդ պատրաստեաց զօրհ
եւր նութի. և զկեանսն յաւիտենից ։

Տունք Գ ։

Սղ ՃԼԳ

# Օրհնութիւն Ոճոց ։

Ասա օրհնեցէք զտր ծառայք
տն զտր. որ կայք ՚ի տան տն. և ՚ի
գաւիթս այ մերոյ ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն․ եւ օրհնեցէք զտ͞ր ։

Օրհնեսցէ զքեզ տ͞ր ՚ի Սիոնէ․ որ արար զերկինս եւ զերկիր ։

Տունք Գ ։



Օ Թագաւորս է ազգին քանանացւոց.
Եարկ տապաստ սրով Հարեալ: 638

## Օրհնութիւն Զուարթնոց։

ճլե

Օրհնեցէք զանուն տեառն. օրհնեցէք ծառայք տեառն զտէր. որ կայք ի տան տեառն. և ի գաւիթս Աստուծոյ մերոյ

Օրհնեցէք զտէր զի քաղցր է. և սաղմոս ասացէք անուան նորա, զի քաղցր է։

Զյակոբ ընտրեաց իւր տէր. և զիսրայէլ ժառանգութիւն իւր։

Ես ծանեայ զի մեծ է տէր. և տէր մեծ է քան զամենայն կուռս։

Զամենայն զոր ինչ կամեցաւ և արար տէր. յերկինս և յերկրի ի ծով, և յամենայն խորս։

Հանէ զամպս ի ծագաց երկրէ. և զփայլատակունս իւր յանձ-

րեմս արար. Եւ հանէ զհողմս ՚ի շ
տեմարանաց իւրոց:
Որ հար զամ անդրանիկսն Եգիպ
տացւոց. ՚ի մարդոյ մինչեւ յա
նասուն:
Առաքեաց զնշանս եւ զարուե
ստս իւր ՚ի մէջ քո Եգիպտոս.
՚ի փարաւոն, եւ յամ զօրս իւր:
Որ հար զազգս բազումս. եւ էս
պան զԹագաւորս հզօրս:
Զսեհոն Թագաւոր ամուրհա
ցւոց. զովգ Թագաւոր բասանու
եւ զամ Թագաւորութիւնս քա
նանացւոց:
Եւ ետ զերկիր նոցա ՚ի ժառանգու
թիւն. ժառանգութիւն իսրայ
էլի ժողովրդեան իւրոյ:
Տէր անուն քո յաւիտեան. տէր
ես

 յիշա

յիշատակ քո ազգէ մինչև յազգ։
Դատէ տէր զժողովուրդ իւր. և
'ի ծառայս իւր մխիթարի։
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ
են՝ ձեռագործք են որդւոց մարդկան
Բերան գոյ՝ և ոչ խօսին. աչք են՝ քն
և ոչ տեսանեն։
Ականջք են՝ և ոչ լսեն. և ոչ գոյ
շունչ 'ի բերանս նոցա։
Նման նոցա եղիցին որք արարին
զնոսա. և ամենեքեան որք յու-
սացեալ են 'ի նոսա։
Տուն իսրայէլի օրհնեսցէ զտէր. և ք
տունն ահարոնի օրհնեսցէ զտէր։ ք
Տուն ղևեայ օրհնեցէք զտէր. և
երկիւղածք տն օրհնեցէք զտէր։
Օրհնեալ է տէր 'ի սիոնէ. որբնա-
կեալն է յերուսաղէմ։ Փառք Հ։
Գոբղյս ի դ տունէ։



Զ փարաւոն ծր ընկլեաց զօրօքն. սու-
զեալ՝ ՚ի խորս կարմիր ծովուն։ 642

Ալէլուիայ ։

Խոստովան եղերուք տն̃.
զի բարի է . զի յաւիտեան է
ողորմութիւն նորա ։
Խոստովան եղերուք այ̃ն
աստուծոց . զի յաւիտեան է
ողորմութիւն նորա ։
Խոստովան եղերուք տն̃ տէ
րանց . զի յաւիտեան է ողորմու
թիւն նորա ։
Արար զսքանչելիս մեծամեծս
միայն . զի ։
Զ երկինս արար իմաստութ̃բ
իւրով . զի ։
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ
ջուրց . զի յաւ ։

Որ արար զլուսաւորս մեծամեծս
զի յաւիտեան ։

Զարեգակն արար իշխանական
տուընջեան . զի յաւիտեանն է
ողորմութիւն ։

Զլուսին եւ զաստեղս իշխանա
կան գիշերոյ. զի։

Որ հար զերկիրն եգիպտացւոց
անդրանկօք իւրովք հանդերձ.
զի յաւիտեան ։

Որ եհան զիսրայէլ ՚ի միջոյ նոցա.
զի յաւիտեանն է։

Ի ձեռն բարձր՝ եւ՝ ի բազուկ հզօր
զի յաւէ ։

Որ հերձ զծովն մեծ . եւ բաժա
նեաց յերկուս մասունս. զի յաւ։

Որ անցոյց զի . սրայէլ ընդ մէջ
նորա . զի յաւի

Ընկղմեաց զփարաւօն եւզզօրսն
իւր 'ի ծո՛վ կարմիր . զի :
Որ եհան զժողովուրդ իւր յա
նապատ . զի յաւէի :
Որ հար զազգս մեծամե՛ծս . զի
յաւիտեա՛ն է ողորմու՟ :
Որ եսպան զթագաւո՛րս հզօրս
զի յաւիտեա :
Զսեհօն թագաւոր ամօրհա
ցւոց զի յաւիտեանէ :
Զովգ թագաւոր բասանու .
զի յաւիտեա՛ :
Ետ զերկիր նոցայ 'ի ժառանգու
թիւն . զի յաւէի :
Ժառանգութիւն իսրայէլի ծա
ռայի իւրոյ . զի յաւէի :
Յիշեա՛ց զմեզ տ͞ր 'ի խոնարհու
թեա՛ն մերում . զի յաւէի :

Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց. զի յաւիտ։

Որ տայ կերակուր ամ կենդանեաց զի յաւ։

Խոստովան եղերուք այ երկնաւորի. զի։

Տունք ԻԷ։



Առ ափ գետոյն բաբելացւոց նստէ-
աք լալով . և՛ի միջի ուռենեաց նոցա
զկտակարանս մեր կախեցինք ։ 647

ՃԼԶ

Դւա՛Թի ՚իՃեռն երեմիայի ան_
նըշան ՚իհեբրայեցւոց :

---

Տ Առ գե՛տս բաբելացւոց ՙնստաե
աք և լայաք · որպէս յիշեցինք մեք
անդ զսիոն :
Ի մէջ ուռենա՛ց նոցա , կախեցինք
զկտակարա՛նս մեր :
Ա՛նդ հարցանէին գերիչ.ք մեր
զբա՛նս օրհնութե՟ · և գերեվարք
մեր առնպէի՛ն զմեզ և ասէին :
Զ՛ Օրհնեցէ՛ք մեզ յօրհնութե
նէն սիօնի · իսկ՝ զիա՛րդ օրհնես
ցուք զօրհնութիւնս տ՟ն յերկի՛ր
օտար :
Թէ մոռացա՛յց զքեզ երուսա
ղէմ · մոռասցի՛ զիս աջ իմ :
Կցեսցի լեզու իմ ՚ի քի՛մս իմ , թէ

ոչ յիշեցից զքեզ . եւ թէ ոչ նախ նախադասեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ :
Յիշեա Տէր՝ զորդիսն Եդովմայ . յաւուրն Երուսաղէմի :
Որք ասէին, քակեցէք քակեցէք . մինչեւ ՚ի հիմունս հասուցէք
Դուստր բաբելացւոց, թշուառական . երանի, որ հատուցէ զհատուցումն քո . զոր դու մեզ հատուցեր :
Երանի որ կալցէ զմանկունս քո . եւ էհար զքարի :
Տունք Ծ :



Խոստովանեցայց տ՟ր իմ զքեզ բոլոր սրտիւ
եւ հաւատով։ առաջի սէ հրեշտակաց.
մտօք սաղմոս քեզ ասացից։ 650

Խոստովան եղէց քեզ Տ՟ր, բո
լորով սրտիւ իմով. առաջի հրեշ
տակաց սաղմոս ասացից քեզ։
Զի լուար զբանս բերանոյ իմոյ
երկիր պագից ՚ի տաճար ս՟բ քո.
Եւ խոստովան եղէց անուան քում.
վասն ողորմութեան եւ ճշմարտու
թեան քո։
Մեծ արարեր յամենայնի զա
նուն ս՟բ քո. յորում աւուր
կարդամ առ քեզ, վաղվաղակի
լուր ինձ. եւ բազում արասցես
ըզ զօրութիւնս յանձն իմ։
Խոստովան եղիցին առ քեզ Տ՟ր ա՟մ
թագաւորք երկրի. զի լուան
զբանս բերանոյ քո եւ օրհնեսցեն
զճանապարհս քո։

Մեծ են փառք տն՝ և բարձրէ
տր. զխոնարհս տեսանէ. և զբար
ձունս ՚ի հեռաստանէ ճանաչէ։
Թէպէտ և գնայցեմ ես ՚ի մէջ նե
ղութեց. կեցուսցես զիս ՚ի բար
կութենէ թշնամեոյն։
Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց
զիս աջ քո. և տր հատուսցէ
ընդ իմ։
Տէր ողորմութիւն քո յաւիտեան
զգործս ձեռաց քոց մի անտես
առնէր։

Տունք Ը։

Գուբղայս ես Է Տուն է։



Թէ յերկինս ելանեմ ասէ դու ա՛նդ
ես. եթէ ՚ի դժոխս իջանեմ. և անդ
իսկ մերձ ես։ 653

ՃԼԸ

Ի կատարած սաղմոս Դաւթի:

Տ փորձեցեր զիս՝ և ծանեար զիս. դու ծանեար զնստիլ իմ. և զյառնելն իմ:

Ի մէտ առեր զխորհուրդս իմ ՚ի հեռաստանէ. զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քններեր՝ և զամ ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգութիւն ՚ի լեզուի իմում:

Ահա դու տէր՝ ծանեար զյետինս իմ, և զառաջինս իմ. դու ստեղծեր զիս. և եդեր զձեռն քո ՚ի վերայ իմ:

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն.

յինէն . զօրացաւ , և ո՛չ հան
դարտեմ սմայ ։ ՃԼԸ
Յո՞ երթայց ես յոգւո՛յ քում
մէ. կամ յերեսա՛ց քոց ես յո՞ փա
խեայց ։
Թէ ելանեմ յերկինս , դու
ա՛նդ ես . և թէ իջանեմ ՚ի
դժոխս՝ և անդ մօտ ես ։
Թէ առից զթևս իմ ընդ ա
ռաւօտս . և բնակեցայց յեզերս
ծովու ։
Սա՛կայն՝ և անդ ձեռն քո առաջ
նորդեսցէ ինձ . և ա՛ջ քո ընկալ
ցի զիս ։
Ասացի՝ խաւար ուրեմն ար
դեօք ծածկեսցէ զիս . կամ գի
շեր փոխանակ լուսոյ փափկու
թեան իմոյ ։

Խաւարն քեզ ոչ խաւարեսցի.
և գիշերն որպէս զտիւ լուսաւոր
եղիցի. և խաւար նորա որպէս
զլոյս նորա։

Զի դու ստացար զերիկամունս իմ.
և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ

Խոստովան եղէց քեզ տէր՝ զի ա-
հեղ և սքանչելի ես. սքանչելի
են գործք քո՝ և անձն իմ սիրէ յ
յոյժ։

Ոչ թագեաւ ոսկր իմ ՚ի քէն,
զոր արարեր ՚ի ծածուկ. և կար
զօրութեան իմոյ, ընդ ստորինս
երկրի։

Զանգործս իմ տեսին աչք քո
և ՚ի գիրս քո ամենեքեան գրեսցին
Ի տուընջեան մոլորեսցին. և ոչ ոք էր որ
օգնէր նոցա։

Ինձ յոյժ մեծարու եղեն՝ բա
րեկամք քո, ա՛ծ . և յոյժ զօ
րացան իշխանք նոցա ։

Թուեցից զնոսա՝ և քան զաւազ
բազմասցին . զարթեայ, և արդ
ընդ քեզ եմ ։

Եթէ սպանանես զմեղաւորս
ա՛ծ . արք արեան, ՚ի բաց եղե
րուք յինէն ։ Սպնես

Զի հակառակութի՛ և ՚ի նախանձ
առցեն ՚ի նանի՛ր զքաղաքս քո ։

Ոչ ատելիս քո՛ տ՛ր, ատեցի . և ՚ի
վերա թշնամեաց քոց մաշեցայ ։

Ատելութեք՝ կատարեա՛լ ա
տեցի զնոսա . և եղեն ինձ թշնա
միք ։ ՚ի թշնամիս

Փորձեա՛ զիս ա՛ծ՝ և ծանի՛ր զսիրտ
իմ . քննեա՛ զիս՝ և ծանի՛ր զշաւիղս
իմ .

իմ. և տե՛ս՝ թէ իցե՛ն անօրէնու-
թիւնք 'ի ճանապարհս իմ. և
առաջնորդեա՛ ինձ 'ի ճանապա՛րհս
քո յաւիտենից ։

## Տունք ԻԴ։



Կործանեաց տր հրոյ կայծակաւք զամ
Թշնամին ։

ՃԼԹ Ի կատարած. սաղմոս դաւթի։

Ապրեցո զիս Տէր ի մարդոյ չարէ յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Որ խորհեցան զանօրէնութիւն ՚ի սիրտս իւրեանց. եւ զօր ամ պատ րաստեցան ՚ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որ պէս զօձին. եւ թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա զիս Տէր ՚ի ձեռաց մե ղաւորի. եւ ՚ի մարդոյ չարէ փըր կեա զիս։

Որ խորհեցան խափանել զգնացս իմ. եւ թագուցին ամբարտաւանք զորոգայթ ինձ։

արկին Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. եւ շուրջ զշաւղօք իմօք եդին ինձ գայթագղութի։

Ասացի՝ Տ՟ր՝ Ա՟ծ իմ ես դու. ունկն դիր Տ՟ր՝ ձայնի աղօթից իմոց ։

Տ՟ր Տ՟ր՝ զօրութիւն փրկութե՟ իմոյ. հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ։

Մի՛ մատներ զիս Տ՟ր ՚ի ցանկութեան մեղաւորաց. ոյք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել զիս ։

Զի մի՛ երբեք բարձրասցին և խորհուրդք նոցա. մի՛ կատարեսցի վաղճան կատարածի՛ նոց՟. և վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա ։

Արկցես ՚ի վերայ նոցա զկայծակունս հրոյ՝ և կործանեսցես զնո՟. ՚ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ ։

դասումն

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջո-
ղեսցի ՚ի վերա երկրի . զա՛յր մե-
ղաւոր , չարիք նոր որսասցեն
՚ի կորուստ :

Ծանեա՛յ զի առնէ Տէր՝ զդա-
տաստան աղքատին . և իրաւունս
տնանկին :

ն Արդարք գոհասցին զանուանէ
քումմէ . և բնակեսցին ուղիղք
առաջի երեսաց քոց :

Տունք ճդ.



Տ͞Ր կարդացի առ քեզ ձայնիւ՛ · լուր աղօ
թից քո ծառայիս · զոր երբեւ խունկ պա
տարագեմ · մատուցանեմ երեկոյին : 663

ՃԽ

## Սաղմոս Դաւթի։

Տէ՛ր կարդացի՛ առ քեզ՝ լուր ինձ. նայեա՛ց ՚ի ձայն աղօթից իմոց. ՚ի կարդալ իմում առ քեզ։

Ուղի՛ղ եղիցի՛ն աղօթք իմ որ պէս խունկ, առաջի՛ քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց՝ պատա
Տ ա րագ երեկոյի։

Դի՛ր Տէր՝ զպահապան բերանո՛յ իմոյ. եւ զդո՛ւռն ամուր, շրթա՛նց իմոց. զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ, բանիւ չարութեան։

Պատճառել զպատճա՛ռս մե ղաց. ընդ մարդս, որք գործե՛ն զանօրէնութիւն. ո՛չ եղէց կցորդ ընտրելեա՛ց նոցա։

Խրատեսցէ զիս արդա՛րն ողոր

մութեամբ՝ և յանդիմանն արտա
ցէ · Իւղ մեղաւորի մի՛ օծցէ
զգլուխ իմ, այլ աղօթք իմ՚ի
կամս Նորա ։

Արգելան մերձ առ վիմին դա
տաւորք նոցա · լուիցեն բանից
իմոց՝ և քաղցրասցին ։

Որպէս թանձրութիւն հողոյ, զի
սփռեալ է իվերա երկրի · ցրուես
ցին ոսկերք նոցա, մերձ ՚ի դժոխս ։

Առ քեզ Տէր, Տէր՝ են աչք իմ,
՚ի քեզ յուսացայ Տէր · մի՛ հաներ
զհոգի յինէն ։

Ալ պահեա զիս յորոգայթէ, որ
թաքուցան ինձ · ՚ի գայթագղու
թենէ, գործողին զանօրէնութի ։

Անկցին ՚ի ցանցս նոցա մեղաւորք ·
միայն եմ ես՝ մինչև անցից ։



Հոգիս յինէն նուաղեցաւ. զի որո
գայթ ինձ թագուցաւ: զիս ապրեցո՛
՚ի հալածչացս. եւ հան մեղաց բանդէ
զանձնիմ:

ՃԽԱ

Իմաստութեն Դաւթի ։ աղօթք
՚ի ժամանակի զի էր նա յայրին
անդ ։

Ձայնիւ իմով, ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։ Սփռեցից առաջի նորա զաղօթս իմ. եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից ։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու Տէր ծանեար զշաւիղս իմ. ՚ի ճանապարհ յորում գնայի, թագուցաւ ինձ որոգայթ ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, եւ ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ. եւ ոչ գտաւ խնդրող անձին իմոյ ։

Աղաղակեցի առ քեզ Տէր՝ եւ ասացի,

սացի, դո՛ւ ես յոյս ևբաժի՛ն իմ
յերկրի՛ն կենդանեաց։

Նայեա՛ց տ՟ր յաղօթս իմ, զի ես
խոնա՛րհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս
ք 'ի հալածչա՛ց իմոց՝ զի հզօր եղեն
քան զիս։

Տ՟ր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ.
գոհանա՛մ զանուանէ՛ քումմէ։
Ի՟ն քե՛զ սպասեն արդարքն՝
մինչև հատուսցես։

Տունք Է̅։

Գ. ուբղայս ծևջ̅. տունէ։



Զար Թշնամին զիս հալածեաց . խոնարհեցոյց զկեանս իմ յերկիր . ՚ի խաւարի զիս բնակեցոյց . որպէս մեռեալ յաւիտենից ։

ՃԽԲ

Սաղմոս Դաւթի. 'ի ժամանակի զի հալածէր զնա աբիսողոմ:

Տ լու՛ր աղօթից ի
մոց. ունկն դիր
խնդրուածոց իմոց,
ճշմարտութբ քով:
Լո՛ւր ինձ արդարութեամբ քով
եւ մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ
ծառայի քում. զի ո՛չ արդարանայ
առաջի քո ամենայն կենդանի:
Հալածեաց թշնամին զանձն իմ.
խոնարհ արար յերկիր զկեանս
իմ. Նստոյց զիս 'ի խաւարի որ
պէս մեռեալս յաւիտենից:
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և
սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինսն. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խոր հեցայ. Եւ համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծա րաւի առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր՝ զի նուաղեցաւ* յի նէն հոգի իմ։ (* է)

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցայց* այնոցիկ, որք իջանեն ՚ի դուբ։ (* նաց)

Լսելի արա ինձ առաւօտու զո ղորմութիւնս քո. զի ես ՚ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յորում գնա ցից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ՜ր․ զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո․ զի դո՛ւ ես ա՜ծ իմ։

Հոգի՛ քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ յերկի՛ր ուղիղ։

Վասն անուա՜ն քո տ՜ր կեցուսցես զիս՝ արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զա՛նձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ․ և կորուսցես զա՜մ նեղիչս անձի՛ն իմոյ․ զի ես ծառայ քո՛ եմ։

Տունք ԺԲ.



Ոաճէթ էհատ զգլուխ գողխադու. ևեբին
ընդ յաւաշ դստերըն խղէ : Մրկ 673

ՃԽԳ

Սաղմոս Դաւթի. Առ Գողիաթ:

Օրհնեալ տէր Աստուած իմ. որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ. և զմատունս իմ ՚ի ճակատամարտ:

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ. օգնական իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յուսամ ՚ի նա՝ որ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև:

Տէր ո՛վ է մարդ՝ զի յայտնեցար դու նմա. կամ որդի մարդոյ՝ թէ համարիս ինչ զնա:

Մարդ նանրոյ նմանեցաւ. և աւուրք նորա, որպէս հովանի անցին:

Տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ. մերձեա՛ց ՚ի լերինս և ծխեսցին:

Փայլեա՛ զփայլատակո՛ւնս քո և
խռովեա՛ զնոսա. առաքեա զնետս
քո՝ և ցրուեա՛ զնոսա:

Առաքեա՛ զձեռն քո ՚ի բար
ձանց՝ և փրկեա՛ զիս ՚ի ջրո՛ւց բազ
մաց. և ՚ի ձեռաց որդւո՛ց օտարաց:

Որոց բերանք իւրեանց խօսե
ցան զնանրութիւն. և ա՛ջ նոցա
ա՛ջ է մեղաց:

Աստուա՛ծ յօրհնութիւն նո՛ր օրհնե
ցից զքեզ. և տասնաղեա՛ն սաղմո
սարանա՛ւ սաղմո՛ս ասացից քեզ:

Որ տացէ զփրկութիւն թագաւո
րա՛ց մերոց. որ փրկելո՛ցն իցէ
զԴաւիթ ծառայ իւր ՚ի սրո՛յ
չարէ:

Փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս. ՚ի ձե
ռաց որդւո՛ց օտարաց:

Որոց բերանք խօսեցան զնանրութիւն. և աջ նոցա աջ է մեղաց։

Որոց ուստերք իւրեանց՝ որպէս զնորատունկ. հաստատեալք են ՚ի մանկութենէ իւրեանց. և դստերք նոցա զարդարեալ և պաճուճեալ ՚ի նմանութիւն տաճարի։

Շտեմարանք նոցա, լի են՝ և բղխեն ՚ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են՝ և բազմանան ՚ի գնացս իւրեանց. և անդեայք նոցա պարարտք են։

Ո՛չ գոյ խրամատութիւն ցանկոյ նոցա. և ո՛չ աղաղակ ՚ի հրապարակս նոցա։

Երանեցին զժողովրդեան՝ որոյ այս այսպէս է. Նա երանելի է ժողովուրդ, որոյ Տէր՝ Աստուած է նորա։

Սաղմ Օրհնութեց Դաւթի:



Բարձր առնեմ զքեզ ած իմ՝ եւ թագաւոր իմ. եւ օրհնեմ զանուն քո յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից:

Զօր հանապազ օրհնեցից զքեզ. եւ գովեցից զանուն քո յաւիտեան. եւ յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է տր՝ եւ օրհնեալ է յոյժ. եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ:

Ազգք՝ եւ ազգք՝ գովեսցեն զգործս քո. եւ զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան քոյ խօսեսցին. եւ զսքանչելիս քո պատմեսցեն:

Զօրութիւն ահեղ քո ասասցեն.
եւ զմեծութիւնս քո պատմեսցեն։
Զյիշատակ բազում քաղցրու-
թեան քո բղխեսցեն. եւ արդա
րութեամբ քով ցնծասցեն ։
Գթած ողորմած է Տէր. երկայ
նամիտ եւ բազումողորմ ։
Քաղցր է Տէր առ ամենեսեան.
եւ գթութիւն նորա ՚ի վերա ամ
արարածոց իւրոց ։
Խոստովան եղիցին առ քեզ Տէր
ամենայն գործք քո. եւ սուրբք
քո օրհնեսցեն զքեզ ։
Զփառս արքայութեան քո ա-
սասցեն . եւ զմեծութիւնս քո
պատմեսցեն ։
Ցանուցանել որդւոց մարդկան զզօ
րութիւնս քո. եւ զփառս մեծվայ

ելչութեան արքայութեան քո:

Արքայութիւն քո արքայութիւն
ամենայն յաւիտենից. և տէրութիւն
քո ազգէ մինչև յազգ:

Հաւատարիմ է տէր յամենայն բանս իւր. ՚ի
և արդար է յամենայն գործս իւր:

Հաստատէ տէր զամենայն գայթագ
ղեալս. և կանգնէ զամենայն գլորեալս:

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան
և դու տաս զկերակուր նոցա ՚ի
ժամու:

Բանաս զձեռն քո և լցուցանես
զամենեսեան քաղցրութեամբ
կամօք քովք:

Արդար է տէր յամենայն ճանապարհս
իւր. և սուրբ է յամենայն գործս իւր:

Մերձ է տէր առ ամենեսեան, որք
կարդան առնա. առ ամենեսեան

՚ հայեն ՚ տաս դու նոցաւ կեր

բարւոյն ՚ի

որք կարդան առ նա ճշմարտու-
թեամբ ։

Զ կամս երկիւղածաց իւրոց առնէ տէր․ աղօթից նոցա լուի․ և կեցուցանէ զնոսա ։

Պահէ տէր զամենեսեան, որք սի-րեն զնա․ և զամ մեղաւորս սատակէ տէր ։

Զ օրհնութիւնս տն խօսեսցի բերան իմ․ օրհնեսցէ ամենայն կենդանի զանուն սուրբ նորա․ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Դպրումյ

Տունք իէ ։

Պ․ ուբղայս ծդ ։ Տունէ ։



ՏՐ ՅՐուէ. որ բանայ զաչս կուրին
եւ կանգնէ 'ի գլորմանէ ։ 681

ժխե

# Ալէլուիա. Անգեայ. և Զա- քարեայ։

Օրհնեա անձն իմ զտր
օրհնեցից զտր ի կեանս
իմ. և սաղմոս ասացից
այ իմոյ, մինչև եմ ես։
Մի յուսայք յիշխանս՝ և յոր
դիս մարդկան. զի ոչ գոյ փրկու
թիւն ի նոսա։
Ելցէ հոգի ի նոցանէ՝ և դարձ
ցին անդրէն ի հող. և յայնմ
աւուր, կորիցեն ամենայն խոր
հուրդք նոցա։
Երանի ազգի՝ որոյ տր ած յակո
*նմա բայ օգնական է, և յոյս նորա
ի տր ած է։

Ո՛ր արար զերկինս և զերկիր . զծով և զա̃մ որք ՚ի նոսա ։

Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւիտեան. և առնէ ՚իրաւունս զըր կելոց ։

Տայ զհա՛ց քաղցելոց . և արձակէ զկապեալս տ̃ր ։

Տ̃ր բանայ զա՛չս կուրաց . և կան գնէ զգլորեա՛լս տ̃ր ։

Տ̃ր սիրէ զարդարս՝ տ̃ր պահէ զպանդուխտս . զո՛րբս և զայրիս ընդունի տ̃ր . և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ ։

Թագաւորեսցէ տ̃ր յաւիտեան ա̃ծ քո սիոն . ազգէ մինչև յազգ ։

Տունք Ժ ։

ՃԽԶ

Ալէլուիա . Անգեայ . և Զաքարեայ :

Օրհնեցէք զտ̃ր զի բարի է սաղ
մոս՝ ա̃յ մերոյ քաղցր եղիցի օրհ
նութիւն :

Շինէ զերուսաղէմ տ̃ր . և զցրուեալսն իսրայէլի ժողովէ :

Բժշկէ զբեկեալս սրտս . և պա
տէ զամենայն վէրս նոցա :

Որ թուէ զբազմութիւն աստե
ղաց . և զամենեսեան զնոսա յա
նուանէ կոչէ :

մեր Մեծ է տ̃ր և մեծ է զօրութիւն
նորա . և իմաստութեան նորա
ոչ գոյ բաւ :

Ընդունի զհեզս տ̃ր՝ և խոնարհ
առնէ զամբարտաւանս մինչև
յերկիր :

Օրհնեցէք զՏէր խոստովանու-
թեամբ. և սաղմոս ասացէք նմա
օրհնութեամբ։

Որ, զգեցոյց զերկինս ամպովք.
և պատրաստ արար զանձրև իւր
յերկիր։

Բուսոյց զխոտ ՚ի լերինս. և զդա-
լար ՚ի ծառայութիւն մարդկան։

Որ, տայ անասնոց կերակուր.
ձագուց ագռաւուց որք կարդան
առնա։

Ոչ ըստ զօրութեան ձիոյ
կամեցաւ Տէր. և ոչ ընդ երանս
առն սկայի հաճեցաւ։

Այլ հաճեցաւ Տէր ընդ երկիւ-
ղածս իւր. և ընդ այնոսիկ, որք
յուսան յողորմութիւն նորա։

Տունք ժե։

ՃԽԷ Սաղմոս դաւթի. ալէլուիա:
Անգեայ եւ զաքարիայ:

Գովեա երուսաղէմ, զՏր:
Եւ օրհնեա զԱծ քո, սիօն:
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց
եւ օրհնեաց զորդիս քո 'ի քեզ:
Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղու-
թիւն. պարարտութբ ցորենոյ
լցոյց զքեզ:
Առաքէ զբան իւր յերկիր.
վաղվաղ ընթանան պատգամք
նորա:
Տայ զձիւն որպէս զասր. եւ
զմէգ որպէս մոխիր ցանեաց:
Արկանէ զսառն որպէս պա-
տառս. առաջի ցրտոյ նորա ո՞
Տաղ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր՝ եւ հալէ զնոսա · շնչեսցէ հողմք՝ եւ գնասցեն ջուրք ·

Պատմէ զբան իւր յակոբայ · զարդարութիւն եւ զիրաւո՛ւնս իսրայելի ։

Ոչ այսպէս արար ամենայն ազգա՛ց տ̃ր · եւ զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա ։

Տունք Ժ̃ ։

Գ․ ուրբղայս Ը̃ եւ Թ̃ տունն ։

Ծ̃Ը̃Ը̃ · փոխեն Ժ̃Է̃ տան օգնէր բառն առաջնորդէր ասա · զե յետոյ տեսինք · եւ չեղեւ հնար փոխելոյ ։




՚Ի մէջ երկուց կենդանեացն տեսաւ.
կենդանին յաւիտենից: Եդ 688

# Աղօթք Ամբակումայ մարգարէի :

Տ՝ զլուր քո լուայ եւ երկեայ. տ՛ր նայեցայ ՚ի գործս քո եւ զարհուրեցայ :

Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. ՚ի մերձենալ ամացն յայտնեսցիս. եւ ՚ի հասանել ժամանակին երեւեսցիս :

Ի խռովել անձին իմոյ. ՚ի ժամանակի բարկութեան՝ զողորմութիւն յիշեսցես :

Ած ՚ի հարաւոյ եկեսցէ. եւ սուրբն ՚ի փառան լեռնէ :

Յայտնեսցէն երկինք զվայելու

ոստն

չութիւն փառաց նորա. և օրհ
նութ̃ նորա լցան տիեզերք։
Ճառագայթք որպէս 'ի լուսոյ
հատան 'ի նմանէ. և եղջիւրք
'ի ձեռին նորա դտան. և անդ
հաստատեցաւ զօրութիւն փա
ռաց նորայ։
Յերեսաց նր̃ ելցէն հարուածք
և զհետ շաւղաց նորա, երթի
ցեն մեծամեծք 'ի թռչնոց։
Եկաց և չափեաց զերկիր. հայե
ցաւ և դիտեաց զհեթանոսս։
Լերինք հալեսցին՝ և անտառք
վատնեսցին. Ճանապարհք որք
'ի սկզբանէն էին, կուրասցին. և
'ի նմանէ դողասցին ամ̃ երկիր։
Տեսին զբանակս քուշացւոց.
խռովեցան բնակիչք, վրանաց
մադիամու։

Ընդդիմակայր

Մի թէ 'ի վերայ գետոց բարկաս
ցիս դու տէր. կամ սրտմտութիւն
քո 'ի վերայ գետոց. կամ բարկու
թիւն քո 'ի վերա ծովու:
Ելեր դու 'ի կառս քո՝ հեծելու
թիւն քո փրկութիւն եղեւ յելա
նելն քո:
Զարթեաւ աղեղն քո 'ի նետս
կապարճից քոց. արբուցեր
զգետս. ցրուեցեր զերկիր. և
դողացուցեր 'ի սաստկութենէ
անձրեւի, որք անցանէին ընդ սա:
Անդունդք աղաղակեցին մե
ծապէս. լոյս փայլման արեգա
կանն արգելաւ: Եւ ծագումն
լուսնին դադարեցաւ:
Որպէս 'ի նշոյլս սլաքաց քոց Ն
գնասցես. և որպէս 'ի լոյս փայ
լատակման սրոյ քոյ:

դման

Աարկութեամբ զարթիցես 'ի վերայ երկրի. եւ դողութեամբ կասցես զհեթանոսս:

Երեւեցար 'ի փրկութիւն ժողովրդեան քո. 'ի փրկել զընտրեալս քո:

Կետածեցեր 'ի գլուխս մրդկան ամբարտաւանից. եւ մինչեւ յանդունդս ծովու ընկղմեցան:

Խնդրեցեր զվրէժ զօրութբ՛ քով 'ի զօրագլխացն մեղաւորաց. որք յուսացեալ էին յանդգնութեանս իւրեանց. զի կերիցեն զաղքատն 'ի գաղտնիս:

դա՛

Առաքեցեր 'ի վերայ ծովու զերիվարս քո. եւ խռովեցան յորդ ջուրք անդնդոց:

խք

Կացի ես՝ եւ դեղեան աղիք իմ

 'ի ձայ

՚ի ձայնէ բերանոյ իմոյ. էմուտ դողումն յոսկերս իմ. և ես յանձն իմ խռովեցայ.

Ոա՛յս պահեսցես յաւուր նեղութեան. ածել ՚ի վերա աղդի. որք մարտնչին ընդ ժողովրդեան քում.

Թզենին ո՛չ տացէ զպտուղ իւր. և յայգւոջ. բեր մի՛ գտցի. ձիթենեւք սնասցին. և երկիր մի՛ բուսուսցէ զդալարի.

Պակասեսցին հօ՛տք ՚ի ճարակաց և եզինք մի՛ գտցին առ մսուրս.

Ես ՚ի տէ՛ր յուսացայ. ցնծացայց և ուրախ եղէց՝ յա՛ծ փրկչի իմ.

Տէր ետ ինձ զզօրութիւն. և կացոյց զոտս իմ ՚ի հաստատութեան. ՚ի վերայ պարանոցի թշնա

մւո՛յն կացոյց զիս. և հանգոյց
զիս երա՛գ երա՛գ ։

Ո՛ւր մեզ տէր՝ լուր մեզ ածայնն ողորմութեամբ. և գթութեամբ քո խնայեա յարարածս քո ։ մարդասէր տէր. վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի. և վ՛ս խաչի քո պատուականի. ընկա՛լ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ ։

Կանոնս. ԻԹ փոխ է ։ և Ժ և Է տունէ ։

Ութ կանոնս Ծ և Զ գոբաղդյէ և Ճ և Ծ. փո՛խ է ։ և Ա և Ն և Կ տունէ ։



Օհնեցէք զՏ̃ր յերկնից · հրեշտակք
եւ ա̃մ զօրութի̃ք նորա ։ 695

ՃԽԸ

# Ալէլուիա Զաքարեայ։

Օրհնեցէ՛ք զՏէր յերկ
նից. օրհնեցէ՛ք զնա
ի բարձանց։

Օրհնեցէ՛ք զնա հրեշտա՛կք
նորա. օրհնեցէք զնա ամենայն
զօրութի՛ւնք նորա։

Օրհնեցէք զնա արեգա՛կն և
լուսի՛ն. օրհնեցէք զնա ամենայն
աստե՛ղք և լոյս։

Օհնեցէք զնա երկի՛նք երկնից.
և ջուրք որ ի վերոյ քան զերկի՛նս,
օրհնեսցեն զանո՛ւն Տն։

Զի նա ասա՛ց և եղեն. հրա
մայեա՛ց և հաստատեցան։

Կացոյց զնոսա յաւիտեա՛նս յաւի

տենից · սահմա՛ն եդ՝ և ո՛չ ան
ցանէ ։

Օրհնեցէ՛ք զՏ՛ր յերկրէ · վի
շապք և ա՛մ խորք ։

Հուր և կարկուտ՝ ձի՛ւն և սառն՝
հո՛ղմ և մրրիկ · որք առնէք զբա՛ն
Նորա ։

Լերի՛նք՝ և ա՛մ բարձունք · ծա՛ռք
պտղաբերք՝ և ամենայն մայրք ։

Գազա՛նք և ա՛մ անասունք · սո
ղո՛ւնք և ամենայն Թռչո՛ւնք
Թևաւորք ։

Թագաւո՛րք երկրի՝ և զօ՛րք իւր
եանց · իշխա՛նք և ա՛մ դատաւո՛րք
երկրի ։

Երիտասա՛րդք և կուսանք ·
ծե՛րք և տղայք՝ օրհնեցէք զա
նո՛ւն Տ՛ն ։

Ալէլուա ։

Բարձրացա՛ւ անուն նորա միայն խոստովանութիւն նմա յերկի՛նս և յերկրի։

Բա՛րձր առնէ տ̃ր զեղջիւր ժողովրդեա՛ն իւրոյ. օրհնութիւն նմա յա̃մ սրբոց նորա. յորդւո՛ցն իէլի. ժողովրդեան որ մե՛րձ է առ տ̃ր։

Տունք ժ̃է.

ՃԽԹ Ալէլուիայ անգեայ և զաքարիայ։

Օրհնեցէք զտ̃ր յօրհնութի՛ւն նոր. օրհնութիւն նմայ յեկեղե ցի՛ս սրբոց։

Ուրախասցի իսրայէլ յարարի՛չն իւր. որդիք սիոնի ցնծասցեն 'ի թագաւո՛րն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհ

նութեամբ . սաղմոսիւք և օրհ
նութե՟ սաղմ՛ոս երգեսցեն նմա :

Հաճեց՛ տէր ընդ ժողովուրդս իւր
սուրբ . և բա՛րձր առնէ զհեզս
'ի փրկութեան :

Պարծեսցին սո՛ւրբքն փառօք՝
և ցնծասցեն 'ի հանգի՛ստս իւր
եանց . և բա՛րձր արասցեն զա՟ծ,
բերանո՛ք իւրեանց:

Սուր երկսայրի եա 'ի ձե՛ռս նոց՟ .
առնուլ զհատուցումն 'ի հեթա
նոսաց . 'ի յանդիմանութիւն ա՟՛մ
ժողովրդոց :

Կապել զթագաւո՛րս նոցա կա
պանօք . և զզօրաւորս նոցա ձե
ռակապօ՛ք երկաթիւք:

Առնել ն՟ց դատաստան ըստ գրոց 'ի
փառք ա՛յս են ա՟մ սրբո՛ց նոր՟ :

ՃԾ

# Ա.լէլուիայ Անգեայ և Զաքարեայ:

Օրհնեցէք զած՛ ի սրբութեան՛ նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան՛ ի զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա ի զօրութեան՛ նորա. օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա:

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ՝ գովեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա ի բամ՛բս քաղցր. և գովեցէք զնայ ի բարբառս լսելիս:

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութե. ամ՛ հոգիք օրհնեցէք զՏր:




Սրովն գողիաթու · դաւիթ եհատ զգլուխ նորին։

Այս սաղմոս ինքնագիր դաւ՟թի է արտաքոյ թուոց. Ի ժամանակի զի ել նա նահատակ ընդդէմ գողիաթու, առաջի սաւուղայ՝ եւ ա՟մ զօրացն իսրայէլի։

Փոքր էի ես յեղբարս իմ. եւ կրսեր ՚ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ։

Ձեռք իմ արարին զսաղմոսարան. եւ մատունք իմ կազմեցին զգործի օրհնութեան։

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տ՟ն իմում. ինքնին տ՟ր ամենայնի՝ լու՟ իցէ զա՟մ։

Նա առաքեաց տ՟ր զհրեշտակ 702 իւր.

իւր․ և համբարձ զիս ՚ի հօտէ խա
շանց հօր իմոյ․ և եօծ զիս յօ
ծութիւն իւղոյ իւրոյ․

Եղբարք իմ մեծամեծք և գե
ղեցիկք․ և ո՛չ հաճեցաւ ընդ
նոսա տէր․

Ելի ես ընդ դէմ այլազգւոյն
և նզովեցի զկուռս նորա․
հանի զսուսերն ՚ի նմանէ․ և
հատի զգլուխ նորին․ և բարձի
զնախատինս յորդւոցն իսրայ
ելի։



ուռ հնոցին զերեք մանկունքն առ
ին . զի պատկերին ոչ զոհեցին ։ 704

Օրհնութիւն երից մանկանցն ։
անանիանցն ։

Օրհնեալ ես տր ած հարցն մերոց . օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան ։

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ . արդար ես դու տր՝ և ամենայն գործք քո ճշմարիտ են ։

Ճանապարհք քո ուղիղ են՝ և ամ դատաստանք քո արդար են ։

Դատաստան արդարութեան ածեր՝ ի վերայ մե[illegible]ա ամի . զոր ինչ ածեր՝ ի վերայ մե[illegible]՝ և քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի ։

Արդարութեամբ և յիրաւի ածեր
խ ե

 զայս

զա՛յս տէր ՚ի վերայ մեր՝ վասն մե
ղաց մերոց.

Անօրինեցա՛ք՝ յանցեա՛ք ապս
տամբ լինել ՚ի քէն մեղա՛ք յամե՛ն՝
եւ պատուիրանա՛ց քոց, մեք ո՛չ ան
սացաք։

Ո՛չ պահեցա՛ք եւ ո՛չ արարաք՝
որպէս պատուիրե՛ցեր դու մեզ.
զի զբարի՛ս գտցուք մեք ՚ի քէն։

Ե՛րդ՝ զամ զոր արարեր՝ եւ զոր
ինչ ածեր ՚ի վե՛րա մեր, արդա՛ր
դատաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնա
մեա՛ց մերոց. անօրինա՛ց՝ խստի՛ց
եւ ապստամբողաց։

՚Ի ձե՛ռս Թագաւորի՝ անօրինի՛
եւ չարի, քան զամ երկիր մատնե
ցե՛ր զմեզ։

Եւ արդ՝ ո՛չ գոյ մեզ ժամ.
բանալ զբերանս մեր. զի ամօթ
եւ նախատինք եղեաք. ծառայից
քոց եւ պաշտօնէից:
Այլ մի՛ մատներ զմեզ ՚ի սպառ՝
վասն անուան քում. մի՛ ցրեր
զուխտս քո. եւ մի՛ ՚ի բացեայ առ-
ներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ:
Վասն աբրահամու սիրելւո՛յ քո
իսահակայ ծառայի՛ քո՝ եւ իսրայ
էլի սրբոյ քո:
Խոստացար նոցա եւ ասացեր՝
բազմացուցից զզաւակ ձեր որպէս
զաստեղս երկնից բազմութեամբ. եւ
որպէս զաւազ առ եզր ծովու:
Եւ արդ՝ տէր նուազեցաք մեք
քան զամենայն ազգս. եւ եմք տնանկք
յամենայն երկրի. այսօր վասն մեղաց մե-
րոց:

Ո՛չ գոյ ՚ի ժամանակիս յայսմիկ իշխան մարգարէ և առաջնորդ. ո՛չ ողջակէզ պատարագաց. ո՛չ խունկ օրինաց. և ո՛չ տեղի, պատարագս մատուցանել առաջի քո. և զողորմութիւն գտանել ՚ի քէն:

Այլ անձամբ խոնարհեալ և հոգւո՛վ տառապանաց. ընդունելի լիցուք մեք, որպէս զողջակէզս խոյոց՝ և զուարակաց. և որպէս բիւրաւո՛րս գառանց պարարտաց:

Նոյնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քո. զի կատարեալ գտցուք զկնի քո. և չէ յամօթ յուսացելոց ՚ի քեզ:

Եւ ա՛րդ՝ գա՛մք զհետ քո, ամենայն սրտի՛ւք մերովք՝ երկնչիմք ի քէն՝ և խնդրեմք զերեսս քո. Տէր՝ մի՛ յամօթ առներ զմեզ:

Այլ արա առ մեզ ըստ հեզութեան քում. և ըստ բազո՛ւմ ողորմութեան քում. փրկեա՛ զմեզ և վասն սքանչելեա՛ց քոց Տէր. և փառաւորեսցի անո՛ւն քո յաւիտեան:

Յամօ՛թ լիցին ամենեքեան, որք չարչարեն զծառայս քո՝ ամաչեցեա՛լ լիցին բռնութիւնք նոցա. և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեսցին:

Եւ ծանիցեն զի դո՛ւ ես Տէր, Աստուած միայն. որ փառաւորեա՛լդ ես ՚ի վերայ ամենայն տիեզերաց:

Օրհնեա՛լ ես դու Տէր Աստուած հա՛րցն մե

մերոց. գովեա՛լ և առաւե՜լ բարձ
րացեա՛լ յաւիտեան:

Եւ օրհնեա՛լ է անուն սուրբ փառա
ւա՛ց քոց. գովեալ և առաւե՛լ
բանձրացեալ:

Օրհնեա՛լ ես ՚ի տաճարի փառաց
սրբութեա՛ն քո. գովեալ:

Օրհնեա՛լ ես ՚ի վերայ աթոռոյ
արքայութե՟՛ քո. գովեալ:

Օրհնեա՛լ ես որ նստի՛ս ՚ի քրո
բէս՝ և հայի՛ս յանդունդս. գով:

Օրհնեա՛լ ես ՚ի վերայ հաստա
տութեա՛ն երկնից՝ գովեալ:

Օրհնեցէք ամ՟ գո՛րծք տն՟ զտր՟.
օրհնեցէք և բա՛ձր արարէք զնա
յաւիտեան:

Օրհնեցէք ե՛րկինք՝ զտր՟. օրհ
նեցէք և բա՛րձր արա:

Օրհնեցէ՛ք հրեշտակք տն. և
ջուրք որ ՚ի վերոյ երկնից զտր :
Օրհնեցէք զօրութիւնք տն՝ և
արեգակն և լուսին զտր :
Օրհնեցէք աստեղք երկնից՝
անձրևք և ցօղք զտր :
Օրհնեցէք ամ հողմք. հուր
և ջեր զտր՝ :
Օրհնեցէք ցուրտ և տօթ. ցօղ
և ձիւնաբեր զտր :
Օրհնեցէք սառն և պարղ՝ ե
ղեամն և ձիւն զտր :
Օրհնեցէք տիւք և գիշերք.
լոյս և խաւար զտր :
Օրհնեցէք ամպք և փայլա
տակունք՝ և երկիր զտր :
Օրհնեցէք լերինք և բլուրք.
և ամ բոյսք երկրի զտր :

Օրհնեցէք աղբիւրք՝ ծովք եւ գետք զՏէր ։

Օրհնեցէք կէտք եւ ամենայն կայ
կէ տառք որք ՚ի ջուրս. եւ թռչունք երկնից զՏէր ։

Օրհնեցէք գազանք եւ անասունք. եւ որդիք մարդկան զՏէր ։

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր. օրհ։

Օրհնեցէք քահանայք զՏէր ։

Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր։

Օրհնեցէք անձինք եւ շունչք արդարոց զՏէր. օրհ։

Օրհնեցէք սուրբք եւ խոնարհք սրտիւք զՏէր ։

Օրհնեցէք Անանիա Ազարիա եւ Միսայէլ զՏէր. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան ։



Մ՝արիամ երգէ. և հրշ̃կք ցնծան: 713

Օրհնութիւն Մարիամու Աս-
տուածածնէն :

Մեծացուսցէ անձն
իմ զՏր . եւ ցնծասցէ հո
գի իմ, աստուծով փրկ
չաւ իմով :

Այց արար , ՚ի վերայ
խոնարհութեան աղախնոյ իւրոյ
այսուհետեւ երանեսցեն ինձ ամե
նայն ազգ :

Արար ընդ իս մեծամեծս հզօրն
եւ սուրբ է անուն նորա :

Ողորմութիւն արար ազգաց
յազգս երկիւղածաց իւրոց . եւ
արար զզօրութիւն բազկաւ իւրով :

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մը
տաց սրտից . եւ քակեաց զհզօրս
յաթոռոց : 714 Օ խո

Զխոնարհս բարձրացո՛յց զկա-
րօտս ելից բարութեամբ. եւ զմե-
ծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլի ծա-
ռայի իւրոյ. յիշելո՛վ զողորմու-
թիւն իւր: Ղուկ. ա.

Որպէս խօսեցաւ առ հա՛րսն մեր
ընդ աբրահամու, եւ զաւակի
նորա. յաւիտեան:




Երեւումն հրեշտակպետին, զաքա
րիայի. եւապապանձումն. լեզուին ։ 716

## Օրհնութիւն զաքարիայի․ հօրն յովհաննու մկրտչի։

Օրհնեա՛լ տր ած իսրայէլի որ այցել․ եւարար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց զեղջիւր փրկութե՛ ՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ․ որպ խօսեցաւ բերանո՛ք սրբո՛ց՝ որք յաւիտենից մարգարէքն էին։

Փրկութիւն ՚ի թշնամեա՛ց մերոց և ՚ի ձեռաց ամ ատելեա՛ց մերոց․

Առնել զողորմութի առ հա՛րսն մեր՝ եւյիշել զկտակարանս սրբութեա՛ն իւրոյ։

Զերդո՛ւմն, զոր երդուաւ աբրահամու հօ՛ր մերոյ․ տալ մեզ առանց երկիւղի զփրկութի, ՚ի թշն․ մեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և
արդարութեամբ առաջի նորա.
զամ աւուրս կենաց մերոց:
Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձ
րելոյն կոչեսջիր. գնասցես առա
ջի տն՝ պատրաստել զճանա
պարհս նորա:
Տալ զգիտութիւն, փրկութեան
ժողովրդեան նորա. ՚ի թողու
թիւն ամենայն մեղաց մերոց:
Վասն գթոյ ողորմութեան տն
այ մերոյ. որով երևեցաւ մեզ
արեգակն ՚ի բարձանց. լուսաւոր
առնել զխաւար մեր:
Ծագել զլոյս ՚ի վերայ այսո
ցիկ՝ որք նստեալք ՚ի խաւարի և
՚ի ստուերս մահու. ուղղել զոտս
մեր ՚ի ճանապարհս խաղաղութե:



Սիմէօն գրգուէր զՔս․ և հայցէր զար
ձակումն 'ի կապանացն ։ 

Աղօթք սիմէօնի ծերունւոյն ։

Արդ արձակես զծառայս քո տր̅՝ ըստ բանի քում ’ի խաղաղութի̅. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց ։

Լոյս յայտնեցար հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում իսրայէլի ։

Ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք ուրախ լեր բերկրեալդ. տր̅ ընդ քեզ ։ օրհնեալ ես դու ’ի կանայս. և օրհնեալ է. պտուղ որովայնի քո յս̅ ։ սբ̅ մարիամ. մայր այ̅. բարեխօսեա վս̅ մեր մեղաւորացս. այժմ և ի ժամ մահու մերում ամէն ։



’ի յայտնութիւն



Մանասէ Թագաւորն է։ ԽՂ

# Աղօ՛թք մանասէի թագաւորին

Տ՛ ամենակալ՝ ած
աբրահամու՝ իսահա
կայ՝ յակոբայ՝ և
զաւակի նոցա արդա
րոց. ամենակա՛լ տ՛ր՝ թո՛ղ զմեղս
իմ:

Որ արարեր զերկի՛նս և զերկիր՝
և զամենայն զա՛րդ նոցա. ամե
Որ կապեցեր զծով բանիւ հրա
գ մանաւ քով. փակեցեր 'խո՛րս, և
կնքեցեր ահաւոր և փառաւո
րեա՛լ անուամբ քով սրբով. ամե
Որ ամենայն ինչ սարսի՛ և դողայ՝
յերեսաց ահի զօրութե՛ քո. ա

Ներումն է մեծ վայելչութիւն փա
ռաց սրբութեան քո. եւ սաստումն կե
բարկութիւն սպառնալեաց քոց, 'ի վերայ
մեղաւորաց. անչափ եւ անքննին են
ողորմութիւնք աւետեաց քոց ա:
Դու տէր՝ բարձրեալ գթած, եր
կայնամիտ, բազումողորմ. եւ զղջա
նաս 'ի վերայ չարեաց մարդկան:
Դու տէր՝ ոչ եդեր ապաշխա
րութիւն վասն արդարոցն. աբրա
համու. սահակայ՝ եւ յակոբայ.
որք ոչ մեղան քեզ. ամէն:
Այլ եդեր պաշխարութիւն
վասն իմ մեղաւորիս. զի մեղայ
աւելի քան զաւազ ծովու. եւ
բազմացան անօրէնութիւնք իմ ա:
Չեմ արժանի հայիլ՝ եւ տեսա
նել զբարձրութիւնս երկնից.
 'ի բազ

'ի բազմութենէ անօրէնութեա՛ն
իմոյ . ամենակա՛լ տէր :
Կորացեա՛լ եմ ես, 'ի բռնութե
ճդթ, նէ կապանա՛ց երկաթեայց՝ և ո՛չ
գոյ ինձ հանգիստ . ամենա :
Ի՝ արկացուցի՛ զտրտմութ̃ին և զ
չար առաջի քո արարի . կանգնե
ցի զպատկեր՝ և բազմացուցի՛ զցա
սումն . ամենա :
Ա՛յ ա՛րդ՝ տէր խոնարհեցուցանե՛մ
կս զծունր սրտի իմոյ՝ և հայց եմ 'ի
քաղցրութենէդ քումմէ . ա
Ո՝ ողորմեա՛յ տէր՝ մեղայ, և զանօրէնու
թ̃իս իմ ես ինձէ՛ն գիտեմ . ամե :
Ա՝ ղաչե՛մ և խնդրեմ 'ի քէն՝ թո՛ղ
ինձ տէ՛ր՝ թո՛ղ ինձ . և մի՛ կորու
սաներ զիս , ըստ անօրէնութե՛
իմոյ . ամենակալ :

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ
տ̄ր՝ և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛
պարտաւորեր զիս ընդ իջեալսն
'ի ներքոյ երկրի չարեօք. ամենա
կալ տ̄ր թո՛ղ:

Զի դու ե՛ս ա̄ծ՝ ա̄ծ ապաշխարո
ղա՛ց ես. և յիս ցո՛յց զբարերարու
թիւնս քո որ անարժա՛ն եմ. ամէն:
Կեցուսցես զիս ըստ բազո՛ւմ ողոր
մութեան քում. և ես օրհնե
ցի՛ց զքեզ զամենայն աւուրս կե
նա՛ց իմոց. ամենա:

Զքե՛զ տ̄ր՝ օրհնեն ա̄մ զօրու
թի՛ւնք երկնից. և քո՛ են փառք
յաւիտեանս՝ ամէն:

Փառք Հօր և Որդւոյ և Հո:

Աղաչե՛մ և խնդրեմ 'ի քէն՝ տ̄՛ր,
թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումողորմ Տէր՝ ողորմեա՛ց
ինձ ։

Տէ՛ր քաւեա՛ զիս զմեղաւորս ։

Արարիչ իմ և յոյս Աստուծ՝ գթա՛
յիս, ՚ի մեղուցեա՛լ ծառայս․ և
ողորմեա՛ց ինձ բազմամեղիս ։

Ամենօրհնեա՛լ սրբուհի՛ և միշտ
կոյս Աստուածածին Մարիամ․ բարեխօ
սեա առ Տէր վասն իմ մեղաւորիս ։

Ամենայն սուրբք Այ՝ բարեխօ
սեցէք առ Հա՛յր ՚ի յերկինս․ վասն
մեր մեղաւորացս ։

Բա՛ն՝ որդի Այ անոխակալ․ ըն
կա՛լ զաղաչանս մեր․ զի ՚ի քէզ են
ապաւինեալ անձինք մեր ։

Յաղթօղ զօրութեամբ՝ սուրբ
և կենդանարար՝ և պատուական
խաչիւքո Տէր պահպանեա զմեզ ։

Աղաչեմ որ զհրեշտակն խա
ղաղութեան. որ եկեալ պա քո
հեսցէ զմեզ անխռովս. ՚ի տուէ
և ՚ի գիշերի ։

Տէ՛ մարդասիրութեամբ քո յի
շեա՛ զմեզ՝ որ յիշեա՛ զմեզ. յոր
ժամ գաս արքայութեամբ քո
Ողորմեաց մեզ ։

## Գովասանութիւն սաղմոսացն դաւթի ։

Բանք սաղմոսին է պատ
ուական ․ լցեալ հոգւովն
աստուածական ․ և որք յա
սելն յօժարանան ․ արքայու
թեանն արժանան ։

Սաղմոս ըն հաց է երկնային
սեղան կազմեալ մեծի դաւթին
որք ի հացէս յայս կերակրին․
աստուածային սիրովն յագին ։

Սաղմոսըն դանձ է անըսպառ․
այնմ որ ստանայ զսա մեղմաբար․

զլապտեր հոգւոյն պահէ խլւու·
և մրտանէ խփաուս անձմ ու:
Սաղմոսն աղբեւր ւր կենդան ջրմ ր·
մեղաց քաւէնչ և սրբբարմ ր:
և որ ասէ զսա մեղմաբմ ր·
նա սուրբ հոգւոյն լինի տաձմ ր:
Իսկ որք չասեն և քուն լինին ն·
և սաղմոսին ոչ փափագին ն:
յանմահական հացէն սովին ն·
յաւուր մեծին դատաստանին ն:
Եւ որք ասեն զսա կխատու ն·
վրնաս ատնեն խւրենց հոգւոյ ն:
Թէպէտ և կան զգիշերն ·րթու ն·
դատարկ մնան ի սբ վարձու ն:
Իսկ որք ասեն ծայրատելո վ·
անմրտաբոր շաղփաղփելո վ:
վայ է նոցա պահեալ յոլո վ·
զի յաստուծոյ են ամօթո վ:

Իսկ որ ծայրա՛տ զաղմոսն աս է·
Եւկիսատո՛ւն յաւարտ ածց է:
Նա յաստուծո՛յ զամօթ կրեսց է:
Եւ բարեա՛ցն անմասն ելց է:
Եղբայր ինձ մե՛տ դերդու հոգով
տեսի տաճա՛ր մի լի լուսո՛ վ:
շինած կազմա՛ծ ութն անկիւնո՛ վ·
Եւ աստիճա՛նքն իւր համարո՛ վ:
Վաթսուն ու չո՛րս ոսկի դրունո՛ վ·
հարիւր յիսո՛ւն պատուհանո՛ վ:
տունա կուսա՛նք ըն գան լալո՛ վ·
բողքն եւպոռնի կ.քնպ.րեն հոգով
Ո. ւղ որ կամի յօժար սըրտո՛ վ·
խըմէ ըզնա՛ ոսկի թասո՛ վ:
ուրախանա՛յ ինքըն հոգւո՛ վ:
յարքայութեա՛նըն պարելո՛ վ:
Ութըն մաղա՛խ ես ունէ ի·
Եւամէն մէ՛կն ութ քըսակ ի:

զօրն որ պխտէր զայն բանայ ին.
նա ինձ բուրէր հոտ կընդըրկ ին:
Ութ փարչ տեսի կութմը լըցած.
գունով էին քանց հուր վառած:
յորոց արբի ես անքոտա ծ.
ոչ լիացայ զերթ ծարաւա ծ:
Շնորհալի մին առխուսա կ.
ունի հազար լեառն բողխտա կ:
նոցա մաքիքն են սևորա կ.
խուբեւնց հովիւքն այպ զհրեշտա. կ:
Սօրն իւր արգանդ էր սևայի ն
հօր ըն բարակ ամենևի ն.
որդիք ըն սեաւ ծընանէի ն.
դաշտի սպիտակ բընակէի ն:
Պաշտմի արձակ և պատուակա ն.
լցեալ ծաղկօք յոյժ զանազա ն:
ոչ յեղանակս միայն գարնա ն.
այլ անթառամ ժամս ամենա յն:

Ա Թալկաց




Ս̅ երեք անձն միոյ ա̅ծութե̅։ 

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւ ատացելոց ՚ի ք͞ս : Որ արա րեալ է տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի :

Հաւատո՛վ խոստովանիմ՝ եւ երկի՛ր պագանեմ քեզ . հա՛յր եւ որդի , եւ սու՛րբ հոգի . անեղ եւ ան մա՛հ բնութիւն . արարիչ հրեշտակա՛ց եւ մարդկան եւ ա͞մ եղելոց : ողորմեա՛ց քո արա րածոց :

Հաւատո՛վ խոստովանիմ՝ եւ եր կի՛ր պագանեմ քեզ : անբաժա նելի՛ լոյս . միասնակա՛ն սուրբ երրորդութիւն՝ եւ մի՛ ա͞ծութիւն արարի՛չ լուսոյ՝ եւ հալածի՛չ խաւ արի :

733.

արի : հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ
Գ զխաւա՛ր մեղաց և անգիտութե՟ :
և լուսաւո՛րեա զմիտս իմ ՚ի ժա
մուս յայսմիկ · աղօթել քեզ ՚ի
հաճոյս՝ և ընդունել ՚ի քէն զխնդ
րուա՛ծս իմ · և ողորմեա՛ց ինձ
բազմամեղիս :

Հա՛յր երկնաւո՛ր՝ Ա՟ծ ճշմարիտ,
որ առաքեցեր զորդիդ քո սիրելի
՚ի խնդիր մոլորեա՛լ ոչխարին · մե
ղայ յերկինս և առաջի՛ քո · ընկա՛լ
զիս որպէս զանառա՛կ որդին՝ և զ
գեցո՛ ինձ զպատմուճա՛նն զառա
ջին զոր մերկացա՛յ մեղօք · և ողոր
մեա՛ց քո արարածոց և ինձ բազմամե

Որդի Ա՟յ Ա՟ծ ճշմարիտ՝ որ խոնար
հեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և ա
ռեր զմարմին ՚ի սրբո՛յ կուսէն մա

րկամայ, վասն մերոյ փրկութե՟ն։
խաչեցար և թաղեցար՝ և յարեար
'ի մեռելոց՝ և համբարձար առ
հայր։ մեղայ յերկինս և առաջի
քո։ յիշեա զիս որպէս զաւա
զակն. յորժամ գաս արքայու
թեամբ քո. Եողոր։ ժվ
Հոգի՛ Այ՝ Ած ճշմարիտ, որ իջեր
'ի յորդանան և 'ի վերնատունն.
և լուսաւորեցեր զիս մկրտութե՟
ս՟ր աւազանին. մեղայ յերկինս և
առաջի՛ քո։ մաքրեա զիս վերստին
Աստուածային հրով քո՝ որպ հրեղէն լե
զուօք զառաքեալսն. Եողորմեա։
Ա՞նեղբնութիւն, մեղայ քեզ՝
մտօք իմովք՝ հոգւով և մարմնով մ
իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառա
ջինս. վս՟ անուա՛նդ քում ս՟րբոյ. և։

Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ
խորհրդով բանիւ եւ գործով.
ջնջեա զձեռագիր յանցանաց ի
մոց՝ եւ գրեա զանուն իմ ի դպրու
թեան կենաց՝ եւ ող:

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ՝
կամաւ եւ ակամայ՝ գիտութեամբ
եւ անգիտութեամբ. թողութիւն շնոր
‡զի հեա մեղաւորիս. զոր ի ծնընդե
նէ աւազանին մինչեւ ցայսօր՝ մե
ղուցեալ եմ առաջի աստուածութեանդ
քո. զգայարանօք իմօք. եւ ամենայն անդա
մօք մարմնոյս՝ եւ ող:

Ամենախնամ տէր՝ դիր պահա
պան աչաց իմոց զերկիւղ քո
սուրբ՝ ոչ եւս հայիլ յարատ. եւ ա
*ով կանջաց իմոց, ոչ ախորժել լսել
զբանս չարութեան. եւ բերանոյ

իմոյ ոչ խօսել զստութիւն ․ և
սրտի իմոյ ոչ խորհել զչարութ՟ի ․
և ձեռաց իմոց ոչ գործել զանի
րաւութ՟ի ․ և ոտից իմոց ոչ գնալ
՚ի ճանապարհս անօրէնութեան ։
այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լի
նել ըստ պատուիրանաց քոց ա֊
մենայնի ․ և ողորմեա՛ ։

Տէր կենդանի ք՟ս ․ զհուր սուրբ քո , զոր արկեր յերկիր՝ բոր բոքեա՛ յանձն իմ ․ զի այրեսցէ զա՛ղտ հոգւոյ իմոյ ․ և սրբեսցէ զխիղճ մտա՛ց իմոց՝ և մաքրեսցէ զմեղս մարմնո՛յ իմոյ ․ և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում ․ և ողոր ։

Իմաստութիւն հօ՛ր յ՟ս՝ տո՛ւր ինձ զիմաստութիւն ․ զբարի՛ն

խորհել և խօսել՝ և գործել առա
ջի քո յա՛մ ժամ։ և՛ի չար խոր
հրդո՛ց՝ և՛ի բանի՛ց, և՛ի գործոց
փրկեա՛ զիս. և ո՛ղ։

Կամեցօ՛ղ բարեաց՝ տ՛ր կամարար
մի՛ թողուր զիս ՚ի կա՛մս անձին ի
մոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ
լինել միշտ ըստ կամաց քոց բա
րեսիրաց՝ և ող։

Թագաւո՛ր Երկնաւո՛ր՝ տո՛ւր ինձ
զարքայութի՛ն քո՝ զոր խոստացար
սիրելեա՛ց քոց։ և զօրացո՛ զսիրտ
իմ, ատե՛լ զմեղս՝ և սիրել զքե՛զ
միայն՝ և առնել զկա՛մս քո և ող։

Խնամո՛ղ արարածոց՝ պահեա՛
նշանաւ՛ խաչի քո, զհոգի և զմար
մի՛ն իմ. ՚ի պատրանա՛ց մեղաց՝ և
՚ի փորձութեա՛նց դիւա՛ց՝ և ՚ի մար

գո՛ց անկրաճաց՝ եւ յա՛մ վտանգից՝
հոգւո՛յ եւ մարմնոյ. եւ ողորմեաց:

Պահապա՛ն ա՛մի քս՛ աջ քո հովա
նի՛ լիցի ՚ի վերա իմ, ՚ի տուէ եւ ՚ի գի
շերի. ՚ի նստիլ ՚ի տան՝ եւ ՚ի գնալ ՚ի
ճանապարհ: ՚ի ննջե՛լ եւ ՚ի յառնել.
զի մի՛ երբեք սասանեցայց՝ եւ ող:

Ած՛ իմ, որ բանաս զձե՛ռն քո
եւ լնուս զա՛մ արարածս ողորմու
թե՛ քով. քե՛զ յանձն առնեմ
զանձն իմ. դո՛ւ հոգա, եւ պա
տրաստեա զպէտս հոգւոյ եւ մար
մնո՛յ իմոյ՝ յա՛յսմհետէ մինչեւ
յաւիտեան. եւ ող:

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛
զիս ՚ի չար սովորութեանց իմոց,
՚ի բարի՛ սովորութիւն: եւ բեւե
ռեա՛ յոգի իմ, զսոսկալի՛ օր մա ՚ի

ղեղ

հոգւոյն՝ զերկիւղ գեհենին՝ և զսէր արքայութեան. զի զղջացեալ ՚ի մեղաց՝ գործեցից զբարութիւն. և ողորմ:

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո՛ ՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան, որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջքան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմ:

Պարգևիչ ողորմութեան՝ պարգևեա ինձ ուղղափառ հաւատով. և բարի գործով՝ և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ, գալ առ քեզ. և ողորմեաց:

Տարերարար՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս. քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. և ան

խռով անցուցանել ընդ չարու
թեան այսոցն. որք են 'ի ներքոյ
երկնից. Ողորմեա:

Յոյս ճշմարիտ քո՝ արժանաւո
րեա զհոգի իմ, ուրախութեամբ
տեսանել զլոյս փառաց քոց 'ի
կոչման աւուրն. և հանգչիլ յու
սով բարեաց՝ յօթևանս արդա
րոց՝ մինչ յօր մեծի գալստեան
քո. Ողորմեա:

Դատաւոր արդար՝ յորժամ
գաս փառօք հօր, դատել զկեն 'ի
դանիս և զմեռեալս՝ մի մտաներ
'ի դատաստան ընդ ծառայիս քո
այլ փրկեա զիս 'ի յաւիտենական
հրոյն՝ և լսել տուր ինձ զերա
նաւէտ կոչումն արդարոց՝ յերկ
նից արքայութեան. Ողորմեա:

Ամենողո՛րմ տ՟ր՝ ողորմեաց ա՟մ
հաւատացելո՛ց 'ի քեզ · իմո՛ց
և օտարաց՝ ծանօթի՛ց և անծանօ
թից · կենդանեա՛ց և մեռելոց ։
շնորհեա՛ և թշնամեա՛ց իմոց՝ և ա
տելեաց զթողութիւն , որ առ իս
յանցանաց · և դարձո՛ զնոսա 'ի
չարեացն , զոր ունին վասն իմ ·
զի ողորմութեանդ քում արժանի՛
եղիցին · և ողոր ։

Փառաւորեա՛լ տ՟ր՝ ընկալ զաղա
չանս ծառայի՛ս քո՝ և կատարեա
'ի բարի զխնդրուա՛ծս իմ · բա
րեխօսութեամբ սրբուհւոյ ա՟ծ
ածնին՝ և յովհա՛ննու մկրտչին՝
և սրբոյն ստեփա՛ննոսի նախա
վկային՝ և սրբոյն գրիգորի մերոյ
լուսաւորչին ։ և սրբոց առաքե

լոցն՝ եւ մարգարէիցն՝ եւ վարդա
պետացն՝ եւ մարտիրոսացն՝ եւ սր
բոց հայրապետացն՝ եւ ճգնաւո
րացն՝ եւ կուսանացն՝ եւ ամ͞ սրբոց
քոց ։ երկնաւորաց եւ երկրաւո
րաց՝ եւ քեզ փառք եւ երկրպագու
թիւն՝ անբաժանելի սուրբ եր
րորդութեանդ ։ յաւիտեանս
յաւիտենից ամէն ։

Ըստ նաւաստոյն անցեալ զան
հուն ալեօք ծովուն ։ Նաւա
հանգիստ ըզնաւս արկել ուրախ
լինեմք ։ Եւ կամ երկանց յղւոյ կա
նանց սաստիկ ցաւուն ։ Ծնեալ
զմանկունս ոչ եւս յիշեմք զկրսկիծ
նախկին ։

Փառք անհասանելի մար-
դասիրութեանդ քո Տ՟ր
իմ Յ՟ս Ք՟ս · որ ետուր
զզօրութիւն ամենասխալ
և բազմամեղ անձին իմոյ ·
սպասաւորել հոգեխաշունչ կտա-
կարանի քո · և հասանել յաւարտ
սորին ։ Վասն որոյ երկրպագեմ
քեզ ընդ Հօր և ընդ Սուրբ
Հոգւոյդ · այժմ և անզրաւ յաւ-
իտենին · ամէն ։

Արդ՝ կատարեցաւ շնորհօք ա-
մենազօրին քնարական մատեանս
մարգարէութ՟ենդաւթի · Յամի
որ՛ ի ծնընդենէն Ք՟սի · ռ · և ո ·
և կ և է ։ յամսեանն հռօմայե

ցուց յուլիսի · Ժ և հընգեն ։ Ի յէ
՚ի թուաբերութեան հայկական
սերիս՝ ռ̃ և ճ̃, և մետասանեին՝ յամ
սոյն ահկեւոյ. Ժ̃ ա̃ ։ յիշխանութե
նհանդիս յօլանդայ · վիլհելմուս
բրինցփին · ՚ի ծովապատ քաղա
քիս որ կոչի ամսդէրտամ ։ Ի, եր
տպարանում սբ̃ Էջմիածնի · և ա
ռադահաս վկային եւրոյ սրբոյն
սարգսի զօրավարին ։ Յեօթնե
րորդում ամի դիտապետութե
երեցս երանելոյ հովուապետին
լուսաւորչական հօտիս · Տեառն
Յակոբայ երորդի
սրբասնեալ Կաթուղիկոսին ջու
ղայեցւոյ ։ լուսակառոյց և գըմ
բեթայար՝ երկնաքատակ էն
Արխտոսաբնակ դահոյին ·

որ վերաձայնի Սբ էջմիածին ։
Ր.այլ աղօթիւք ներադումա
րեալ եղբարց կուսակրօնից եւար
քիական եւրաբունապետական
խմբից, աճապարեցինք զսա առ 'ի
վայելուչն մանկանց սիօնի զիմա
նալի բուրաստանս ։ 'Ի փառս
Քսի. եւ 'ի գովեստս ամենա

սուրբ անուան նորա ամէն ։

Արդ՝ աղաչեմ զձեզ սիրողս
Աստուծոյ յիշել 'ի Քս, զբազ
մաջան երկամբք. եւ քրտնածոր
աշխատու թեամբ հոգաբար-
ձուն եւ զմտաւորական տպարա
նիս. զՏէր Ոսկանի Րաբու-
նեացպետի զեղբայրն, զԹէո
դորոսի որդի զերեւանեցի ղլի
ջենց աճեմեան ։ Որ եղե

746 պատ

պատճառ յորդորելով զմա
թէոս սարկաւագն . ընծայել
զայս աղնուակերտ և ըղձալի տը֊
պագրարանս Սուրբ էջմիածնի
և Սուրբ սարգսի ։ Քանզի մա
թէոսն ՚ի հիւանդութե՟ իւրում,
կոչեալ զվերոգրեալ աւետիսն
և խնդրէր ՚ինմանէ . ՟Ջ և ՃԵ .
մու՟ջլ փոխ . զի տայցէ պարտա
պանացն իւրոց . որք յոյժ վշտա
ցուցեալ էին զնա ։ և տպեմք
ասէ ՟Ե՟Ռ . սաղմոսարանս . և ՟Ռ և ՟Մ
Յ՟ն որդխս . և վաճառեն և զշահն
նորա արասցուք ՟Բ բաժինս .
ինձ և քեզ ։ Իսկ թէ մեռայց
դու ՚ի գործ արկեալ զտպարանն
մինչև վճարեսցես զպարտսն իմ . և
զքոյն ևս առցես հանդերձ շա
 հիւքն .

հիւքն. և տէր եղիցի ընդ քեզ:
Տէ՛ զայս ո՛չ էառ յանձն ամե-
տեան ասելով. եթէ տացես զտապա-
րանդ յիշատակ սբ էջմիածնին
և սբ սարգսին. լինիմ քեզ ընկեր.
և տամ զփողս. և ես աշխատիմ
անձամբս 'ի տպարանիս որքան
և կենդանի կացեմ. և զարդիւնս
դրամին իմոյ բաշխեմ վերոգը
րեալ սրբոցն. և յետ մահուան
իմոյ զբովանդակն: Որոյ հաւա-
նեալ մաթէոսն. և յօժար սրտիւ
արար կտակ՝ զի յետ մահուան
իւրոյ՝ և վճարման պարտուց եր
կոցունցն՝ տացի տպադրատունն
վերոգրեալ մենաստանիցն: և ինքն
չև ևս աւարտեալ զյս որդւին
հանդերձ 'ի քս: Որոյ զթե

րին լցեալ ամէնուին . Եւսկսեալ
բաղձանօք եւփափագմամբ տալել
մ՟ եւ է՟ գեղապաճոյճ եւ գովելի
սաղմոսարան, առ՚ի ընթերցումն
Ած՟ասիրաց . արանց եւ կանանց:
Ամ՟ որոյ յիշեսջիք զծնօղ սորին
զԹէոդորոսն . Եւ զմայրն զգօհար
ազիզն . Եւ զպապն զ ղլխճենց զա
քարխայն . Եւ զմամմն զմէլիք խա
Թունն . Եւ զփոքր եղբայրն զմիրզա
խանն . Եւ զքոյրն ռուսխնէն . Եւ
զհանգուցեալ եղբայրն զյով
հաննէսն : այլեւ զկենակից սորին
զմարխամ տատն . Եւ զա՟մ ազգա
տոհմն եւ զերախտաւորս սորին .
Եւասացէք լիով սրտիւ . տ՟ր Ա՟ծ
ողորմեաց նոցա . Եւ ջնջնեա զգիր
յանցանաց նց՟ . Եւ արժանի արա

արքայութեան քում ։ Դուսկ
յետոյ հայցեցէք և վ̃ իմ վեր
ջացելոյս ևանարժանիս ․ որ
դւոյս տէր յովհաննէսի․ կարապե
տի կրօնաւորի անդրիանացւոյ․
և կարծեցեալ գոլ բանի սպա
սաւորի ։ և յիմար և անպիտան
աշակերտի․ վերոգրեալ տեառն
ոսկւոյ ամէնիմաստ հռետորապե
տի ․ և փիլիսոփայի ․ և դաղմատա
կանացն Թարգմանչի ։ Ն՛ նե
րեսջիք սխալանաց իմոց ․ զի ան
ծանօթ էի տպական արուեստիս
ևևս բարբառոյ ազգացն հօլան
դիզաց ո̃պ ևնոքա մերոյս գրի ևլե
զուի ։ Վան այսորիկ յոյժ տա
ժանմամբ և մեծաւ աշխատու
թե̃ ․ հազիւ կարացի այսքան յայտ
750 ածել ։

ածել ։ Եւ զլումայս ըստ այրւոյն որկեւ 'ի գանձանակս տ՟ն ․ Եւ ա՟մ կերպիւ ջանացի ըստ կ․ րողութե՟ իմոյ հետեւիլ ճշմարտութե՟ ։ միջնորդութե՟ եւ օժանդակութե՟ վերոգրեալ աճէտսին ։ քանզի օգնէր միշտ ինձ ․ խօսելով ընդ նսա ․ Եւ 'ի խորբադրել փորձոյն ․ Եւ 'ի բաղդատել պատկերացն ։ զի զօմանս ըստ վերնագրացն ․ Եւ զոմանս միոյ տան ․ կամ շարադրութե՟ ․ Եւ զայլսն ըստ ֆռանկաց օրինակացն եդինք ։ Այլ եւ յերկուց հանդիպացեալ օրինակաց սրբագրեցաւ ․ մինն յառաջնոյ ասացելոյն ․ Եւ միւսն 'ի կեսարացւոյ տէր խաչատրոյ րաբանապետի տպեալ յատենւոյն ։ սակ որոյ․

751 զբաւս

զբառս ումանս եղեւնք առընթեր
՚ի լուսանցսն , ստորասական և
բացասական նշանօք ։ Այնպէս
և զտառս հեբրայեցւոցն · հան-
դերձ անուամբն իւրեանց, ՚ի լու-
սանցս անբծացն ։ Եւ որ ՚ի նոյնց
հաճոյ թուեսցի ձեզ · ընկալջիք ։
Իսկ եթէ յայտնեսցի ուրեք
թիւրութիւն կամ սխալութիւն ·
՚ի տգիտութենէ պատահեալ ·
ուղղեսջիք ներելով · իբրև բնու-
թենակիցք · և փորձիւ գիտողք
զտկարութիւնս մեր · որք ունիք
կարողութիւն կատարելապէս ·
և մի բարկանայք, զի և մեք մարդ-
գոլով գթեցայք · և զի անփոփոխն
գոլ միայն Ա՛յ է գործ ։ Իսկ
որք չիցեն ներակրթեալ յարու՛-

եստս շարադրութեան եւ չճա
նաչելեցեն զսեռս եւ զհոլովս մա
սանցն բանի. նոցա չէ պարտ ձեռ
նամուխ լինել այսօրեկ. գրելով.
կամ եղծելով, այլ կարդալ զօ
րինչ՛ ի կարգին գրեալէ ։ Պ. ձլ
յիշեսջիք՛ իտր. զամասիացի խու
տապաշխի որդի մինասն. մարբն
իւրով մարիամաւ. որեա մեզ.
Ջ մուճիլ փոխ. որովզ. ռ. եւ մ.
Յո որդիսն կազմեալ յղեցինք
նաւով յեզմիւռնիայ ։ Այլ
յիշեսջիք զհանձարեղ արուես
տաւորն. զփունատիք քրիստո
փլուն, որէ ազգաւ ալամանս.
որեւ բազմահնար ջանիւ կերպա
ցոյց զպողովատեալ եզպղընձի
տիպ տառիցս. որով ձուլեալ

կերպանայ կատարեալ գիրն ։
Եւ զշարօղ գրոյս , Սան
Սանէան Մելքոնին , պատա
նեն . որ Թարգմանի Յօհաննէս .
Յօհաննիսի . որոյ բազում աշխա
տութ՟ ուսուցի զգիրս հայոց . ՚ի
պէտս գործոյս ։ Իսկ զկնի սորին
եթէ ո՟ր կամիցի եւօգնեսցէ մեզ
աղօթիւք եղբարցդ . ապագոր
ծեմք փոքրիկ ժամագիրք . վասն
հասարակաց անձանց . մինչև
՚ի հասանել առմեզ ա՟ծաշնչին և
հրամանաց վե հայպետին հաճու ։
և յայնժամ արասցուք զպատուէ՟ի
րեալն ՚ինմանէ . առանց ձանձրա
նալոյ ։

## Մաղթանք զօրաւորք · արհաւիրաց գիշերային , 'ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ ասացեալ:

Ընկա՛լ քաղցրութեամբ տ՛ր ա՛ծ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս : Մատո՛ր գթութեամբ՝ առ պատկառեա՛լս դիմօք: փարատեա՛ ամենապարգև, զամօթակա՛ն տխրութիւնս: բա՛րձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս : անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս : աւարեա՛ միշտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիւս : բացադրեա՛ վերնային՝ զմոլելոյն մառախուղն : կնքեա՛ կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս ; ցրուեա՛

ծածկատես՝ զմեղանողին չար
՚Ն գործութեանս : խորտակեա անդքնին՝
զմարտողին դիմնցմունս : տնա
գրեա քո անուշամբդ՝ զլուսան_
ցոյց երդ յարկիս : պարփակեա
քո ձեռամբդ՝ զառաստաղ տա
ճարիս: գծագրեա քո արեամբդ՝
զմուտ սեմոց սենեկիս: կերպացո
զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթո
ղիս : ամրացո քո աջովդ՝ զհանգս
տեանս խըշտիս , մաքրեսցես
՚ի հաղբից՝ զծածկարան անկող
նոյս : պահեսցես քո կամօքդ՝
զտառապեալ անձն ոգւոյս : ան
խարդախ արասցես զքո շնոր
հեալ շունչ մարմնոյս : կացու
ցես շրջափակ՝ զպար զօրոյդ երկ
նայնոյ : կարդեսցես ՚ի դիմի՝

ընդդէմ դիւա՛ցն դասու ։ Տո՛ւր
հանգիստ բերկրութեան · մա
սհանգո՛յնս ներհման, 'ի խորու
թեան գիշերիս · բարեխօսու
թեա՛մբ հայցուածոց՝ սրբոյ ա՟ծ
ածնին · և ա՟մ ընտրելոց · անփո
փեա՛լ պարուրեա · զպատուհան
տեսութեանցս ։ զզայարանացս
իմաստից ։ անզարհուրելի՛ զե
տեղմամբ ։ 'ի ծփական խռովու
թեանց ։ կենցաղակա՛ն զբաղ
մանց ։ անրջակա՛ն երազոց ։ խօ
լականա՛ց ցնորից ։ յիշատակա՟
քո յուսոյդ, անձկասելի՛ պաշտ
պանեալ ։ և սթափիլ վերստին.
'ի նընջմանէ ծանրութեանց ։ ամե
նազգաստ արթնութեամբ · հո
գենորոգ զուարթութեամբ, 'ի

քեզ արժանացեալ։ Ո ա՛յս ձայն
մաղթանաց, բուրմամբ հաճա
տոց։ քեզ ամենօրհնեալ Թա
գաւոր փառաց. անճառելեաց փա
ռաբանողաց. երկնագումար
խմբից երգակցեալ. յերկին
առաքել։ զի դու փառաւորեալ
ես յա̄մ արարածոց. յաւիտեանս
յաւիտենից ամէն։

Մ երսոին յաւելուած. կրկին
հեծուն. նորին հսկողի. առնոյն
ողերս. մաղթանաց բանի. ՚ի խորոց
սրտից. խօսք ընդ ա̄յ։ բան ի ա̄։

Որդի ա̄յ կենդանւոյ. օրհ
նեալ ընդ յամենայնի. հօրդ
ահաւորի. անքնին
ԿՆ 758 ծնունդ,

ծնունդ, որ տկարանայ առ 'ի
քէն և՛ոչ ինչ. որ 'ի ծագել անըռ
տուճեր նշուլից յողորմութեանդ
քո փառաց. հալէ՛ն մեղք. հա
լածէ՛ն դևք. ջընջէ՛ն յանցանք.
խզէ՛ն կապանք. խորտակէ՛ն շըղ
թայք. կենդանածնէ՛ն մահա
ցեալք. բըժշկէ՛ն հարուածք.
ողջանա՛ն վէրք. բառնէ՛ն ապակա
նութիք. տեղի՛ տան տըխրութիք.
նահանջէ՛ն հեծութիւնք. փախ
նու՛ խաւարըն. մեկնի՛ մէգն. մեր
ժի՛ մառախուղն. փարատի մռայլն.
սպառի՛ աղջամուղջն. վերանա՛յ
մութն. գնայ գիշերն. տարա
գնի՛ տագնապն. չքանա՛ն չարիքն
հալածէ՛ն յուսահատութիւնքն.
և թագաւորէ՛ ձեռն քո. ամենա

կար քաւիչդ ամենայնի. որ ո՛չ
եկիր կորուսանել զմարդկան ո-
գիս, այլ կեցուցանել: Թո՛ղ
ինձ զանթիւ չարիսն իմ. բազում
ողորմութեամբ քո: զի դու մի-
այն ես յերկնի անճա՛ռ. և յերկրի
անզննին. ՚իտարր գոյից. և յեզր
ծագաց աշխարհի: սկի՛զբն ամե-
նայնի և յամենայնի. ամ լըմամբ
օրհնեա՛լ ՚ի բարձունս: և քեզ
ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փա՛ռք
յաւիտեանս ամէն:

Ի տպարան Սուրբ Էջմիածնին
և սուրբ Սարգսին. որ է Յամս
դէրտամ:

ԽԸ 760 Սրկին

Կրկին անգամ խնդրեմ ի սիրելեացդ իմոց, յիշել առ քն̅ · զ Ջուղայեցի խօջայ շահրիմանն · և զկողակիցն իւր շահզատէն · և զորդին իւր խօջայ սահրատն և զկողակիցն իւր սալվարն · և զորդիսն իւր զզաքարիայն · և զմարգարէն և զայլն արեան մերձաւորսն սորին · նայ և զընկերն, իւր միոզենց յովհաննն · և զհայրն իւր մնացականն և զ մայրն իւր անայխն · զեղբայրն իւր մկրտումն հանդերձ ազգականօքն իւրով ·

Ե Թ 761 ին

զի յոյժ օգնական եղև մեզ. ինե
ղութեան մերում. քանզի տարա
կուսեալ պաշարեաք վ՟ն դրամի և
բազումք ունէին կարօղութե՟, բայց
ոչ կարէին օգնել, թէ զդիւրան
աճարտէաք: իսկ սա ձեռնտու
եղև նետ մեզ. ք՟ս և է՟ծ մատչիլ
որով. աճարտեցինք. զք՟ս և զ
է՟ծ. սաղմոսարանին: վասն որոյ
յերեսանկեալ աղաչեմ զձեզ
զի լիով սրտիւ ա՟ծ ողորմեաց ասի
ցէք վերոգրեալ ա՟ծասիրաց ա–
րանցն կենդանեացն և ննջեցե
լոցն. և միով հայր մեղայիւ յանձն
արասջիք ա՟ծ. ասելով. Հայր
մեր որ յերկինս:

Պարձեալ աղաչեմ զձեզ յիշա
տակել 'ի քս̃, զիգումենց մեր
Թարն. և զհայրն իւր զիսահակն
և զմայրն զգուլխարին, և զնորա
բողբոջ որդին զմուրատխանն :
քանզի այս ա̃ծասէր այրս մեր
Թար. եղև միջնորդ և յորդորիչ
և պատճառ. յոհաննին որ օգտա
կար և ձեռնտու եղև մեզ. տա
ով զմերոդրեալ դրամսն. վասն
րոյ և սմա արժանիէ աւել ա̃ր
ա̃ծ ողորմեա նմայ և ամենայն
նջեցելոց նորա. և քս̃ ա̃ծ ձեզ
յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողոր
մեսցի 'ի միւսանգամ գալստեանն
իւրում. ամէն :

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո։ եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ զհաց մեր զհանապազորդն տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա 'ի չարէն։ զի քոյ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Ա. Ւ. Ր. Տ.